Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց

2011/2012թթ. Հայաստանում հմտությունների, միգրացիայի և զարգացման միջև եղած կապերի հետազոտության արդյունքները

Եվրոպական կրթական հիմնադրամ և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան

Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012թ. հունիս

Բովանդակություն

Աղյուսակների և գծապատկերների ցանկ 4

Հապավումների ցանկ 8

Երախտիքի խոսք 9

Համառոտ բովանդակություն 10

Պոտենցիալ միգրանտների հետազոտության արդյունքները 11

Վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքները 12

Քաղաքականության առաջարկություններ 13

Գլուխ 1. Ներածություն. միգրացիոն հոսքերի և դրանց բնույթի մասին երկրորդային հետազոտություն աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև եղած կապերի ուսումնասիրության միջոցով 15

1.1. Ընդհանուր տեղեկություններ միգրացիոն ծավալների և միգրացիոն հոսքերի մասին 15

Հայաստանի արտաքին միգրացիոն իրավիճակը նահանջումային շրջանում 15

Հայաստանի արտաքին միգրացիոն իրավիճակն անկախության շրջանում 17

Ապակայունացման փուլ (1988-1991) 18

Զանգվածային արտահոսքի փուլ (1992-1994) 19

Անցում կայունությանը (1995-2001) 21

Շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլ (2002-2007) 23

Դրամական փոխանցումներ 26

1.2. Աշխատաշուկան և կրթական զարգացումները 30

1.3. Օրենսդրական դաշտը և միգրացիոն քաղաքականությունը 34

1.4. Միջազգային գործակցություն և դոնորների գործունեությունը 40

Գլուխ 2. Հետազոտության մեթոդաբանությունը 42

2.1. Հետազոտության նպատակները 42

2.2. Հետազոտության ոլորտները և հետազոտության հիմնական առանձնահատկությունները 42

2.3. Հետազոտության ռազմավարությունը 43

2.4. Իրականացված աշխատանքների նկարագրությունը 43

2.5. Դաշտային աշխատանքների ժամանակ ի հայտ եկած դժվարություններ 48

Գլուխ 3. Պոտենցիալ միգրանտների վերաբերյալ հետազոտության տվյալների արդյունքները 50

3.1. Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր, կրթություն և հմտություններ 50
3.1.1. Պոտենցիալ միգրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը 50
3.1.2. Պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը 53
3.2. Աշխատանքային կարգավիճակ 56
3.2.1. Պոտենցիալ միգրանտների աշխատանքային կարգավիճակը 56
3.2.2. Պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների աշխատանքային կարգավիճակը59
3.3. Արտերկիր մեկնելու մտադրություններ. միգրացիայի հակվածություն և դրդապատճառներ 61
3.4. Պոտենցիալ միգրանտների միգրացիայից ունեցած սպասելիքներն ու օգուտները63
3.5. Տնտեսական կենսապայմաններ 69
Գլուխ 4: Վերադարձած միգրանտների հետազոտության տվյալների արդյունքները 73
4.1. Վերադարձող միգրանտների կրթությունը, գիտելիքները (հմտությունները) և սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը 73
4.2. Արտագաղթի պատմությունը և փորձը 77
4.3. Վերադառնալուց հետո 85
4.4. Ապագա մտադրությունները 89
4.5. Վերադարձած միգրանտների տնտեսական կենսապայմանները 90
Գլուխ 5. Հետազոտության արդյունքների գնահատում և քաղաքականության շուրջ առաջարկությունների մշակում 94
Պոտենցիալ միգրանտներ 94
Վերադարձած միգրանտներ 96
Առաջարկներ քաղաքականություն մշակողներին 97
Գրականության ցանկ 101
Հավելված 1: Աղյուսակներ 106
Հավելված 2. Գծապատկեր 111

Աղյուսակների և գծապատկերների ցանկ

Աղյուսակ 1 Հայաստանի բնակչության 1988-2007թթ. միգրացիայի ծավալների փորձագիտական գնահատումը, հազար մարդ 18
Աղյուսակ 2. ՀՀ արտաքին և ներքին միգրացիան 2002-2007 թթ. հետազոտությունների հիման վրա 24
Աղյուսակ 3. Արտագաղթածների մասնաբաժինը 26
Աղյուսակ 4. Դրամական փոխանցումներ 27
Աղյուսակ 5. ՀՀ Կենտրոնական բանկ, ՀՀ կոմերցիոն բանկերից օգտվող անհատների միջև ոչ կոմերցիոն դրամական փոխանցումները 28
Աղյուսակ 6. Աշխատանքային ռեսուրսները, աշխատուժը, զբաղվածները և գործազուրկները (ըստ սեռի) 31
Աղյուսակ7. Գործազրկության մակարդակն ըստ կրթության (տնտեսապես ակտիվ բնակչության համեմատ, %) 31
Աղյուսակ 8. Բնակչության բաշխում (ըստ կրթամակարդակների, %) 32
Աղյուսակ 9. Պոտենցիալ միգրանտների հետազոտություն. նախատեսված և կայացած ընտրանքի բաշխում (ըստ մարզերի և բնակավայրի տեսակի) 45
Աղյուսակ 10. 18-50 տարեկան բնակչություն (ըստ սեռի, %) 46
Աղյուսակ 11. 18-50 տարեկան բնակչություն (ըստ տարիքային խմբերի, %) 46
Աղյուսակ 12.18-50 տարեկան բնակչություն (ըստ կրթության, %) 46
Աղյուսակ 13. 18-50 տարեկան բնակչություն (ըստ քաղաք/գյուղ բաշխվածության , %) 46
Աղյուսակ14. Աշխատանքի մակարդակ - ISCO 88 դասակարգում 49
Աղյուսակ 15. Սեռային բաշխումն ընդհանուր ընտրանքում (%) 50
Աղյուսակ 16. Տարիքային խմբերի բաշխումն ամբողջ ընտրանքում (%) 50
Աղյուսակ 17. Բնակավայրերի բաշխումն ամբողջ ընտրանքում (%) 51
Աղյուսակ 18. Ամուսնական կարգավիճակ (ըստ սեռի, %) 51
Աղյուսակ 19. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ կրթամակարդակի և սեռի, %) 53
Աղյուսակ 20. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ տարիքի և սեռի, %) 54
Աղյուսակ 21. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ բնակավայրի տեսակի և սեռի, %) 54
Աղյուսակ 22. Ամուսնական կարգավիճակ (ըստ արտագաղթելու մտադրության, %) 55
Աղյուսակ 23. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ տարիքի,%) 56
Աղյուսակ 24. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ բնակավայրի տեսակի, %) 56
Աղյուսակ 25. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ սեռի և կրթամակարդակի, %) 57
Աղյուսակ 26. Ի՞նչն է պատճառը, որ չեք աշխատում (ըստ սեռի, %) 57
Աղյուսակ 27. Որակավորման մակարդակ (ըստ կրթության և սեռի, %) 58
Աղյուսակ 28. Այս/նախկին աշխատանքը համապատասխանո՞ւմ է (էր) Ձեր կրթական մակարդակին (ըստ կթամակարդակի և սեռի, %) 58

Աղյուսակ 29. Աշխատանքի բնույթ (ըստ մեկնելու մտադրության, %).....59
Աղյուսակ 30. Որակավորման մակարդակ (ըստ մեկնելու մտադրության, %).....60
Աղյուսակ 31. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ աշխատավայրի տեսակի, %).....60
Աղյուսակ 32. Հայաստանից մեկնելու հիմնական պատճառները (%).....61
Աղյուսակ 33. Առավել հավանական երկիրը (%).....64
Աղյուսակ 34. Առավել հավանական երկիր մեկնելու հիմնական դրդապատճառները (%)..64
Աղյուսակ 35. Ձեր կարծիքով, որքա՞ն ժամանակ կմնաք առավել հավանական երկրում (%) 65
Աղյուսակ 36. Ձեր կարծիքով, որքա՞ն ժամանակ կմնաք առավել հավանական երկրում (ըստ կրթամակարդակի և սեռի, %).....66
Աղյուսակ 37. Արտերկրում աշխատանք գտնելու հիմնական ռազմավարություն (%).....67
Աղյուսակ 38. Առավել հավանական երկրի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներ (%).....68
Աղյուսակ 39 Վերադարձած միգրանտներ (ըստ տարիքի և սեռի).....73
Աղյուսակ 40. Կրթության հիմնական ոլորտը նախքան առաջին միգրացիան.....75
Աղյուսակ 41. Վերադարձած միգրանտների սեռը (ըստ արտերկրում բնակվելու տևողության).....77
Աղյուսակ 42. Միգրացիոն փորձերի քանակը.....77
Աղյուսակ 43. Միգրացիայի ամենակարևոր պատճառը.....78
Աղյուսակ 44. Արտերկիր մեկնելու և աշխատելու հարցում ինչպիսի՞ աջակցությունն է առավել կարևոր.....79
Աղյուսակ 45. Արտերկրում աշխատանք գտնելու ամենագլխավոր միջոցը.....79
Աղյուսակ 46. Աշխատանքային կարգավիճակը տեղակայման հիմնական երկրում.....81
Աղյուսակ 47. Աշխատանքային պայմանագրի առկայություն (%).....82
Աղյուսակ 48. Ի՞նչ նպատակով եք օգտագործել Ձեր խնայողությունները.....83
Աղյուսակ 49. Ո՞րն էր վերադարձի ամենակարևոր պատճառը.....85
Աղյուսակ 50. Ի՞նչ նպատակով են օգտագործվել խնայողությունները.....85
Աղյուսակ 51. Ինպե՞ս եք աշխատանք գտել վերադարձից հետո.....86
Աղյուսակ 52. Կարիերայի հեռանկարները Հայաստանում.....88
Աղյուսակ 53. Վերջին 12 ամիսների ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք դրամ ստացել արտերկրում գտնվող որևէ անձից.....91

Գծապատկեր 1. Կրթություն (ըստ հարցվողների սեռի, %).....51
Գծապատկեր 2. Կրթությունը շարունակելու և դասընթացներին մասնակցելու մտադրությունը (%).....52
Գծապատկեր 3. Հայաստանում հնարավորինս բարձր կրթություն ստանալը նպաստո՞ւմ է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն (%).....53
Գծապատկեր 4. Կրթությունն օգնում է մարդկանց բարձրացնելու իրենց կենսամակարդակը (ըստ մեկնելու մտադրության, %).....55

Գծապատկեր 5. Ներկայումս աշխատողների ամսական աշխատավարձը, եվրոյով (ըստ սեռի, %) 59
Գծապատկեր 6. Փնտրո՞ւմ եք վճարովի աշխատանք (%) 61
Գծապատկեր 7. Մեկնելու մտադրություն (ըստ տարիքի և սեռի, %) 62
Գծապատկեր 8. Մեկնելու մտադրություն (ըստ կրթամակարդակի, %) 63
Գծապատկեր 9. Որքանո՞վ է հավանական, որ Ձեր կրթական որակավորմանը համապատասխան աշխատանք կգտնեք արտերկրում (%) 65
Գծապատկեր 10. Արտերկրում ապրելիս և աշխատելիս մարդիկ այնպիսի փորձ են ձեռք բերում, որն օգնում է իրենց ավելի լավ աշխատանքի հնարավորություններ ստանալ վերադառնալուց հետո (% ոչ միգրանտներից) 66
Գծապատկեր 11. Որքանո՞վ է հավանական, որ Դուք Հայաստանում կհաճախեք հատուկ դասընթացի արտերկրում ապրելու կամ աշխատելու նպատակով (%) 68
Գծապատկեր 12. Որքանո՞վ եք տիրապետում (կարողանում խոսել) Ձեր առավել հավանական երկրի լեզվով (%) 69
Գծապատկեր 13 Սոցիալական պայմանների ցուցիչ (%) 70
Գծապատկեր 14 Սոցիալական պայմանների ցուցիչ (ըստ միգրացիոն մտադրության, %) ... 70
Գծապատկեր 15. Պոտենցիալ միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (%) 71
Գծապատկեր 16. Պոտենցիալ միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (ըստ մեկնելու մտադրության, %) 71
Գծապատկեր 17. Ձեր տ/տ ֆինանսական միջոցները ընդհանուր առմամբ բավարա՞ր են հիմնական կարիքները հոգալու համար(%) 72
Գծապատկեր 18. Ամուսնական կարգավիճակ (%) 74
Գծապատկեր 19. Առաջին անգամ արտերկիր մեկնելու պահին, ո՞րն էր ավարտական վկայականով/դիպլոմով հավաստվող Ձեր ամենաբարձր կրթամակարդակը (%) 75
Գծապատկեր 20. Հայաստանում հնարավորինս բարձր կրթամակարդակ ունենալը նպաստում է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն (%) 76
Գծապատկեր 21. Արտերկրում առաջին աշխատանքի տեսակը (%) 80
Գծապատկեր 22. Այդ աշխատանքը համապատասխանու՞մ էր արդյոք Ձեր կրթամակարդակին (%) 81
Գծապատկեր 23. Արտերկրում ունեցած ամսական միջին եկամուտը եվրոյով (ըստ հարցվողների կրթական մակարդակի) 83
Գծապատկեր 24. Միգրացիոն արդյունքի ցուցիչ (n=1228, %) 84
Գծապատկեր 25. Միգրացիոն արդյունք (ըստ կրթական մակարդակի և սեռի, %) 84
Գծապատկեր 26. Արտերկիր մեկնելուց առաջվա համեմատ ինչպե՞ս է փոխվել Ձեր տնտեսական վիճակը (n=1395, %) 87
Գծապատկեր 27. Վերադարձի արդյունքի ցուցիչ (n=1006, %) 89
Գծապատկեր 28. Վերադարձի արդյունքի ցուցիչ (ըստ կրթության և սեռի, %) 89
Գծապատկեր 29 Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ կրթամակարդակի, n=1385, %) 90
Գծապատկեր 30. Ձեր տ/տ ֆինանսական միջոցները ընդհանուր առմամբ բավարա՞ր են հիմնական կարիքները հոգալու համար (n=1385, %) 91

Գծապատկեր 31. Այս թաղամասի տ/տ-ի համեմատ ինչպիսի՞ն է Ձեր տ/տ տնտեսական վիճակը (n=1387,%) 92
Գծապատկեր 32. Վերադարձած միգրանտների սոցիալական պայմաններ (ըստ սեռի, %) .. 92
Գծապատկեր 33. Վերադարձած միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (n=1112, %) 93

Հապավումների ցանկ

ԲՆԴԻԿԵ – Արիզոնայի նահանգային համալսարանի Բնակչության դինամիկայի կենտրոն
ԿԲ – Կովկասյան բարոմետր
ՀՌԿԿ– Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ
ԵՀՀ – Եվրասիա համագործակցության հիմնադրամ
ԵԿՀ– Եվրոպական կրթական հիմնադրամ
ԳՄՀԳ-Գերմանական միջազգային համագործակցության գործակալություն
ՏՏ – Տնային տնտեսություն
ՄԶՄԿ–Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ԱՄԿ - Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՄՄԿ – Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ԱԳՆ – Արտաքին գործերի նախարարություն
ԱՎԾ– Ազգային վիճակագրական ծառայություն
ԵԱՀԿ–Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ՀՁՀԿ–Հայաստանի ձեռնարկատերերի հանրապետական կենտրոն
ԶՊԾ – Զբաղվածության պետական ծառայություն
ՄՊԾ– Միգրացիայի պետական ծառայություն
ՏԿ– Տարածքային կառավարման նախարարություն
ՄԱԶԾ – Միացյալ ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԲՀ–Միացյալ ազգերի բնակչության հիմնադրամ

Երախտիքի խոսք

Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ), հիմնվելով միգրացիայի և հմտությունների ուսումնասիրության իր նախկին փորձի վրա, 2011թ.-ին նախաձեռնեց նոր նախագիծ, որի նպատակն էր ուսումնասիրել միգրացիայի, զարգացման և հմտությունների միջև եղած փոխկապվածությունը երեք երկրներում, այն է՝ Հայաստանում, Վրաստանում և Մարոկկոյում: Սույն ազգային զեկույցը նշված նախագծի արդյունքներից մեկն է, որը ներկայացնում և քննության է առնում 2011/2012թթ.-ին Հայաստանում իրականացված լայնամասշտաբ հետազոտության արդյունքները:

Որպես տեղական գործընկեր ընտրվեց և համապատասխան պայմանագիր կնքվեց Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան (ՀՌԿԿ) ծրագրի հետ (մրցույթ թիվ CFT/11/ETF/0012): ՀՌԿԿ-ն պատասխանատու էր ԵԿՀ մեթոդաբանության հիման վրա և ԵԿՀ աշխատակազմի հետ սերտ գործակցությամբ հետազոտություն իրականացնելու և ազգային զեկույցի նախնական տարբերակը կազմելու համար:

ՀՌԿԿ-ն նախագծի մեջ մեծ ջանքեր ներդրեց: Մենք շնորհակալություն ենք հայտնում ՀՌԿԿ-ի փորձագետներ Ռուբեն Եգանյանին, Սամվել Մանուկյանին, Արփինե Փորսուղյանին և Գայանե Ղուկասյանին իրենց մտավոր ավանդի համար, ինչպես նաև դաշտային աշխատանքի ղեկավարներին, զրուցավարներին, տվյալներ մուտքագրող օպերատորներին՝ իրենց հսկայական ջանքերի համար:

Նախագծի հաջող իրականացումը հնարավոր դարձավ ՀՌԿԿ-ի աշխատակազմի անդամների և նրանց գործընկերների, մասնավորապես՝ Հեղինե Մանասյանի, Արման Մելքոնյանի, Իսկուհի Մկրտչյանի, Մոնիկա Շահմենենդյանի, Հերմինե Միերյանի, Լեսլի Լ. Դիասի, Էնդրյու Լոիզեաքսի, Գևորգ Արիստակեսյանի, Քնարիկ Հարությունյանի և շատ ուրիշների ջանադիր աշխատանքի շնորհիվ:

Մեր երախտագիտությունն ու գնահատանքն ենք ուղղում Հայաստանում գործող տարբեր տեղական և միջազգային կազմակերպություններ և հաստատություններ ներկայացնող բոլոր այն գործընկերներին, ովքեր աջակցել են նախագծի աշխատանքներին: Առանց նրանց սիրահոժար աջակցության և օգնության անհնար կլիներ այն իրականացնել:

ԵԿՀ կողմից առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր հնարավորություն ընձեռեցին ծրագրին ճիշտ մեկնարկ հաղորդել և ովքեր անշահախնդիր կերպով իրենց ռեսուրսները տրամադրեցին ծրագրի մտահղացման, իրականացման և ավարտին հասցնելու ընթացքում՝ չնայած շատ ուրիշ ծրագրերում իրենց զբաղված լինելուն: Մասնավորապես, այդ մարդկանց թվում էին Միլենա Կորադինին, Սիրիա Տաուրելին, Իլզե Գարբանեն, Օուտի Կարկկայնենը, Ումմուհան Բարդակը և Առնե Բաումանը: Հատուկ առանձնացնում ենք Էվա Յանսովայի և Պաոլա Պոցոլոյի դերը՝ տվյալների ճշգրիտ, հուսալի և մանրազնին ստուգումների և կառավարման համար, առանց որի ստորև բերվող փաստերը անհնարին կլինեին: Մեծապես արժեքավոր է եղել նաև Սասեքսի համալսարանից Մայքլ Քոլյերի՝ որպես միջազգային փորձագետի ներդրումը:

ԵԿՀ, Թուրին, 2012թ. հունիս

Համառոտ բովանդակություն

Սույն զեկույցը ներկայացնում է Հայաստանում միգրացիայի համապարփակ պատկերը, որը կազմվել է համապետական մասշտաբով 18-50 տարեկան բնակչության շրջանում անցկացված ընտրանքային հետազոտության միջոցով, ընդ որում որպես ենթաընտրանք են համարվել հավանական միգրանտները և Հայաստան վերադարձած միգրանտները: Ուսումնասիրությունը համալրվել է համապարփակ երկրորդային հետազոտությամբ՝ ուղղված միգրացիայի պատմությանն ու դրա ներկա իրավական և քաղաքական շրջանակին:

Հայաստանում միգրացիայի սեզոնային բնույթի և ապակազմակերպվածության պատճառով դրա մասին եղած տվյալների մեծ մասը հիմնված է առանձին հետազոտական ուսումնասիրությունների վրա: Սույն հետազոտության ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում միգրացիայի վերաբերյալ վերլուծությանը, մասնավորապես՝ միգրացիայի և հմտությունների միջև եղած կապերի և միգրացիայի վերաբերյալ փաստերի վրա հիմնված քաղաքականության բարելավմանը:

Պատմության ամբողջ ընթացքում հայերը հաճախակի են բռնել գաղթի ճանապարհը, որը հանգեցրել է սփյուռքի բազմաթիվ ու բազմազան գաղթօջախների գոյացմանը ամբողջ աշխարհում: Թեպետ միգրացիայի տեսակներն ու ձևերը ժամանակի ընթացքում փոփոխվում են, բայց վերջին տասնամյակներին բնորոշ են սեզոնային աշխատանքային միգրացիայի մեծ արտահոսքերը: Վերջիններս, առհասարակ, շարունակությունն են նախաանցումային շրջանի իրողությունների, երբ սեզոնային աշխատանքային միգրացիան զարգացման միջոց էր: Խորհրդային շրջանի միգրացիայի համեմատ հետանցումային շրջանի առանցքային տարբերություններից մեկն այն է, որ այս աշխատանքային միգրացիան պայմանավորված էր ավելի ծանր պայմաններով և դրանում ընդգրկված մարդկանցից շատերի համար ծառայում էր որպես գոյապահպանության ռազմավարություն: Վերջին երկու տասնամյակներին արտաքին միգրացիայի բացասական հաշվեկշիռը խոչընդոտում է երկրի տնտեսական և սոցիալական զարգացումը և պահանջում է համարժեք քաղաքականություն՝ ապօրինի միգրացիան վերահսկելու, միգրանտների իրավունքների պաշտպանության և միգրանտների արդյունավետ վերադարձը խթանելու համար:

Սույն ծրագրի շրջանակում իրականացված հետազոտությունն ուղղված էր նպատակային երկու խմբերի՝ պոտենցիալ միգրանտներին և վերադարձած միգրանտներին: Պոտենցիալ միգրանտներ են համարվել 18-ից 50 տարեկան բնակչությունը: Վերադարձած միգրանտները նրանք են, որքեր երկրից հեռացել են 18 տարեկանում կամ ավելի բարձր տարիքում, արտերկրում անընդմեջ աշխատել

են առնվազն երեք ամիս, հետազոտության անցկացման պահին վերադարձած են եղել ոչ ավելի վաղ, քան տասը տարի առաջ, ներկա են եղել և պատրաստ են հարցազրույցի համար դաշտային աշխատանքի ժամանակ:

Հետազոտությունն ընդգրկել է բոլոր 11 մարզերը, այդ թվում՝ թե գյուղական և թե քաղաքային համայնքները: Հարցումներն անցկացրել են 74 զրուցավար և 10 խմբավար, ընդ որում հարցումները միջին հաշվով տևել են 30 րոպե պոտենցիալ միգրանտների դեպքում և 36 րոպե՝ վերադարձած միգրանտների դեպքում, յուրաքանչյուր խմբի համար օգտագործելով առանձին հարցաթերթեր: Ընտրանքի չափը կազմել է՝ 2600 պոտենցիալ միգրանտներ և 1400 վերադարձած միգրանտներ: Հետազոտությունն անցկացվել է 2011թ.-ի դեկտեմբերի 13 -29-ին և 2012թ.-ի հունվարի 07-30-ին:

Պոտենցիալ միգրանտների հետազոտության արդյունքները

Պոտենցիալ միգրանտների հետազոտության արդյունքների համաձայն, Հայաստանի 18-50 տարեկան քաղաքացիների 36%-ը լրջորեն մտածում է Հայաստանից հեռանալու մասին՝ արտերկրում աշխատելու և ապրելու մտադրությամբ. զեկույցի շրջանակում մենք նրանց կանվանենք պոտենցիալ միգրանտներ: Տղամարդիկ շատ ավելի մեծ հակվածություն ունեն (42%) արտերկիր տեղափոխվելու, քան կայանք (30%), իսկ ավելի երիտասարդ տղամարդիկ և կանայք ավելի հակված են միգրացիայի, քան ավելի տարիքով խմբերը: Նմանապես, մայրաքաղաքում տղամարդիկ ավելի քիչ են հակված արտագաղթելու, քան մարզերի տղամարդիկ, իսկ կանանց դեպքում՝ ընդհակառակը. մարզերի կանայք ավելի քիչ են հակված արտագաղթելու, քան՝ մայրաքաղաքի կանայք:

Թեև ցածր կրթական մակարդակ ունեցող տղամարդկանց շրջանում միգրացիայի հավանականությունն ավելի մեծ է, արտագաղթելու իրական հավանականությունը, որը չափվում է արտագաղթելու համար անհրաժեշտ ռեսուրսների համախմբի առկայությամբ, ամենաբարձրն է բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում: Այս հակասությունը ցույց է տալիս, որ մեկ բան է արտագաղթելու ցանկությունը և միանգամայն այլ բան՝ հնարավորությունը: Միգրացիայի մտադրության հավանականությունն ամենաբարձրն է բարձրագույն կրթությամբ կանանց շրջանում: Նրանք նաև արտագաղթելու ամենաբարձր հակվածություն ունեցող խումբն են: Սա մատնանշում է է, որ ուղեղների արտահոսքը Հայաստանի համար շարունակում է մնալ հրատապ խնդիր:

Միգրացիայի առավել առաջնային պատճառներն են Հայաստանում աշխատանք գտնելու անկարողությունը, կենսամակարդակի բարելավումը և անբավարար աշխատավարձերը կամ կարիերայի հեռանկարի բացակայությունը: Պոտենցիալ միգրանտների մեկնելու ամենահավանական ուղղությունը Ռուսաստանն է: Տնային

ծառայություններում, շինարարության և տրանսպորտի ոլորտներում զբաղվածները ավելի հակված են արտագաղթելու ցանկություն հայտնելու, քան այլ պատրաստվածության տեր մարդիկ: Արտագաղթին նախապատրաստվելու հարցում տեղեկատվության և աջակցության հիմնական աղբյուրները սոցիալական կապերն են, ընդ որում հարցվածների միայն 2%-ն է նշում, որ իրենք ակնկալում են պետական աջակցություն: Մյուս կողմից, հնարավոր պետական ծրագրերի մասին տեղեկացվածությունն է ցածր՝ 11%: Տասը պոտենցիալ միգրանտներից ինը նշում են, որ որպես արտերկրում աշխատանք գտնելու հիմնական աղբյուր իրենք կհենվեին ընտանեկան և սոցիալական կապերի վրա:

Վերադարձած միգրանտների հետազոտության արդյունքները

Վերադարձած միգրանտների հետազոտության մեջ հարցվածների գերակշռող մեծամասնությունը տղամարդիկ էին (87%): Վերադարձած միգրանտները գլխավորապես արտագաղթած են եղել Ռուսաստան, ընդ որում տոկոսային հարաբերությամբ նրանց մեծամասնությունն աշխատել է շինարարությունում, մշակող արդյունաբերությունում և առևտրի ոլորտում: Արտերկրում գտնվելու միջին տևողությունը եղել է մեկ տարին, ընդ որում վերադարձած միգրանտ հարցվածների ավելի քան կեսը արտագաղթելու մեկ փորձ ունի և մնացել է միայն մեկ նպատակային երկրում: Տղամարդիկ միտված են արտագաղթելու ավելի կարճ ժամկետով, քան կանայք: Գերակշիռ մեծամասնությունը տուն է ուղարկել դրամական փոխանցումներ, սակայն այդ փոխանցումները հիմնականում ծախսվել են տնային տնտեսությունների առօրյա կենցաղային ծախսերը հոգալու համար, և միայն աննշան մասն է ծախսվել կրթական կամ բիզնես գործունեության մեջ ներդնելու համար:

Միգրացիայի անկազմակերպ և երբեմն ոչ պաշտոնական բնույթը ընդհանուր առմամբ հանգեցնում է ընդունող երկրներում միգրանտների հմտությունների թերօգտագործման: Վերադարձած միգրանտների առաջին գործն արտերկրում եղել է որակավորում չպահանջող աշխատանքը: Ընդհանուր առմամբ, վերադարձած միգրանտների մոտավորապես կեսը նշել է, որ իրենք արտերկրում կատարել են որակավորում չպահանջող աշխատանք, իսկ բոլոր հարցվածների 28%-ը նշել է, որ կատարել են իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք: Որակազրկման ռիսկը մեծանում է կրթական մակարդակի բարձրությանը զուգահեռ: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների կեսից ավելին նշել է, որ կատարել են իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք:

Համապատասխանաբար, չնայած այն հանգամանքին, որ վերադարձած միգրանտների 90%-ի կարծիքով կրթության ոլորտում ներդրումներ կատարելը նպաստում է կենսամակարդակի բարձրացմանը, միայն 63%-ն է զգում, որ

բարձրագույն կրթությունը նպաստում է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն: Եթե Հայաստանում 18-ից 50 տարեկանների ընտրանքում առավել տարածված մասնագիտացումները սոցիալական գիտություններն են, ապա վերադարձած միգրանտների շրջանում ուսումնառության առավել հաճախակի հանդիպող մասնագիտական ոլորտներն են ճարտարագիտությունը, մշակող արդյունաբերությունը, շինարարությունը և ճարտարապետությունը:

Վերադարձած միգրանտների կեսը նշում է, որ արտերկրում եղած ժամանակ իրենք նոր հմտություններ ձեռք չեն բերել: Ընդունող երկրներում գործող անհամարժեք քաղաքականությունը նույնպես հանգեցնում է աշխատողների իրավունքների խախտումների, և միգրանտների միայն շատ փոքր տոկոսն է հայտարարել, որ արտերկրում աշխատելու ժամանակ իրենք ստացել են գրավոր պայմանագրեր և սոցիալական ապահովություն: Գրեթե բոլոր միգրանտները (98%) նպատակային երկիր են մեկնել առանց վաղօրոք որևիցե վերապատրաստում անցնելու: Բացի այդ, վերադարձած միգրանտների 94%-ը տեղյակ չէր միգրացիային նախապատրաստվելու հարցում միգրանտներին օգնելուն ուղղված որևիցե կառավարական կամ մասնավոր ծրագրի մասին:

Ըստ հետազոտության, վերադարձած միգրանտների միայն 42%-ն է կարողացել վերադառնալուց հետո գործ գտնել Հայաստանում, իսկ 68%-ը լրջորեն մտածում է նորից արտագաղթելու մասին: Այսպիսով, տնտեսական անբարենպաստ պայմանները շարունակում են կառավարել միգրացիայի վերաբերյալ որոշում ընդունելու գործընթացը, նույնիսկ՝ միգրացիայի իրողություններին քաջածանոթ մարդկանց շրջանում:

Քաղաքականության առաջարկություններ

Քաղաքականությունն, ըստ էության, պետք է նպատակաուղղված լինի միգրացիայի համար առավել բարենպաստ միջավայր ստեղծելուն, որտեղ միգրացիան շահավետ է թե՛ ուղարկող և թե՛ ընդունող երկրների համար, որտեղ միգրանտների իրավունքները պաշտպանվում են, իսկ նրանց հմտություններն օգտագործվում են թե՛ ընդունող երկրում և թե՛ վերադարձից հետո՝ հայրենի երկրում, ընդ որում դրանք կատարելագործվում են միգրացիոն գործունեության ժամանակ:

Ավելի կոնկրետ առաջարկությունները հետևյալներն են.

- Հայաստանի կառավարությունը պետք է մասնակցի ԵՄ և այլ երկրների հետ շրջափուլային միգրացիայի սխեմաներին՝ մարդկանց հտություններն ու կրթությունը համապատասխանեցնելով առկա աշխատատեղերին: Այս գործողությունները պետք է ներառեն Հայաստանի և ընդունող երկրների միջև

համաձայնագրերը՝ ընդունող երկրներում իրավական կարգավիճակ ձեռք բերելու ընթացակարգերն ավելի դյուրին և ավելի թափանցիկ դարձնելու նպատակով:

- Անհրաժեշտ է վերանայել բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները՝ կրթությունը աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխանեցնելու համար:
- Թե՛ ուղարկող և թե՛ ընդունող երկրներում պետք է նախատեսել կոնկրետ ծրագրեր, որոնք ուղղված կլինեն միգրանտների հմտությունների զարգացմանն ու դրանց օգտագործմանը:
- Աշխատանքի հնարավորությունների մասին տեղեկությունները, օրինական միգրացիայի և օրինական զբաղվածության համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև ընդունող երկրներում միգրանտների իրավունքները պետք է ապահովել՝ գործակցելով ընդունող երկրների հետ և դրանք դյուրամատչելի դարձնելով միգրանտների համար: Պետք է ջանքեր գործադրել արդեն մատուցվող ծառայությունների մասին միգրանտներին ավելի լայնորեն իրազեկելու ուղղությամբ, որպեսզի այդ ծառայությունների պոտենցիալ շահառուները կարողանան օգտվել դրանցից:
- Կառավարությունը պետք է վերադարձած միգրանտների համար տնտեսական խթաններ ստեղծի՝ Հայաստանում աշխատելու համար: Մասնավորապես խիստ կարևորվում են ներդրումային հնարավորությունները, որպեսզի դրամական փոխանցումները և միգրանտների խնայողությունները ներդրվեն Հայաստանում: Համապատասխան ծրագրեր պետք է իրականացնել մասնագետ միգրանտների վերադարձն ու Հայաստանում աշխատանքը խրախուսելու համար:
- 2012-2016թթ. Գործողությունների պետական պլանի իրականացումը միգրացիայի պետական կարգավորման նպատակով պետք է լինի թափանցիկ և մասնակցային:

Գլուխ 1. Ներածություն. միգրացիոն հոսքերի և դրանց բնույթի մասին երկրորդային հետազոտություն աշխատաշուկայի և կրթական համակարգի միջև եղած կապերի ուսումնասիրության միջոցով

1.1. Ընդհանուր տեղեկություններ միգրացիոն ծավալների և միգրացիոն հոսքերի մասին

Արտաքին միգրացիոն առումով հետխորհրդային շրջանում Հայաստանում տեղի ունեցած քանակական և որակական անցումների լիարժեք ընկալումը պարտադրում է նախաանցումային իրողությունների համառոտ ներկայացում:

Հայաստանի արտաքին միգրացիոն իրավիճակը նահաանցումային շրջանում

Այդ շրջանում երկրի արտաքին միգրացիայում հստակորեն առանձնանում էին մշտական բնակության մտադրությունների հոսքերը և սեզոնային աշխատանքային հոսքը:

Մշտական հոսքերի առումով 20-րդ դարի 60-70-ական թվերի ողջ ընթացքում միգրացիոն իրավիճակը գործնականում կայուն էր: Ընթանալով տարեկան 13-14 հազար մարդ կազմող դրական մնացորդով՝ դրանք ապահովում էին բնակչության աճի ավելի քան 1/5-ը: Նման իրավիճակը կանխորոշող ենթահոսքերն էթնիկ բնույթ էին կրում: Մշտական բնակության էին գալիս գլխավորապես Ադրբեջանի ու Վրաստանի հայազգի քաղաքացիները (դրական մնացորդի տարեկան մեծությունը 9-10 հազար մարդ), և հիմնականում Մերձավոր Արևելքի երկրներում (Իրան, Սիրիա, Հորդանան և այլն), բնակվող սփյուրքահայերը. (տարեկան 2-4 հազար մարդ, բացառապես որպես պետականորեն կազմակերպված հայրենադարձություն) *(Гомцян Л.М., 1978, стр.23):*

Սակայն, արդեն 80-ականների սկզբից, Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի դանդաղման հետևանքով վիճակը որակապես փոխվեց: Դեպի Ռուսաստան վերաուղղորդման բերումով նվազեց Ադրբեջանի ու Վրաստանի հայազգի քաղաքացիների ներհոսքը: Մյուս կողմից, որոշ չափով աճեց Հայաստանից բնակչության արտահոսքի ծավալը (ևս առավելապես դեպի Ռուսաստան): Զուգահեռ գրեթե դադարեց սփյուռքահայերի ներհոսքը: Այս դեպքում տեղի ունեցավ վերաուղղորում դեպի զարգացած երկրներ: Ավելին, 1975թ. Հելսինկյան գագաթնաժողովի արդյունքում ԽՍՀՄ էմիգրացիոն արգելքների մեղմացման շնորհիվ, ձևավորվեց նախկին հայրենադարձների ոչ մեծ, և նորից դեպի արևմուտք ուղղված արտահոսք: Այս ամենի հետևանքով 80-ականների ողջ ընթացքում մեկնողների թիվը գերազանցել եկածների թվին՝ պաշտոնական տվյալներով տարեկան 8-10 հազար մարդով : Կազմելով երկրի բնակչության թվաքանակի միայն մոտ 0.3%-ը և բնական աճի մեծության 15-17%-ը, տվյալ արտահոսքը թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ ժողովրդագրական տեսակետից, թերևս, էական բացասական անդրադարձ չէր ունենում: Ավելին, հիմքեր կային կարծելու, որ դա իրականում շուրջ կիսով չափ պակաս էր (տես ստորև):

Մեզոնային աշխատանքային հոսքը, ձևավորվելով 60-ականների կեսերին, այն արագորեն վերաճել էր կայուն մասսայական երևույթի: Արդեն 80-ականներին նրանում ներառված էր երկրի բնակչության շուրջ 1%-ը և աշխատանքային ռեսուրսների գրեթե 2%-ը՝ տարեկան 30-40 հազար մարդ *(ՀԽՍՀ Աշխատանքի և զբաղվածության Պետական կոմիտե, ՀԽՍՀ Պետպլանի ՏՊԳՀ, Երևան, 1985, 67 էջ).*

Դրանում գերազանցապես ընդգրկված էին աշխատուժի ավելցուկ ունեցող գյուղական շրջանների բնակիչները: Որպես կանոն աշխատանքային տարիքի տղամարդկանցից կազմված այս խումբը հիմնականում զբաղվում էր շինարարությամբ: Այն լուրջ ներդրում էր ունենում մուտքի վայրերի զարգացման գործում (կապիտալ ներդրումների տարեկան ծավալները գնահատվում էին 1-1.5 մլրդ. ռուբլի): Սակայն, նպատակային երկրներում երևույթն ուղեկցվում էր նաև որոշակի հիմնախնդիրներով՝ ոչ միշտ էին հարթ ու համերաշխ ստացվում տեղացիների հետ հարաբերությունները, երևույթը ուներ զգալի կոռուպցիոն բաղադրատար և այլն: Միանշանակ չէին նաև երևույթի հետևանքները Հայաստանի համար: Դրանք դրական էին բնակչության առավել արդյունավետ զբաղվածության, ֆինանսական միջոցների նշանակալից ներհոսքի՝ տարեկան (մոտ 150 մլն. ռուբլի), ապահովման առումով: Վերջիններս ուղղվում էին ընտանիքների ընթացիկ ու հեռանկարային կարիքներին. կացարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում, ավտոմեքենաների, գույքի և տեխնիկայի ձեռք բերում, առողջական և կրթական խնդիրների լուծում և այն: Այսինքն, մարդկային զարգացման բոլոր առումներով՝ եկամտային, առողջական, կրթական, փոխում էին կյանքի որակը: Այդպիսով, սկզբնավորվելով որպես զբաղվածության սահմանափակ հնարավորություններով պարտադրված զոյատևման ռազմավարություն, երևույթը վերաճել էր բարգավաճման, զարգացման ռազմավարության:

Բացասական հետևանքներից նշենք ներառվածների կենսուժերի գերածախսը, ընտանիքի հայրերի (որպիսիք էին արտագնաների մեծ մասը) տևական բացակայությունը, ամուսինների տարեկան միայն 3-4 ամիս միասին լինելու բերումով զավակների դաստիրակության, ընտանիքի կայունության հիմնախնդիրների սրումը, վարակիչ հիվանդությունների՝ այդ թվում վեներական, ներկրումը և տարածումը: Այն, որ հանդիսանալով մշտական էմիգրացիայի կարևոր այլընտրանք, երևույթը միաժամանակ դրա ծավալների ավելացման լիցք էր պարունակում: Վերջապես այն, որ միգրացիոն ակտերի հաշվառման համակարգի անկատարության բերումով այս գործընթացի արդյունքում տեղի էր ունենում էմիգրանտների թվի ու դրանով հանդերձ միգրացիայի բացասական մնացորդի մեծության գերհաշվառում:[1]

[1] Արտերկիր մեկնող աշխատանքային միգրանտներից ոմանք, փորձելով խուսափել կարմիր ժապավենից, պաշտոնապես գրանցում էին միայն նշանակման երկրում իրենց ժամանման փաստը (առանց որի նրանք չէին կարող աշխատանք ստանալ): Մեկնումը կամ վերադարձը չգրանցելը նշանակում էր, որ ԽՍՀՄ Կենտրոնական վիճակագրական վարչությունը, խորհրդային հանրապետությունների միջև միգրացիայի թվերը ճշգրտելու ժամանակ ձեռքով ավելացնում էր

Հայաստանի արտաքին միգրացիոն իրավիճակն անկախության շրջանում

Սկսած 1988թ. Հայաստանի միգրացիոն իրավիճակը կտրուկ բեկվեց: Դա պայմանավորվեց այնպիսի փոխկապակցված արտակարգ գործոններով, ինչպիսիք էին ղարաբաղյան ճգնաժամը, երկրաշարժը, քաղաքական, սոցիալական և տնտեսական հեղափոխական անցումները (ԽՍՀՄ փլուզում, տրանսպորտային և էներգետիկ շրջափակում, անցում շուկայական հարաբերությունների, արտադրության անկում և տնտեսության արմատական կառուցվածքային տեղաշարժեր և այլն):

Ընդ որում, մի շարք պատճառներով միգրացիոն վիճակագրությունը դադարեց արտացոլել իրականությունը: Այդ պատճառներից մեկն էլ միգրացիոն ակտերի այսպես կոչված «հստակության» կորուստն էր:

Ուղևորությունների մեծ մասը, դադարելով միտված լինել հստակ վերջնական նպատակի, ստացավ անբարենպաստ իրողություններին յուրօրինակ արագ արձագանքի բնույթ : Պայմանավորված դրանով, միգրանտների գերակշիռ մասը, «կամուրջները չայրելու», վերադարձի դեպքում քիչ խնդիրներ ունենալու մտայնությամբ, խուսափել են (և ներկայումս էլ խուսափում են), պաշտոնապես ընդունված կարգով միգրացիոն ակտը գրանցելուց: Նման իրավիճակում միգրացիայի մասին առավել հավաստի տվյալների միակ աղբյուր հանդիսացան ընտրանքային դիտարկումները:

Հետխորհրդային միգրացիայի առաջին հետազոտությունը կատարվեց 1995թ.: Դրանով ստացվեցին նորանկախ Հայաստանի բնակչության արտաքին միգրացիայի ծավալային և որակական բնութագրիչների առաջին իրատեսական գնահատականները, այդ թվում այն, որ 2001-2005թթ միգրացիայի արդյունքում երկիրը կորցրել էր իր բնակչության ավելի քան 17%-ը (UNFPA, Անկախ հետազոտական խումբ՝ պրոֆ. Ս. Կարապետյան, հոգ.գ.թ. Ն. Շահնազարյան, տ.գ.թ. Ռ. Եգանյան, Երևան, 1996, 31 էջ): Նշենք, որ 2001թ ՀՀ մարդահամարի արդյունքները գործնականում լիովին հաստատեցին այս հետազոտության տվյալների հավաստիությունը: (Մարդկային զարգացման ազգային զեկույց 2009, UNDP, Երևան, 2010):

Սրան հաջորդեց այլ հետազոտությունների մի ամբողջ շարք, որը ըստ երևույթի ընդգրկման բնույթի և շրջանակների կարող են տարակարգվել հետևյալ կերպ.

- Երևույթի համալիր հետազոտություններ *(Տնային տնտեսության միացյալ հետազոտություններ, ՀԲ-ԱՎԾ; Աշխատուժի հետազոտություններ, ԱՄԿ-ԱՎԾ, և այլն)*:
- Երևույթի առանձին բաղադրամասերի՝ աշխատանքային միգրացիա, վերադարձած միգրանտներ, ուղևորահոսքեր և այլն, հետազոտություններ

Հայաստանից հեռացած անձանց թիվը (ըստ այդ մեթոդաբանության, հաշվարկը կատարվում էր ժամանումների թվի հիման վրա): (Բոլոր հղումները տես բաժին 3-ում):

(Տնային տնտեսության միացյալ հետազոտություններ, ՀԲ-ԱՎԾ; Աշխատուժի հետազոտություններ, ԱՄԿ-ԱՎԾ, և այլն):

- Սոցիալ-տնտեսական հետազոտություններ, որոնց խնդիրների լուծումը պարտադրել է դիտարկել նաև արտաքին միգրացիոն երևույթի որևէ ասպեկտը *(Տնային տնտեսության միացյալ հետազոտություններ, ՀԲ-ԱՎԾ; Աշխատուժի հետազոտություններ, ԱՄԿ-ԱՎԾ, և այլն):*
- Պիլոտային հետազոտություններ *(Տնային տնտեսության միացյալ հետազոտություններ, ՀԲ-ԱՎԾ; Աշխատուժի հետազոտություններ, ԱՄԿ-ԱՎԾ, և այլն)*:

Տվյալների այս աղբյուրների (ՀՀ կառավարություն, 25 հունիսի, 2004թ. 30 դեկտեմբերի, 2010թ Եգանյան Ռ. Դավթյան Լ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2001, Երևան էջ 30-37, ՄԱԶԾ, Երևան 2010) համակարգային դիտարկումները հիմք են ծառայում կատեգորիաներ սահմանելու համար և թույլ են տալիս 1988թ.Հայաստանում սկիզբ առած միգրացիոն հոսքերը բաժանել չորս փուլերի:

Առաջին երկու փուլերը՝ «ապակայունացումը» և «բնակչության զանգվածային արտահոսքը», տեղի ունեցան այն ժամանակ, երբ բնակչությունը և երկիրը սթրեսի արտակարգ չափաբաժինների էին ենթարկվում: Վերջին երկու փուլերը՝ «անցում կայունացման» և «շարունակական ժամանակավոր միջրացիան», նշանավորում են Հայաստանում կայունության դանդաղ վերականգնումը և աճը (տես՝ աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1 Հայաստանի բնակչության 1988-2007թթ. միգրացիայի ծավալների փորձագիտական գնահատումը, հազար մարդ

Փուլեր	Ցուցանիշներ	Տարիներ			
		1988-1991	1992-1994	1995-2001	2002-2007
Ապակայունացման փուլ	Ներհոսք	600			
	Արտահոսք	620			
	Շրջանառություն	-20			
Զանգվածային արտահոսքի փուլ	Ներհոսք		370		
	Արտահոսք		980		
	Շրջանառություն		-610		
Անցում կայունացման	Ներհոսք			350	
	Արտահոսք			600	
	Շրջանառություն			-250	
Շարունակական ժամանակավոր միգրացիա	Ներհոսք				600
	Արտահոսք				750
	Շրջանառություն				-150
Ընդհանուր շրջանառությունը		-1030			

Ապակայունացման փուլ (1988-1991)

Այս փուլում վճռորոշ դերակատարում են ունեցել քաղաքական-հասարակական և բնական արտակարգ գործոնները (ամբողջատիրության կործանում, ԽՍՀՄ փլուզում, ազգամիջյան հակամարտություններ և անվստահություն, սոցիալական լարվածություն, աղետալի երկրաշարժ և այլն): Այս փուլի հիմնական հոսքերն էին.

Փախստականներ: Ներհոսք. մոտ 420 հազար (շուրջ 360 հազարը Ադրբեջանից, մնացածը նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից): Արտահոսք. մոտ 170 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիներ: Սա եղել և մնում է հետխորհրդային հոսքերից միակը, որի արդյունքում երկրի բնակչության թիվը աճել է մոտ 250 հազարով կամ գրեթե 7%-ով: Դժբախտաբար, 90-ական թվականների ծանր իրողությունների ճնշման տակ փախստականների զգալի մասը այնուհետ արտագաղթեց՝ հիմնականում ՌԴ *(ՄԶՄԿ, Երևան, 2010, 37 էջ)*:

Երկրաշարժի գոտու բնակչության էվակուացում և ռեէվակուացում: 1989-1990թթ. տեղի ունեցած այս գործընթացը կարևորվում է ոչ այնքան արդյունքով՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններ էվակուացված մոտ 200 հազար աղետյալներից (հիմնականում կանայք և երեխաներ) շուրջ 50 հազարի չվերադառնալը, որքան այն բանով, որ վերջիններս դեպի իրենց ձգելով իրենց ընտանիքների անդամներին և մերձավորներինէ նպաստեցին երկրից բնակչության արտահոսքի ալիքի ձևավորմանը և 1992-1994թթ. ընթացքում զանգվածային երևույթի վերաճմանը *(Եգանյան, Դավթյան, 2011)*: Այնուամենայնիվ, երկրաշարժը վերապրածներից 150 հազարը վերադարձավ Հայաստան:

Հասարակական-քաղաքական էմիգրացիա: Հիմնականում մշտական բնակության միտված այս հոսքը (արտահոսք՝ գրեթե 250 հազար, ներհոսք՝ մոտ 30 հազար մարդ), ներառել է նախընթաց տարիներին մերժված «հեռավոր» արտերկրներ էմիգրացման ձգտողներին, աշխատելու և/կամ ձեռներեցությամբ զբաղվելու համար արտագաղթող բարձր որակավորում ունեցող մասնագետներին և նորահայտ գործարարներին, նախորդ վարչակարգի նոմենկլատուրայի սոցիալապես անհարմարավետ իրավիճակում հայտնված ներկայացուցիչներին, ռուսալեզու խավին (թե՛ ազգային փոքրամասնությունները ներկայացնող և թե՛ հայազգի՝ նաև փախստականների թվից) *(ՄԶՄԿ, Երևան, 2010, 38 էջ)*:

Աշխատանքային/սեզոնային միգրացիա: Այստեղ պետք է նշել, որ սեզոնային աշխատանքային միգրացիան գործնականում մի պահ կանգ առավ: Պոտենցիալ աշխատանքային միգրանտների գրեթե ամբողջ խումբն ընդգրկվել էր երկրաշարժի գոտու վերականգնողական աշխատանքներում: Դժբախտաբար, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով վերականգնողական աշխատանքները դադարեցվեցին, որը, սկսած 1992թ.-ից, ի թիվս այլ պատճառների, հանգեցրեց սեզոնային աշխատանքային միգրացիայի պահանջարկի նոր աճի՝:

Զանգվածային արտահոսքի փուլ (1992-1994)

Այս փուլի ընթացքում վճռորոշ դարձան գործնականում ամեն մի քաղաքացու վրա անմիջական ազդող այնպիսի արտակարգ երևույթները, ինչպիսիք են տնտեսության քայքայումը, զանգվածային գործազրկությունը, շոկային թերապիան և բնակչության զանգվածային ունեզրկումը, տրանսպորտային և կոմունալ-կենցաղային սպասարկման համակարգերի կաթվածահարումը և այլն: Դրանց համալիր ազդեցության տակ թռիչքաձև աճեցին արտահոսքի ծավալները: Ընդամենը 3 տարում տեղի ունեցավ ավելի քան 980 հազար էմիգրացում և միայն

մոտ 370 հազար իմիգրացում՝ հիմնականում ռեէմիգրացումներ (նախկին էմիգրացվածների վերադարձներ), այսինքն ավելի քան 610 հազար մարդ, կամ երկրի 5 բնակչից գրեթե 1-ը, մեկնեց ու չվերադարձավ*(ՄԶՄԿ, Երևան, 2010, 39 էջ)*:

Հետազոտական տվյալներով, այս փուլում թե էմիգրանտների, թե ռեէմիգրանտների զանգվածները ձևավորված են եղել երկու հիմնական հոսքերից: Դրանցից առաջինն աշխատանքային միգրանտներն էին, երկրորդը՝ այսպես կոչված սոցիալ-կենցաղային միգրանտները (նրանք, ովքեր հեռանում էին երկրից արտառոց սոցիալ-կենցաղային պայմանների՝ էլեկտրականության հովհարային անջատումներ, տրանսպորտային կոլապս և այլն, կարգավորմանը արտերկրում սպասելու մտադրությամբ): Ընդ որում, եթե մեկնածների թվում գերակշռել են առաջինները (գրեթե 50%, երկրորդների մոտ 40% դիմաց), ապա վերադարձածների թվում հակառակը՝ սոցիալ-կենցաղային միգրանտները (մոտ 60%, աշխատանքային միգրանտների մոտ 35%-ի դիմաց): Արդյունքում, արտերկրում մնացածների թվում սկզբնապես աշխատանքային նպատակով մեկնածների բաժինը (մոտ 65%) գրեթե եռակի անգամ գերազանցեց սոցիալ-կենցաղային էմիգրանտների բաժինը*(ՄԶՄԿ, Երևան, 2010, 39-40 էջ)*:

Արտահոսքի շուրջ 75-80%-ը ուղղվել է ԱՊՀ երկրներ՝ գերազանցապես ՌԴ, մնացածը՝ գրեթե հավասար մասնաբաժիններով Եվրոպա և ԱՄՆ: Ի տարբերություն առաջին փուլի հոսքերի, որոնց բնորոշ էր գրեթե համամասնական ժողովրդագրական կառուցվածք, այս փուլի համալիր հոսքում գերակշռել են տղամարդիկ՝ ավելի քան 60%-ը, ընդ որում թե նրանց և թե կանանց հիմնական մասը կազմել են ակտիվ տարիքում գտնվողները: Սրա հետևանքով տեղի է ունեցել երկրի բնակչության ժողովրդագրական կառուցվածքի էական խաթարում, ինչը զգալի չափով կանխորոշել է մինչ այդ բարենպաստ ժողովրդագրական իրադրության ճգնաժամայինի վերաճումը՝ բնակչության ըստ սեռի և տարիքի բաշխման համամասնությունների խաթարում և ծերացման գործընթացի խորացում, ամուսնության և ծնելիության բացարձակ և հարաբերական մեծությունների ավելի քան կրկնակի նվազում, մահացության աճման միտումի ձևավորում և այլն:

Այս փուլի հոսքերն ունեցել են բնակչության միջինից բարձր կրթամակարդակ: Դրանցում առավել մեծ չափով են ներկայացված եղել նաև մասնավոր հատվածում զբաղվածները, գործազուրկները և միջին ապահովվածություն ունեցողները: Վերջիններիս դեպքում նյութականը հանդես է եկել միաժամանակ թե՛ որպես միգրացիոն ակտիվության գործոն և թե՛ հետևանք: Նյութական խթանիչների և հնարավորությունների բացակայությունը կանխորոշել է համապատասխանաբար բարձր և ցածր ապահովություն ունեցածների ցածր միգրացիոն ակտիվությունը:[2]

[2] Հայաստանի բնակչության միգրացիան ետխորհրդային շրջանում: UNFPA, Անկախ հետազոտական խումբ՝ պրոֆ. Ս. Կարապետյան, հոգ.գ.թ. Ն. Շահնազարյան, տ.գ.թ. Ռ. Եգանյան, Երևան, 1996, տվյալներով միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն են ունեցել միգրանտների 46.4%-ը, երկրի ողջ բնակչության այդ տարիների միայն 37.9% միջին ցուցանիշի դիմաց՝ էջ 21:

Անցում կայունությանը (1995-2001)

Այս փուլն առանձնանում է բնակչության միգրացիոն ակտիվության կտրուկ նվազմամբ. գումարային մոտ 600 հազար էմիգրացում, , շուրջ 350 հազար իմիգրացում (հիմնականում ռեէմիգրացումներ), բացասական մնացորդ՝ 250 հազար մարդ, կամ երկրի բնակչության թվի մոտ 8%-ը:

Ակնհայտ է, որ այս անցումը պայմանավորվել է մի կողմից երկրի սոցիալ-տնտեսական վիճակի որոշակի կայունացմամբ, այսինքն արտակարգ գործոնների ազդեցության թուլացմամբ, մյուս կողմից հենց նախընթաց գերբարձր էմիգրացիոն ակտիվությամբ:

Վերջինս նախ նվազեցրել է բնակչության էմիգրացիոն ներուժը, երկրորդ՝ նպաստել է երկրում մնացածների կենսամակարդակի որոշ բարձրացմանը (էմիգրանտների դրամական փոխանցումներ): Չի բացառվում նաև ընդունող երկրների «արտաքին գործոնի» հակազդեցության դերը (այդ թվում, նախ և առաջ Հայաստանի գլխավոր միգրացիոն գործընկերը հանդիսացող Ռուսաստանի Դաշնության միգրացիոն օրենսդրության պահանջների խստացումների): Այս փուլի առավել կարևոր կառուցվածքային հայտանիշը թե՛ մեկնողների և թե՛ վերադարձողների զանգվածում աշխատանքային միգրանտների բաժնի աճն է՝ ընդհուպ մինչև դրանց ծավալների շուրջ 2/3-ը: Կարևոր և հատկանշական է նաև սոցիալ-կենցաղային էմիգրացիոն հոսքի գրեթե լիակատար դադարումը և ընտանիքների վերամիավորմանը նպատակամղված հոսքի ի հայտ գալը, այսինքն, առավելապես ռեէմիգրացիայով ավարտվող հոսքի փոխարինումը անվերադարձ հոսքով: Եթե առաջինը պայմանավորվել էր սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմամբ, ապա երկրորդը, դրա տեմպերի անբավարար լինելով, հասարակությունում ձևավորված անառողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտով, իրադրության արագ շտկման հույսի խամրամբ և այլն:

Այս փուլում աշխատանքային միգրացիայի ծավալների աճի բերումով, հոսքերի սոցիալ-ժողովրդագրական և աշխարհագրական բաշխումներն անգամ ընգծվել էին (այդ թվում էլ ավելի էին մեծացել տղամարդկանց և ակտիվ աշխատանքային տարիքի միգրանտների, ինչպես նաև դեպի Ռուսաստան մեկնողների բաժինները): Ուշագրավ է, որ միակ կառուցվածքային տեղաշարժը՝ ներառվածների ավելի ցածր կրթամակարդակ ունենալը, նույնպես բացատրվում է դրանով: *(ՄՄԿ,Երևան 2002, էջ 106).*

Հայաստանի արտաքին միգրացիոն գործընթացներում աշխատանքային բաղադրամասի հետևողական վերաճումը հիմնական հոսքի պարտադրում է դրանում կատարված տեղաշարժերի առանձին դիտարկում:

Նախ՝ արդեն 80-ականների վերջերին տեղի ունեցավ նախաանցումային Հայաստանի արտաքին միգրացիոն իրավիճակի կարևոր բաղադրամաս հանդիսացող սեզոնային աշխատանքային միգրացիայի ծավալների նվազում (տես վերում՝ 1.1):

Ներառվածների մի մասը, օգտագործելով պայմանագրային հիմունքներով տնտեսական գործունեություն իրականացնելու փորձը, կուտակած ֆինանսական միջոցները, մուտքի վայրերում ունեցած կապերը, ներգրավվեց կոոպերատիվ շարժման մեջ՝ մասամբ նաև նպատակային երկրներում: Ակնհայտ է, որ երկրորդ դեպքում տեղի ունեցավ երևույթի վերաճում մշտական էմիգրացիայի կամ Հայաստանի միգրացիոն իրադրության համար նոր, տևական արտաքին աշխատանքային միգրացիայի (ավելի քան մեկ տարով աշխատանքային մեկնումներ): Այնուհետև, երկրաշարժի բերումով երևույթը գործնականում դադարեց. գրեթե բոլոր արտագնաները ներգրավվեցին վերականգնման աշխատանքներում: Դժբախտաբար, ԽՍՀՄ փլուզումից հետո դրանք սառեցվեցին, ինչը ստիպեց արտագնաների հիմնական մասին արդեն 1992թ. վերսկսել ուղևորությունները: Ընդ որում, պետք է կարծել, որ սա որոշակի դեր խաղաց տվյալ տարում այսպես կոչված նոր աշխատանքային միգրանտների (մինչ այդ երևույթում չներառվածներ) հոծ զանգվածի ձևավորման գործում:

Այսպիսով, սեզոնային աշխատանքային միգրացիան կարճ ընդմիջումից հետո վերադարձավ հայկական իրականություն, սակայն արդեն ընդամենը որպես աշխատանքային միգրացիայի ամբողջական երևույթի մաս: Այսպես, 2001թ. երկրից մեկնած 84,1 հազար և ժամանած 45.2 հազար աշխատանքային միգրանտներից հաջորդաբար միայն 23.2 հազարը և 20.4 հազարն էին սեզոնային արտագնաներ *(ՄՄԿ, Երևան 2002, էջ 59).*

Ի տարբերություն նախաանցումային շրջանի, երբ շնորհիվ բարձր եկամտաբերության սեզոնայի աշխատանքային ուղևորություններն ըստ էության կրում էին բարգավաճման, զարգացման ռազմավարության բնույթ, 90-ականների և ներկայիս աշխատանքային միգրացիան առավելապես գոյատևման ապահովման՝ որպես կանոն այլընտրանքից զուրկ, ռազմավարություն է: Սրանով են պայմանավորված երևույթի այնպիսի հայտանիշները, ինչպիսիք են.

- ժամկետային անհստակությունը (սեզոնայինից ոչ սեզոնայինի, կարճատևից՝ մինչև մեկ տարի, տևականի կերպափոխվելու բարձր ներուժը),
- բոլոր առումներով (վաստակի մեծություն, աշխատանքային, կացարանային և կոմունալ-կենցաղային պայմաններ և այլն), ընդունելիության ցածր նշաձողերը,
- բազմաճյուղայնությունը (ոչ միայն շինարարություն, այլև առևտուր, հասարակական սնունդ, արտադրություն, սպասարկում և այլն) և հատկապես բարձր ռիսկայնությունը:

Մեծապես ռիսկային էր և է արդեն իսկ ուղևորությունը: Այն հաճախ կատարվում էր/է պարտքով վերցվող և/կամ գույքի/ անասունների վաճառքի գումարով, այսինքն առանց ձեռնարկվող քայլի հաջողության երաշխիքների վտանգվում էր/է ընտանիքի վաղվա օրը *(ՄՄԿ, Երևան 2002, էջ 166).* Էլ ավելի ռիսկային էր/է աշխատանքը: Առավելապես իրականացվելով բանավոր համաձայնությամբ՝ ուղեկցվում էր/է վճարումների ուշացման, մասնակի և անգամ բոլորովին չվճարման հաճախակի

դեպքերով: Ռիսկայնության լուրջ գործոններ էին/են մուտքի վայրերի կացության իրավական նորմերի չպահպանումն՝ անօրինական կարգավիճակում հայտնվելը, տեղական հանրության որոշ մասի անբարյացկամ՝ հաճախ անգամ թշնամական, դիրքորոշումը:

Այսպիսով, դրական ներուժով մեծապես զիջելով նախընթաց սեզոնային աշխատանքային միգրացիային՝ երևույթը ամբողջապես ժառանգել էր/է դրա բոլոր բացասական հատկանիշները:[3]

Ավելին, ի տարբերություն առաջինի, որի արտահոսքածին ներուժը գրեթե չէր առարկայանում, հետխորհրդային աշխատանքային միգրացիան հանդիսացել/հանդիսանում է մշտական էմիգրացիայի խթանման կարևոր գործոն (մեկնածների զգալի մասի չվերադառնալ, ընտանիքների արտերկրում վերամիավորվել և այլն): Ամփոփելով այս երեք փուլերի արդյունքներն՝ արձանագրենք, որ դրանց ընթացքում գրեթե 900 հազար մարդ մեկնել և չի վերադարձել Հայաստան, ընդ որում ի նկատի ունենալով փախստականների հոսքերի դրական մնացորդը՝ պարզ է, որ արտերկրում մնացած Հայաստանի քաղաքացիների թիվն անգամ ավելի մեծ է՝ 1-1.1 մլն մարդ, կամ բնակչության մեկնարկային թվի շուրջ 30%-ը (ՄԱԶԾ, Երևան 2010, էջ12-13): Արտակարգ իրողությունների հետևանքով այս ծավալուն արտահոսքը որոշակի իմաստով հանդիսացել է իրավիճակի շտկման գործոններից մեկը: Ապահովելով ֆինանսական միջոցների նշանակալից ներհոսք՝ նպաստել է բնակչության վճարունակության բարձրացմանը, ինչն իր հերթին կարևոր դեր է խաղացել տնտեսական և կոմունալ-կենցաղային ճգնաժամի հաղթահարման գործում: Անվիճելի է նաև դրա դրական դերը սոցիալական լարվածության անկառավարելի մակարդակի բարձրացման, լուրջ սոցիալական ցնցումների վտանգի կանխարգելման առումով: Մյուս կողմից, սակայն, դրա հետևանքով հանրության ակտիվ տարրի զգալի մասի երկրի ներքին խնդիրներից օտարումն, անկասկած, հանդիսացել է Հայաստանի արդի քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերին բնորոշ բացասական երևույթների արմատավորման պատճառներից մեկը (ընտրախախտումներ, կոռուպցիայի և հովանավորչության լայն տարածվածություն, անառողջ տնտեսական միջավայր և խիստ խորացած մոնոպոլիզացիա և այլն):

Շարունակական ժամանակավոր միգրացիայի փուլ (2002-2007)

Այս փուլի իրողությունների մասին ևս պատկերացում են տալիս բացառապես հետազոտական նյութերը *(Եգանյան Ռ, Երևան 2010, էջ 16)*[4]: Դրանցից առավել

[3]Ներառվածների կենսուժերի գերածախս, ընտանիքի հայրերի (որպիսիք էին արտագնաների մեծ մասը), տևական բացակայության, ամուսինների տարեկան միայն 3-4 ամիս միասին լինելու բերումով, զավակների դաստիրակության, ընտանիքի կայունության հիմնախնդիրների սրում, վարակիչ հիվանդությունների՝ այդ թվում վեներական, ներկրում և տարածում և այլն: (Տես՝ Միգրացիա և մարդկային զարգացում. հնարավորություններ և մարտահրավերներ: Հայաստան 2009, Մարդկային զարգացման ազգային զեկույց 2009, UNDP, Երևան, 2010,, էջ 32)

հավաստի և ամբողջական տեղեկատվություն են պարունակում հետևյալ երկու աղբյուր՝ ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտության զեկույց (UNFPA, Երևան, 2007թ; Միգրացիա և զարգացում. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն: ԱՄԿ 2009: ԱՄԿ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային գրասենյակ): Ընդ որում քանի որ այդ երկուսն էլ դիտարկել են 2002-2007թթ., հիմնավոր դատողություններ կարելի է անել միայն այդ տարիների միգրացիոն գործընթացների մասին (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին և ներքին միգրացիան 2002-2007 թթ. հետազոտությունների հիման վրա

	ՀՀ արտաքին և ներքին միգրացիան UNFPA, Երևան 2007			**Միգրացիան և զարգացումը, ILO, 2009**
	Ընդհանուր	Տարեկան միջին	Մասնակցությունը արտաքին միգրացիային	Արտաքին միգրացիային մասնակցածների ընդհանուր թիվը
Ներհոսք	600,000	100,000	150,000	230,000 ± 15,000
Արտահոսք	750,000	125,000	320,000	
Շրջանառություն	**-150,000**	-25,000	**-170,000**	

Տարեկան միջին ցուցանիշների համեմատությունը 2002-2007 (տես աղյուսակ 2) 1995-2001-ի միևնույն ցուցանիշների հետ (մոտավորապես 86 և 50 հազար համապատասխանաբար) ցույց տվեց, որ արտաքին միգրացիան Հայաստանից էականորեն աճել է[5]: Այս ընթացքում միգրացիոն շարժունակությունն ակտիվացել է աշխատանքային միգրացիայի և Հայաստանից ընդունող երկիր և հակառակը:

Համաձայն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի զեկույցի, միգրանտների այս գերակտիվ խմբի գերակշիռ մեծամասնությունը (նրանց մոտ 3/4-ը կամ 185 հազար մարդ) աշխատանքային միգրանտ է: Մնացյալը նրանց ընտանիքի անդամներն են: ԱՄԿ-ի զեկույցի տվյալները նույնպես հաստատում են, որ Հայաստանի արտաքին միգրացիոն գործընթացները վերջին տարիներին գերազանցապես կազմված են աշխատանքային միգրացիայից. «Համաձայն վերադարձած միգրանտների վերաբերյալ 2008թ.-ի հետազոտության, Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերը 2002-2008թթ.-ի ընթացքում գերազանցապես կազմում էին աշխատանքային միգրացիան» *(ԱՄԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակ. 2009, էջ 11):*

Ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի զեկույցի, վերադարձող և ընթացիկ միգրանտներն ունեն հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները.

- Վերադարձածների գրեթե 2/3-ը և բացակաների մոտ 3/4-ը, տղամարդիկ են (հետազոտված ողջ համակցության և երկրի միջինը 48%) *(ՄԱԲՀ, Երևան, 2007)*,

[4] Ըստ փարձագիտական գնահատականների, 2002-2007թթ.-ին մեկնողների միայն 7%-ն է պաշտոնապես գրանցել իր մեկնումը: Ժամանողների դեպքում հարաբերակցությունը կազմել է 2%-ից էլ ցածր:

[5] Հարկ է նշել, որ գոնե մեկնումների աճող թիվը պայմանավորված էր այսպես կոչված ժողովրդագրական գործոնով. աշխատանքային տարիքի ժամանողների թիվը գերազանցում էր մեկնողների թիվը:

- Առաջինների 73.2%-ը և երկրորդների 82.8%-ը 20-54 տարեկան են (երկրի միջինը 53.3%),
- Ամուսնացած են վերադարձացների 70.6%-ը և բացակաների 67.5%-ը (ողջ համակցության միջինը 60.3%),
- Վերադարձածների 41.9%-ն ունեցել են ընդհանուր միջնակարգ, 24.8%-ը՝ միջին մասնագիտական, 21.1%-ը՝ բարձրագույն և բարձր կրթություն, բացակաների կրթական կառուցվածքն է համապատասխանաբար՝ 55.7%, 16.1% և 18.7% (ողջ համակցությանը՝ 40.9%, 17.5% և 21.6%),
- Աշխատանք ունեցած վերադարձացների 56.7%-ը զբաղված է եղել շինարարությունում, 15.3%-ն՝ առևտրում, 10%-ն՝ արդյունաբերությունում, բացակաների նույն թվերն են՝ հաջորդաբար 62.8%, 10.5% և 4.2% (վերջիններիս մոտ մեծ է նաև սպասարկման ոլորտում զբաղվածների բաժինը՝ գրեթե 7%),
- Արտերկրում գործազուրկ են/եղել են թե՛ բացակաների և թե՛ վերադարձացածների ընդամենը 2%-ից քիչ ավելին (միգրացիոն գործընթացներում չներառվածների թվում գրանցված գործազուրկ են եղել 8.5%, չգրանցված՝ անգամ 9%),
- Վերադարձացների 80.8%-ը և բացակաների 76.6%-ը գտնվել/գտնվում են ՌԴ-ում, ԱՊՀ այլ երկրներում են գտնվել/գտնվում առաջինների մոտ 5%-ը և երկրորդների՝ 3.4%-ը, եվրոպական երկրներում՝ նույն հաջորդականությամբ մոտ 5%-ը և 9.8%-ը, ԱՄՆ մասնաբաժինը կազմել է համապատասխանաբար մոտ 5% և 3.4%*(ՄԱԲՀ, Երևան, 2007, էջեր 40-72)*:

Ակնհայտ է, որ այս կառուցվածքային ցուցանիշները ևս վկայում են ներկայիս արտաքին միգրացիայի գերազանցապես աշխատանքային բնույթ կրելու մասին: Երկրորդ աղբյուրն, իր հերթին, ներկայացնում է աշխատանքային միգրանտների հոսքի կառուցվածքային առանձնահատկությունները: Ակտիվ աշխատանքային և վերարտադրողական տարիքի տղամարդկանց՝ 21-50 տարեկաններ, հոսքի ճնշող մեծամասնությունը կազմելը և կանանց մասնաբաժնի նվազումը 2002-2004թթ. 14.1%-ից, մինչև 6.5%-ի՝ 2005-2006թթ.: Արտերկրում 2005-2007թթ. աշխատանք փնտրած միգրանտների կեսից ավելի (53%) միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցած լինելը և այլն: *(Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային զրաստենյակ 2009, էջ 13-14)*: Հատկապես կարևոր է այս աղբյուրում բերված աշխատանքային միգրանտների այն գնահատականը, որ Հայաստանում ամսական միջին հաշվով 200000 դրամ (մոտ 570 ԱՄՆ դոլար) աշխատանքային վաստակով ապահովված լինելու դեպքում այլևս չէին մեկնի արտերկիր աշխատանքի *(Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային զրաստենյակ 2009, էջ 20)*:

Երկու աղբյուրները գործնականում նույնանման տեղեկատվություն են տրամադրում միգրացիայի պատճառների, ուղևորությունների պլանավորման և կազմակերպման ուղիների, աշխատանքային պայմանների և վաստակի, բնակարանային և ապրելակերպի պայմանների մասին:

Ուշադրության են արժանի նաև ԱՄԿ-ի կողմից բերված հետևյալ տվյալները:

Առաջին, վերադարձած աշխատանքային միգրանտների մրցունակությունը ներքին աշխատաշուկայում ընդհանուր առմամբ բարձրանում է: Երկրորդ, չնայած այն բանին, որ նրանք հմտությունների և տեխնոլոգիաների փոխանցման իմաստով դրական ազդեցություն են թողնում իրենց աշխատանքի ընդունող ընկերությունների վրա, այնուհանդերձ, նրանց օգուտը Հայաստանին ներդրումների, աշխատատեղերի ստեղծման և բիզնեսի զարգացման առումներով, ըստ երևույթին, սահմանափակ է *(Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային զրասենյակ 2009, էջ 2)*:

Այսպիսով միգրացիոն գործընթացների արդի փուլը, կարող է բնորոշվել երկու առավել կարևոր հայտանիշերով:

Առաջին, ձևավորվել է աշխատանքային միգրանտների բավական կայուն զանգված, որի շարժի արդյունքում տարեկան միջին հաշվով մոտ 15 հազար մարդ, կամ երկրի բնակչության ընդհանուր թվի 0.5-0.6%-ը, հավաքվում է արտերկրում:

Երկրորդ, տեղի ունեն ծավալային առումով ոչ մեծ մշտական արտաքին միգրացիոն հոսքերը, որոնք ևս կայուն կերպով ընթանում են բացասական մնացորդով *(ՄԱԶԾ, Երևան, էջ 47-48)*: Համաշխարհային Բանկի՝ միգրացիան և դրամական փոխանցումները հաշվետվության համաձայն, Հայաստանում 2010թ.-ին միգրացիոն պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 3. Արտագաղթածների մասնաբաժինը

Արտագաղթ, 2010	
Արտագաղթածների մասնաբաժինը	870, 200
Արտագաղթածների մասնաբաժինը բնակչության մեջ	28.2%
Տեղակայման երկրները	Ռուսաստանի դաշնությունը, ԱՄՆ, Ուկրաինա, Ադրբեջան, Վրաստան, Իսրայել, Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա, Հունաստան

Հարկ է նշել, որ առայժմ հիմքեր չկան կարծելու, որ վերջին երեք տարիների ընթացքում տվյալ իրավիճակը որակապես փոխված լինի: Ինչ վերաբերվում է քանակական փոփոխություններին, ապա այն փաստը, որ 2008-2010թթ. ընթացքում սահմանահատումների բացասական մնացորդը հստակ արտահայտված աճի միտում է դրսևորում (2008թ.՝ մոտ 23.1 հազար, 2009թ.՝ շուրջ 25 հազար, 2010թ.՝ գրեթե 30 հազար) *(Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2010, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2010թ),* թույլ է տալիս ենթադրել, որ այդպիսիք որոշակի շրջանակներում արդեն տեղի են ունեցել: Այլ բան է, որ առանց նոր հետազոտության հնարավոր չէ գնահատել, թե վերը նշված հոսքերից որին են դրանք առնչվել:

Դրամական փոխանցումներ

Հետխորհրդային Հայաստանի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական իրողությունների առումով միգրանտների դրամական փոխանցումների (ՄԴՓ) արտակարգ կարևորությունը հաստատվում է հետևյալ, առավել քան պերճախոս փաստերով *(Մարդկային զարգացման ազգային զեկույց 2009, ՄԱԶԾ, Երևան, 2010, էջ 118-122):*

- 2003-2007թթ. ՄԴՓ-ի համախառն գումարները կազմել են ՀՆԱ-ի 17-24%-ը:
- 2007թ.-ին, ՀՆԱ-ի մեջ ՄԴՓ-ի մասնաբաժնով ՀՀ-ն եղել է աշխարհի 20 առաջատար երկրների շարքում:

- ...վերջին 5 տարիների ընթացքում դրանց ծավալը միջինում մոտ 15 անգամ գերազանցել է պետական տրանսֆերտների ծավալը, բացի այդ 2004-2006թթ. ավելի քան 40, իսկ 2007թ. ավելի քան 85 անգամ գերազանցել է պետական մակարդակի այլ ֆինանսական աջակցությունների չափը:
  Բնակչության մեկ շնչի հաշվով ՄԴՓ-ի ցուցանիշով Հայաստանը 2.5-3 անգամով գերազանցում աշխարհի ՄԴՓ-ի առավել մեծ գումարներ ստացող 5 երկրներին:
- ՀՀ բոլոր տնային տնտեսությունների մոտ 36%-ը, (արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների 70%-ից ավելին) պարբերաբար դրամական փոխանցումներ է ստանում:

Խոսելով ՄԴՓ-ի մասին, հարկ է մատնանշել, որ այս դեպքում ևս լուրջ տեղեկատվական խնդիրներ կան : Նախ, չափազանց դժվար է ՄԴՓ-ի իրական ծավալների գնահատումը: Դա պայմանավորված է թե՛ նրանով, որ ՄԴՓ-ի մի մասը գալիս է ոչ պաշտոնական ուղիներով (այդ թվում անհատների՝ նաև անմիջականորեն միգրանտների միջոցով), և թե՝ հետազոտությունների դեպքում, ռեսպոնդենտների անկեղծ չլինելով: Այնուամենայնիվ Համաշխարհային Բանկի 2011թ-ին լույս տեսած միգրացիան և դրամական փոխանցումները հաշվետվությունը հիմնական տեղեկատվություն է տրամադրում 2003-2011-ի դրամաշրջանառության մասին *(տես աղյուսակ 4)*:

Աղյուսակ 4. Դրամական փոխանցումներ*

$ միլիոն	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Դրամական փոխանցումների ներհոսք	168	435	498	658	846	1,062	769	996	1,254
Աշխատողների դրամական փոխանցումներ	9	43	58	74	94	124	86	-	-
Աշխատողների հատուցում	153	382	429	576	743	929	677	-	-
Միգրանտների փոխանցումներ	6	10	11	8	9	9	7	-	-
Դրամական փոխանցումների արտահոսք	27	138	152	154	176	185	145	-	-
Աշխատողների դրամական փոխանցումներ	6	10	16	19	5	11	11	-	-
Գործատուների հատուցում	19	122	133	130	166	169	130	-	-
Միգրանտների փոխանցումներ	2	6	3	6	5	5	4	-	-

*Համաշխարհային բանկի «Միգրացիան և դրամական փոխանցումները» տարեգիրք 2011

Դրամական փոխանցումների մասնաբաժինը տնտեսության ՀՆԱ նկատմամբ նույն աղբյուրի համաձայն կազմում է 8.8% (*Համաշխարհային բանկի «Միգրացիան և դրամական փոխանցումները» տարեգիրք 2011*):

Հայաստանի կոմերցիոն բանկերից օգտվող անհատների միջև ոչ կոմերցիոն դրամական փոխանցումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 5. ՀՀ Կենտրոնական բանկ, ՀՀ կոմերցիոն բանկերից օգտվող անհատների միջև ոչ կոմերցիոն դրամական փոխանցումները

	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ներհոսք	752,819	960,926	1,319,479	1,635,307	1,124,119	1,293,736	1,546,959
Որից	-	-	-	-	-		
Ռուսաստան	541,308	739,419	1,078,218	1,371,066	904,011	1,062,266	1,295,163
ԱՄՆ	82,628	94,491	76,571	60,958	59,288	67,789	74,380
Արտահոսք	189,793	208,436	261,170	242,240	194,884	221,763	264,602
Որից	-	-	-	-	-		
Ռուսաստան	83,537	107,835	129,126	122,759	99,524	116,950	141,352
ԱՄՆ	30,671	13,295	23,764	32,110	23,332	24,554	27,331
Զուտ ներհոսք	563,025	752,490	1,058,310	1,393,067	929,235	1,071,973	1,282,357
Որից	-	-	-	-	-		
Ռուսաստան	457,771	631,584	949,092	1,248,307	804,487	945,316	1,153,811
ԱՄՆ	51,958	81,196	52,808	28,848	35,956	43,235	47,049

Այնուհանդերձ, ՄԴՓ-ի վերաբերյալ առկա հետազոտական և վերլուծական նյութերը ներկայացնում են հետևյալ կարևոր տվյալները և գնահատականները:

- ՄԴՓ-ը նպաստում են անհավասարության (Ջինիի գործակից) և աղքատության կրճատմանը և դրականորեն են ազդում ՀՀ տնային տնտեսությունների կենսամակարդակի վրա *(Զարգացման Ասիական Բանկ, 2007-2008)*:
- Վեջինս, ինչպես նաև ՄԴՓ-ի կարևոր դերակատարումը Հայաստանի բնակչության մի զգալի մասի կրթական և առողջապահական կարիքների բավարարման գործում, անվերապահորեն վկայում է դրանց մարդկային զարգացման կարևոր գործոն հանդիսանալու մասին *(Եգանյան Ռ., Դավթյան Լ., Երևան, 2001, էջ 30-37)*:
- Միգրանտների 80%-ը իրենց ընտանիքներին գումար է ուղարկում եռամյակը առնվազն մեկ անգամ, իսկ տնային տնտեսությունների մոտ մեկ հինգերորդը իրենց ընտանիքի անդամներից դրամական փոխանցումներ է ստանում ամեն ամիս *(ԱՄԿ, Երևան, 2009)*:
- Տնային տնտեսությունների մոտ 80%-ը ստացված ՄԴՓ-ների ավելի քան 90%-ը ծախսում է ընթացիկ սպառման կարիքների վրա: Մնացած մասը խնայվում է հետագա սպառման, հետագա ներդրման, ապագա կրթության և հատուկ դեպքերի համար՝ հարսանիք, կացարանի ձեռք բերում/նորոգում/ կահավորում և այլն *(ՄԱԶԾ, Երևան, 2010):*
- 2005թ.-ին ՄԴՓ-ների մոտ 77%–ը ուղարկվել է ՌԴ-ից, 11%-ը ԱՄՆ-ից, 3,2%-ը Ուկրաինայից և 1,4%-ը՝ Ֆրանսիայից *(ՄԱԶԾ, Երևան, 2010, էջ 122):*
- ՌԴ-ից ՄԴՓ-ները հիմնականում իրականացվում են բանկային համակարգի միջոցով (2006թ.-ին 84%-ը): ԱՄՆ-ի դեպքում բանկերից ավելի քիչ են օգտվում (2006-ին՝ 36%), այստեղ էմիգրանտներն ավելի շատ նախընտրում են հատուկ կազմակերպությունների միջոցով փոխանցումները *(ՄԱԶԾ, Երևան, 2010, էջ 123)*:
- Տնային տնտեսությունների 9%-ին հաջողվում է խնայել իրենց եկամտի մինչև 20%-ը: Սակայն պետք է նշել, որ այս խնայողությունները գրեթե չեն պահվում բանկերում (տնային տնտեսությունների 97%-ը իրենց խնայողությունները չի

պահում բանկային համակարգում) (*ԱՄԿ, հետազոտական արդյունքներ, 2008*):

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ տրամադրող հիմնական երկրները ներկայացված են ստորև (Մ. Հերգնյան, Ա. Մակարյան, 2006թ., Երևան):

Ռուսաստան: Սփյուռքի ամենամեծ թվով ներդրողները եկել են Ռուսաստանից (բոլոր ներդրողների 29%-ը), որոնց 76%-ը ներդրումներ է կատարել Երևանում: 1994-2004թթ.-ի ներդրումների փաթեթում գերակշռող մեծամասնությունը ծառայությունների ոլորտում կատարված ներդրումներն էին (ներդրողների 70%-ը): Ռուսաստանի հայերը հակված են ներդրումներ անել գլխավորապես առևտրի բնագավառում (ծառայությունների ոլորտի ներդրողների 55%-ը): Ռուսաստանահայ սփյուռքի և տեղական ներդրողների հարաբերություններում գերակշռողը ընտանեկան, ընկերական և ազգակցական կապերն են:

Միացյալ Նահանգներ: Ներդրողների երկրորդ մեծ խումբը Միացյալ Նահանգներից է (17%): Ամերիկահայերի մեծամասնությունը ներդրումներ է կատարել ծառայությունների ոլորտում (ներդրողների 62%-ը): Ներդրողների միայն 36%-ն է ներդրումներ կատարել առևտրի ոլորտում: Ներդրողների 25%-ը ներդրումներ է կատարել մշակող արդյունաբերությունում, որից 30%-ը եղել է հագուստի, թանկարժեք քարերի և զարդեղենի արտադրության ոլորտում, իսկ 7%-ը՝ շինարարության ոլորտում:

Իրան: Ներդրողների երրորդ մեծ խումբը եկել է Իրանից (14%): Այս սփյուռքի ներդրողների մեծամասնությունը ներդրումներ է կատարել ծառայությունների ոլորտում (ներդրողների 62%, որի 53%-ը՝ առևտրում): Իրանահայերի 30%-ը ներդրումներ է կատարել մշակող արդյունաբերության մեջ (որից 32%-ը՝ քիմիկատների արտադրության մեջ): Ներդրողների միայն 4%-ն է ներդրումներ կատարել շինարարության ոլորտում:

Տնտեսության կոնկրետ ճյուղում ներդրողների բաժինը տարբեր է տարբեր երկրներում (Բելգիան և Կանադան տիրապետող են թանկարժեք քարերի և զարդեղենի ոլորտում, Մեծ Բրիտանիա՝ դեղորայքի և քիմիկատների արտադրություն):

Որպես ամփոփում պետք է նշել, որ սկսած 2004թ.-ից, միգրանտներից ստացվող դրամական փոխանցումները շարունակաբար կորցրել են իրենց արժեքը ոչ միայն գնաճի պատճառով, այլև հիմնականում դրամի փոխարժեքի փոփոխությունների պատճառով: Այս իմաստով ՄԱԶԾ-ի փորձագետների գնահատումներն ավելի քան ուշագրավ են: Ըստ այդ գնահատման, եթե 2004թ.-ին թե՛ փոխարժեքի փոփոխություններով և թե՛ գնաճով պայմանավորված դրամական փոխանցումները կորցրեցին իրենց արժեքի 12.7%-ը, ապա 2005-ին այդ մասնաբաժինը կազմեց ավելի քան 25%, 2006-ին և 2007-ին՝ համապատասխանաբար՝ 33% և 46%: Որպես արդյունք, դրամական փոխանցումների հոսքը իրականում աճեց միայն 20%-ով

(2004թ.-ի 710.2 ԱՄՆ դոլարի դիմաց՝ 863.4 մլն 2007-ին), թեև դրամական փոխանցումների հոսքերը կրկնապատկվեցին (2004-ի 813մլն-ի դիմաց 1.600 մլն ԱՄՆ դոլար 2007-ին) *(ՄԱԶԾ, Երևան, 2010)*:

1.2. Աշխատաշուկան և կրթական զարգացումները

Տնտեսական դժվարությունները և աշխատաշուկայում եղած անհավասարակշռությունները պատճառ են հանդիսացել և շարունակում են ժամանակավոր միգրացիոն հոսքերի և վերադարձողների թվաքանակի նվազման պատճառ հանդիսանալ:[6]

Ներքևի աղյուսակներում ներկայացված են աշխատաշուկայի հիմնական ցուցիչների վերաբերյալ պաշտոնական տվյալները: Համաձայն այդ տվյալների, վերջին տարիներին աշխատանքի մասնակցության (աշխատուժի մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսներում) մակարդակը մնացել է ցածր և նույնիսկ ավելի է անկում ապրել, և գործազրկության պաշտոնական գործակիցը շարունակում է մնալ տնտեսապես ակտիվ բնակչության 7%-ը: Սակայն համաձայն տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքների, գործազրկության իրական մակարդակը շատ ավելի բարձր է (տես աղյուսակ 6-ը): Հետաքրքրական է, որ իրական և պաշտոնական գործազրկության մակարդակն ավելի բարձր է կանանց, քաղաքային բնակչության և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում (տես աղյուսակ 4-ը և 5-ը):

[6]ԱՄԿ-ի կողմից 2008-ին իրականացված հարցման ընթացքում տրված այն հարցին, թե արդյոք միգրանտները «կվերադառնան և վերջնականապես բնակություն կհաստատեն Հայաստանում», Հայաստանում տնային տնտեսությունների 34-ը% նշել են, որ միգրանտները երբեք չեն վերադառնա մշտական բնակության, 13-ը% նշել են, որ կվերադառնան մի քանի տարուց, 33-ը % հավատում են, որ կվերադառնան երբ պայմանները բարելավեն, 20% այդ հարցին ոչպարողացան պատասխանել: Այ տնային տնտեսություններում, որտեղ կարծում են, որ միգրանտները կվերադառնան մշտական բնակության 63-ը% 0.5-3 տարին նշել է որպես վերադարձի առավել հավանական ժամանակահատված: Այն տնտեսությունները, որոնք նշել են, թե իրենց միգրանտները որոշ պայմանների դեպքում կվերադառնան, հիմնականում նշել են տնտեսական պայմանները. 64-ը% իրենց վերադարձը կապել են բարձր վարձատրվող աշխատանքի, իսկ 8-ը % նշել են, որ իրենց միգրանտները կվերադառնան, եթե «Հայաստանում իրավիճակը բարելավի», ինչի տակ նրանք հասկանում են հիմնականում տնտեսական պայմանները, այդ թվում առավել բարենպաստ բիզնես միջավայրը (ՄԱԶԾ, 2009, էջ. 124)

Աղյուսակ 6. Աշխատանքային ռեսուրսները, աշխատուժը, զբաղվածները և գործազուրկները (ըստ սեռի)

	2006	2007	2008	2009	2010
Մշտական բնակչություն, 1000 մարդ	3221.1	3226.5	3234.0	3243.7	3256.1
Աշխատանքային ռեսուրսներ [7], 1000 մարդ	2114.9	2171.4	2202.6	2237.5	2252.5
Աշխատուժ (տնտեսապես ակտիվ [8]բնակչություն, 1000 մարդ)	1181.3	1184.3	1192.5	1170.8	1188.1
Տնտեսական ակտիվության մակարդակ[9] (% աշխատանքային ռեսուրսների համեմատությամբ)	55.9	54.5	54.1	52.3	52.7
Տնտեսական պասիվության մակարդակ(% աշխատանքային ռեսուրսների համեմատությամբ)	44.1	45.5	45.9	47.7	47.3
Զբաղվածության մակարդակ[10] (% տնտեսապես ակտիվ բնակչության համեմատ)	92.5	93.0	93.7	93.0	93.0
Գործազրկության մակարդակ [11] (%տնտեսապես ակտիվ բնակչության համեմատ)	7.5	7.0	6.3	7.0	7.0
Գործազրկության մակարդակ, տղամարդիկ	4.1	3.9	3.2	4.0	4.2
Գործազրկության մակարդակ, կանայք	11.3	10.1	9.3	9.8	9.8
Գործազրկության մակարդակը 16-30 տարեկան երիտասարդների շրջանում	1.3	1.3	1.1	1.3	1.3

- Աղբյուր: ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջ 52, 54.

Աղյուսակ 7. Գործազրկության մակարդակն ըստ կրթության (տնտեսապես ակտիվ բնակչության համեմատ, %)

Կրթություն	Ընդհամենը		Արական		Իգական		Քաղաք[12]	Գյուղ
	2009	2010	2009	2010	2009	2010	2010	
Ընդամենը	**15.0**	***19.0***	**14.4**	**17.0**	**15.7**	***21.2***	**27.9**	**6.2**
Տարրական և ցածր	4.6	4.5	6.7	8.0	2.8	1.7	23.5	0.1
Հիմնական դպրոց	12.1	14.9	14.4	18.0	8.2	9.2	31.9	3.9
Ավագ դպրոց/վարժարան	14.7	19.2	15.4	18.7	13.9	19.8	32.5	6.4
Նախնական մասնագիտական	17.2	20.1	15.5	16.7	19.7	25.9	30.0	5.4
Միջին մասնագիտական	16.8	19.9	13.4	13.9	19.6	25.0	27.7	5.3
Բարձրագույն (բակալավր և մագիստրոս)	15.4	***20.0***	13.3	16.9	17.4	22.9	22.5	9.9
Հետբարձրագույն (ասպիրանտուրա և այլն)	28.9	8.5	9.5	3.9	52.9	13.0	8.8	5.6

- Աղբյուր: ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրոտվյալների բազա (ըստ տնային տնտեսության անդամների), 2009, 2010.

Ըստ տնային տնտեսությունների հետազոտությունների միջոցով հավաքված տվյալների, գործազրկության մակարդակը միջնակարգից բարձր կրթություն ունեցող մարդկանց շրջանում զգալի աճ է գրանցել 2009-ից մինչև 2010թթ.-ին, բացառությամբ հետբուհական մակարդակի կրթության, որտեղ կարելի է տեսնել նվազում հիմնականում կանանց գործազրկության պարագայում: Սա ցույց է տալիս,

[7] Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ և ոչ ակտիվ բնակչության հանրագումարն են:

[8] Տնտեսական ակտիվության վերաբերյալ, ըստ սեռի տարիքի և բնակավայրի, առավել մանրամասն տեղեկատվությունը կարող եք գտնել հավելվածում՝ աղյուսակ 1-ում:

[9] Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր ստեղծում են աշխատանքի շուկան՝ (աշխատուժի առաջարկի մասով) ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

[10] Զբաղվածների մեջ ներառվում են և վարձու և ոչ վարձու աշխատողները՝ անկախ նրանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա: Զբաղվածներ են համարվում նաև տվյալ ժամանակահատվածում տարբեր պատճառներով աշխատանքից ժամանակավորապես բացակայողները:

[11] Գործազրկության մակարդակը հաշվարկվում է գործազուրկների թվաքանակի տոկոսային հարաբերությամբ՝ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակին:

[12] 2009թ.-ի համար գործազրկության մակրադակն ըստ կրթության և քաղաք/գյուղ բաշխման ներկայացված չէ ԱՎԾ S/S հետազոտության բազայի հետ կապված տեխնիկական պատճառներով:

որ Հայաստանում աշխատանք գտնելու խնդիր ունեն հատկապես միջնակարգից բարձր կրթություն ունեցող մարդիկ, որը կարող էր հանդիսանալ միգրացիայի շարժառիթ: Սակայն բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում գործազրկության ավելի բարձր մակարդակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նրանք ավելի են հակված ակտիվորեն աշխատանք փնտրելու, իսկ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները դրա փոխարեն պարբերաբար մտնում են (տնտեսական) անգործության փուլ՝ գյուղատնտեսական գործունեության կամ տնային տնտեսությունում աշխատելու տեսքով:

Աղյուսակ 8-ում ներկայացված բնակչության բաշխվածությունն ըստ կրթական մակարդակի, ցույց է տալիս, որ բնակչության գրեթե մեկ հինգերորդն ունի բարձրագույն կրթություն: Սա նշանակում է, որ համադրվելով այս խմբին բնորոշ բարձր և աճող գործազրկության մակարդակի հետ՝ առաջիկա տարիներին ուղեղների արտահոսքը կարող է շարունակել մնալ հիմնախնդիր:

Աղյուսակ 8. Բնակչության բաշխում (ըստ կրթամակարդակների, %)

Կթմակարդակն ավարտական վկայականով	%
Տարրական և ցածր	2.1
Հիմնական դպրոց	10.4
Ավագ դպրոց/վարժարան	45.2
Նախնական մասնագիտական	2.2
Միջին մասնագիտական	21.3
Բարձրագույն (բակալավր և մագիստրոս)	18.4
Հետբարձրագույն (ասպիրանտուրա և այն)	0.5

- Աղբյուր: ԱՎԾ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանազերծված միկրոտվյալների բազա (ըստ տնային տնտեսության անդամների), 2010. (տես նաև գծապատկեր 1-ը հավելված 2-ում)

Սակայն հավանական է, որ կրթության հանդեպ հայերի ունեցած ձգտումն ուժեղ է՝ անկախ շուկայական պայմաններից. ըստ ՅՈՒՆԵՍԿՈ-ի վիճակագրության ինստիտուտի, 2010թ.-ին Հայաստանում գրանցվել են սովորողների հավաքագրման հետևյալ մակարդակները.

- երեխաների 31%-ն ընդունվել է տարրական հիմնարկներ:
- երեխաների 92%-ն ընդունվել է միջնակարգ դպրոց: Աղջիկների 88%-ը և տղաների 85%-ը սովորում է միջնակարգ դպրոցում:
- բարձրագույն կրթության տարիքի բնակչության 52%-ը ստանում է բարձրագույն կրթություն[13]:

Գյուղական վայրերում գործազրկության ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է աշխատուժի զբաղվածությամբ ցածր արտադրողական, աշխատատար և ոչ բարձր եկամուտ բերող գյուղատնտեսական ոլորտում, որը մարդկանց մղում է փնտրելու աշխատանքային միգրացիայի հնարավորություններ:

[13] Տես՝ http://stats.uis.unesco.org/unesco/TableViewer/document.aspx?ReportId=121&IF_Language=eng&BR_Country=340&BR_Region=40505

Տնտեսական զարգացման վերելքներին ու վայրէջքներին զուգահեռ վերջին երկու տասնամյակներին զբաղվածությունը նույնպես անցավ էական կառուցվածքային փոփոխությունների միջով. արդյունաբերության ոլորտում զբաղվածների մասնաբաժինը 1991թ.-ի 27.4%-ից 2010թ. նվազեց 10.2%-ի: Շինարարության ոլորտում այս ցուցանիշը կազմեց համապատասխանաբար 10.6% և 7.2%, սպասարկման ոլորտում զբաղվածների մասնաբաժինը համեմատաբար կայուն է եղել (38.7%՝ 1991-ին և 38%՝ 2010-ին), իսկ ահա զբաղվածների մասնաբաժինը գյուղատնտեսության ոլորտում կայուն կերպով բարձր է մնացել՝ մոտ 38.6% 2010թ.-ին: Արժե հիշեցնել, որ 2010թ.-ին գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ նկատմամբ եղել է ընդամենը 16.8%, այսինքն՝ այստեղ արտադրողականության մակարդակը մոտավորապես երեք անգամ ավելի ցածր է, քան ընդհանուր տնտեսության միջին ցուցանիշը: Համապատասխանաբար, եկամուտները շատ ավելի ցածր են, և պետք է ակնկալել, որ գյուղական վայրերից շատ ավելի մեծ միգրացիոն հոսքեր կլինեն:

Ըստ Աշխատուժի հետազոտության (LFS) տվյալների, 2010թ.-ին զբաղվածների 19.4%-ը ներգրավված էր ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ մեկանգամյա աշխատանքներում (2008-ին՝ 24.4%, որոնց 41%-ը ինքնազբաղվածներն էին): Սա նշանակում է, որ բնակչության մի մեծ մասնաբաժին, ըստ էության, պաշտպանված չէ տնտեսական ռիսկերից: Գործազուրկների բանակը համեմատաբար երիտասարդ է: Ըստ LFS-ի տվյալների, 2010թ.-ին երիտասարդների (16-24 տարեկան) բաժինը գործազուրկների ընդհանուր թվում կազմել է 27.5% (ընդհանուր բնակչության մեջ եղած 17%-ի դիմաց) (տես Հավելված 1-ի աղյուսակ 1-ը): Այսպիսով, պետք է ակնկալել լայնամասշտաբ միգրացիա, հատկապես երիտասարդների շրջանում, հատկապես ի նկատի ունենալով մասնագիտական առումով գործազուրկների կազմի և աշխատաշուկայում պահանջարկված աշխատատեղերի կառուցվածքի միջև եղած անհամապատասխանությունը:[14]

Շուկայական տնտեսության անցմանը զուգահեռ, բնակչության, հատկապես գյուղական բնակչության, կենսամակարդակը էականորեն վատթարացել է: Որպես արդյունք, 1990թ.-ին (նույնիսկ ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ) հաջողությամբ իրականացված հողային բարեփոխումների ազդեցությունը փոխեց գյուղատնտեսության ամբողջ կառուցվածքը: Գյուղմթերքի վերամշակման հնարավորությունների բացակայությունը, գյուղտեխնիկայի պակասը և տնեսությունների փոքր չափերով պայմանավորված՝ գյուղատնտեսության բնագավառում առաջավոր տեխնոլոգիաների օգտագործման սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև զբաղվածության հնարավորությունների բացակայությունը ավելի մեծ ծավալով նպաստեցին միգրացիոն գործընթացներին, քան մայրաքաղաքում և քաղաքային այլ վայրերում:

[14]Ուսանողների շրջանում իրականացված հետազոտությունը վկայում է այն մասին, որ առողջապահությունը և մանկավարժակությունը դեռևս ամենատարածվածն են: Չնայած նրան, որ այդ մասնագետները գործազրկության ամենաբարձր տոկոսն ունեն, և ընտրությունն իրականացվել է հիմնականում երիտասարդների կարծիքների հիման վրա, բայց ցածր տոկոս կազմող այլընտրանքային տեսակետները նույնպես նշանակալի դեր են ունեցել (Կուդդո, 2009, էջ. 43).

Հայաստանից 2008-2009թթ. աշխատանքային միգրացիայի վերաբերյալ ԱՄԿ-ի 2010թ.-ի ուսումնասիրությունը փորձեց բացատրություն գտնել միգրացիոն ակտիվության մեջ եղած տարածաշրջանային տարբերությունների վերաբերյալ՝ տնտեսական ակտիվության և գործազրկության տարածաշրջանային ցուցանիշների դիտարկման հիման վրա: Հեղինակները պարզեցին, որ այն մարզերը, որոնք ունեն երկրի միջինից բարձր տնտեսական ակտիվության մակարդակ (այսինքն, աշխատունակ բնակչության մեջ աշխատողների կամ ակտիվորեն աշխատանք փնտրողների միջինից բարձր տոկոսային հարաբերություն՝ ի հակադրություն նրանց, ովքեր աշխատանք չեն փնտրում) և երկրի միջինից ցածր գործազրկության մակարդակ (այսինքն, տնտեսապես ակտիվ բնակչության մեջ չաշխատողների միջինից բարձր տոկոսային հարաբերություն), ունեն ավելի բարձր միգրացիոն ակտիվություն (ԱՄԿ, 2010): Հետևաբար, միգրացիոն արտահոսքերն ավելի ուժեղ են այն մարզերում, որտեղ կա գործազրկության միջինից բարձր մակարդակ՝ Շիրակում, Լոռիում և Կոտայքում (գործազրկության մարզային ցուցանիշները տես Հավելված 1-ի Աղյուսակ 3-ում):

1.3. Օրենսդրական դաշտը և միգրացիոն քաղաքականությունը

Չունենալով ժողովրդավարության պայմաններում ինքնուրույն միգրացիոն քաղաքականության վարման ոչ փորձառություն, ոչ գործող օրենսդրական դաշտ և ոչ համարժեք վարչական համակարգ, ունիտար տոտալիտար պետության բաղկացուցիչ մասերից մեկի իրավահաջորդ նորանկախ Հայաստանի հանրապետությունն, իր գոյության առաջին իսկ օրերից ստիպված է եղել օպերատիվ գործունեություն ծավալել արտակարգ բնույթի մասսայական միգրացիոն հոսքերի, դրանցով պայմանավորված տարաբնույթ հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ: Զուգահեռաբար, աշխատանքներ են տարվել միգրացիոն կարգավորման իրավա-օրենսդրական դաշտի և իստիտուցիոնալ կառույցների ստեղծման ուղղությամբ:

Նախ, 1995թ.-ին, ընդունվել է «Հայաստանի հանրապետության օրենքը Հայաստանի հանրապետության քաղաքացիության մասին» (06.11.1995): Մինչ այդ, դեռևս 1993թ. Հայաստանը միացել էր Միացյալ Ազգերի Կազմակերպության «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ.-ի կոնվենցիային, որի տրամաբանական շարունակությունը՝ համապատասխան ազգային օրենսդրության մշակումը, սակայն, տեղի է ունեցել զգալիորեն ավելի ուշ: «Փախստականների մասին» օրենքը ընդունվել է միայն 1999թ. (03.03.1999), 1988-1992 թվականներին «Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» օրենքը 2000թ. (06.12.2000): Դեռևս նախորդ վարչակարգի օրոք՝ 1990թ., ստեղծված փախստականների հարցերով զբաղվող առանձին պետական մարմինը, 1995թ., կառավարության կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, վերակազմավորվեց Աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանման: Ինչը, սակայն, էական նշանակություն չունեցավ, քանի որ նախորդի նման, նոր կառույցին ևս չվերապահվեցին քաղաքականության մշակման և իրականացման համակարգման գործառույթներ:

Այսպիսով, ընդհուպ մինչև 2000-ականների սկիզբը, Հայաստանի պետական միգրացիոն քաղաքականությունը, ըստ էության, պարփակված էր միայն փախստականների հիմնախնդիրների լուծման շրջանակներում:

Հետագա տարիներին իրավիճակը փոխվեց: Ընդունվեցին «Քաղաքական ապաստանի մասին» (26.09.2001), «Պետական սահմանի մասին» (2001թ.՝ 1.5.), «Բնակչության պետական ռեգիստրի մասին» (20.11.2001) օրենքները: Դրանց հաջորդեցին «Օտարերկրացիների մասին» (25.12.2006) օրենքի ընդունումը, որով կանոնակարգվեցին օտարերկրացիների մուտքի և ելքի, կացության կարգավիճակի, աշխատանքի, կամավոր հեռանալու և արտաքսման և այլն հարցերը: 2007թ. ընդունվեց «Քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը (26.02.2007), որով հաստատվեց երկքաղաքացիության իրավունքը:

Վերջապես, 2008թ. ընդունվեց «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը (27.11.2008), որով օտարերկրացիներին ապաստանի տրամադրման օրենսդրական համակարգը համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին: Թվարկված, ինչպես նաև միգրացիոն գործընթացների պետական կարգավորման հետ առնչվող մի շարք այլ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ ձևավորվեց միգրացիոն պետական քաղաքականության վարման համար անհրաժեշտ որոշակի իրավա-օրենսդրական դաշտ:

1993-2000թթ.-ի ընթացքում Հայաստանը ստորագրել է 4 երկկողմ համաձայնագրեր հետևյալ երկրների հետ.

- Վրաստան (1993)
- Ռուսաստան (1994)
- Ուկրաինա (1995)
- Բելառուս (2000)

Այս 4 համաձայնագրերը վերաբերում են աշխատանքային միգրացիայի կարգավորմանը: Բայց, փաստորեն, իրականացման մեխանիզմի բացակայության պատճառով այս համաձայնագրերը պատշաճ կերպով չեն գործում և պետք է վերանայվեն: Որոշակի առաջընթաց կա Ռուսաստանի հետ. Հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի շրջանակում ռուսական կողմը մշակել է համաձայնագրի նոր տարբերակի առաջարկ: Աշխատանքային խումբը երկու հանդիպում է ունեցել, առաջինը՝ Մոսկվայում, 2010-ի հունիսին, երկրորդը՝

Երևանում, 2011-ի հունիսին: Վերջերս լրացուցիչ համաձայնագիր է նախաձեռնվել Քատարի հետ՝ «Հայաստանի աշխատուժի ինտեգրումը Քատարում»:

Այս ընթացքում կնքվել են նաև միջկառվարական երկկողմ հարաբերություններ ավելի քան 10 երկրների հետ: Ամենավերջին երկկողմ հարաբերությունները հետևյալն են.

- «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հետընդունման /ռեադմիսիայի/ մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2010թ. օգոստոսի 20-ին, ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 14-ին),
- «Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2010թ. մայիսի 17-ին, ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 1-ին),
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Նորվեգիայի Թագավորության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2010թ. հունվարի 29-ին, ուժի մեջ է մտել 2010թ. հունիսի 26-ին),
- «Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների /Բելգիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և Նիդեռլանդների Թագավորության/ միջև անօրինական բնակություն հաստատած անձանց վերադառնալու մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2009թ. հունիսի 3-ին),
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Շվեդիայի թագավորության կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2008թ. նոյեմբերի 7-ին, ուժի մեջ է մտել 2009թ. ապրիլի 19-ին),
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2007թ. նոյեմբերի 13-ին, ուժի մեջ է մտել 2009թ. ապրիլի 19-ին)
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու և տարանցիկ փոխադրելու մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2006թ. նոյեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 2008թ. ապրիլի 20-ին)
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2003թ. հոկտեմբերի 30-ին, ուժի մեջ է մտել 2005թ. մարտի 1-ին)
- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիտվայի Հանրապետության կառավարության միջև առանց թույլտվության ապրող անձանց հետընդունման /ռեադմիսիայի/ մասին» համաձայնագիր (ստորագրվել է 2003թ. սեպտեմբերի 15-ին, ուժի մեջ է մտել 2004թ. մայիսի 22-ին)

- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դանիայի Թագավորության կառավարության միջև առանց թույլտվության գտնվող անձանց հետ ընդունելու մասին»համաձայնագիր (ստորագրվել է 2003թ. ապրիլի 30-ին, ուժի մեջ է մտել 2004թ. հունվարի 1-ին)
- «ՀՀ կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների ժամանակավոր աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին» համաձայնագիր (ուժի մեջ է մտել 2001թ. մայիսի 24-ին)
- «ՀՀ կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին» համաձայնագիր (ուժի մեջ է մտել 1997թ. մարտի 12-ին)
- «ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքային գործնեության և սոցիալական պաշտպանության մասին» միջկառավարական համաձայնագիր (ուժի մեջ է մտել 1994թ. հուլիսի 19-ին):

Ռեադմիսիոն համաձայնագրերը հիմնականում նպատակ են հետապնդում անօրինական միգրացիայի բացահայտման և կանխմանն ուղղված ընթացակարգերի կարգավորումն ու իրականացումը: Ռեադմիսիոն համաձայագրերը վերադարձող միգրանտների համար հնրավարություն են ընձեռում վերաինտեգրվել հասարակությանը:

Հայաստանը միացավ ՄԱԿ-ի «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954թ-ի և «Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին» 1957թ-ի, Եվրոպայի Խորհրդի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ-ի, և «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» 1995թ.-ի, Աշխատանքի Միջազգային Կազմակերպության «Աշխատանքի և զբաղմունքների բնագավառում խտրականության մասին» 1958թ.-ի, «Զբաղվածության համար միգրացիայի մասին» 1949թ.-ի թիվ 97 /վերանայված/ կոնվենցիաներին և «Աշխատանքային միգրանտների մասին» N 86 երաշխավորությանը:

2000թ. ստեղծվեց միգրացիոն քաղաքականության մշակման և իրականացման իրավասություններ ունեցող պետական կառավարման մարմին՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր փախստականների և միգրացիայի վարչությունը : Այն սակայն 2005թ. վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության (այսուհետ՝ՀՀ ՏԿՆ) կառուցվածքում գործող գործակալության՝ զրկվելով միգրացիոն

քաղաքականության մշակման ու համակարգման իրավասություններից (այս իրավասություններով օժտվեց ՀՀ ՏԿՆ-ն): 2009թ. տարեվերջին ՀՀ ՏԿՆ-ի կազմում ստեղծվեց Միգրացիոն պետական ծառայությունը, որին վերապահվեց ոլորտում քաղաքականության մշակման գործառույթների համակարգումը:

Միգրացիոն քաղաքանության համակարգման, արդյունավետության բարձրացման նպատակով 2000թ. (ՀՀ կառավարություն, Երևան, 2000) մշակվեց և կառավարության կողմից ընդունվեց «Միգրացիայի պետական կարգավորման» հայեցակարգային փաստաթուղթը, որը 2004թ. (ՀՀ կառավարություն, Երևան, 2004) ենթարկվեց լրամշակման: Սակայն, վերջին շրջանում միգրացիոն իրավիճակում տեղի ունեցած վերը ներկայացված տեղաշարժերը, էլ ավելի մեծ չափով, ֆինանսական ճգնաժամի և դրա հետևանքների բերումով միգրացիոն գործընթացների բացասական ազդեցության խորացումը և դրական ներգործության թուլացումը, վերջապես երկրի միգրացիոն կառավարման ոլորտում տեղի ունեցած օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխությունները, խնդիր դրեցին լրջորեն վերանայելու միգրացիոն քաղաքականության հայեցակարգային դրույթները:

Նոր հայեցակարգը մշակվեց և ընդունվեց 2010թ *(ՀՀ կառավարություն, դեկտեմբեր 30, 2010)*՝ արձանագրելով, որ «... միգրացիայի պետական կարգավորման համակարգը նախընթաց փուլերում որդեգրած իր քաղաքական մոտեցումներով, ինստիտուցիոնալ և կառավարչական մեխանիզմներով ի զորու չէ արդյունավետորեն լուծել Հայաստանի Հանրապետության առջև ծառացած միգրացիոն հիմնախնդիրները»: *(ՀՀ կառավարություն, դեկտեմբեր 30, 2010, էջ 5)*: Այս փաստաթուղթն, ըստ էության, հռչակում է երկրի միգրացիոն քաղաքականության նոր փուլի սկիզբը՝ «...հասունացել է պասիվ-հայեցողական և օպերատիվ-արձագանքողական քաղաքականությունից պրոակտիվ-կանխատեսողական միգրացիոն քաղաքականության անցման անհրաժեշտությունը: Այն ենթադրում է միգրացիոն գործընթացների պետական կարգավորման նոր մոտեցումների որդեգրում, համակարգի արդյունավետ գործառնությունն ապահովելուն ուղղված օրենսդրական, ինստիտուցիոնալ և կառավարչական մեխանիզմների կատարելագործում…»:

Ներկայումս Հայաստանում միջազգային միգրացիայի խնդիրների վերաբերյալ քաղաքականության և վարչարարության որոշումների կայացմանը մասնակցող կամ իրենց լիազորությունների շրջանակում այդ խնդիրների համար պատասխանատու գերատեսչություններն են.

- <u>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը</u> (աշխատանքի և զբաղվածության վարչություն)՝ աշխատանքային միգրացիայի մասով:
- <u>Տարածքային կառավարման նախարարությունը (ՏԿՆ)</u>. միգրացիայի կառավարման քաղաքականության մշակման և դրա իրագործման համակարգման, աշխատանքային միգրացիայի պետական

քաղաքականության մշակման և աշխատանքային միգրացիայի կազմակերպման մասով:

- ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունը. ոլորտում քաղաքականության մշակման գործառույթների համակարգման, միգրացիայի կառավարման և փախստականների խնդիրների լուծման նպատակ հետապնդող ծրագրերի մշակման և իրագործման մասով:
- Արտաքին գործերի նախարարությունը (իրավաբանական վարչություն, հյուպատոսական վարչություն, միգրացիայի բաժին՝ պատասխանատու են վիզաների և անձնագրերի տրամադրման, արտերկրում գտնվող հայերի հետ հարաբերությունների համար):
- Սահմանապահ ծառայությունը (մտնում է Ազգային անվտանգության ծառայության մեջ, հաշվետու է վարչապետին և պատասխանատու է սահմանների կառավարման և հսկողության համար):
- Վիզաների և անձնագրերի բաժինը (մտնում է Ոստիկանության համակարգի մեջ, հաշվետու է վարչապետին և պատասխանատու է անկանոն միգրացիայի, սահմաններում վիզայի տրամադրման, երկրի տարածքում գտնվող օտարերկրացիների գրանցման, ինչպես նաև ՀՀ քաղաքացիներին ելքի թույլտվություն տալու համար):
- Նախագահի աշխատակազմը (զբաղվում է քաղաքացիություն շնորհելու հարցերով):

Որպես Հայաստանի միգրացիոն կարգավորման ներկայիս համակարգի հիմնական թերություններ, հատուկ այդ նպատակով 2008թ. իրականացված ուսումնասիրությունն առանձնացրել է հետևյալները.

«....- Ընդհանուր ուղղվածության պակաս, քաղաքականության զարգացման և իրականացման կարողությունների սահմանափակվածություն;

- Թերի իրավական դաշտ և մուտքի ու կացության վերաբերյալ հստակ չափանիշների բացակայություն;
- Միգրացիայի կառավարումը համակարգող միասնական պետական կառավարման մարմնի բացակայություն, խնդրով զբաղվող տարբեր գործակալությունների միջև պարտականությունների հստակ տարանջատման բացակայություն;
- Միգրացիայի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության փոխկապակցված համակարգի բացակայություն և միգրացիայով զբաղվող հաստատությունների միջև տվյալների փոխանակման համակարգերի թերզարգացվածություն:» *(ՄՄԿ, Երևան, մարտ 2008, էջ 9).*

«Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի» և իրականացման համար 2012-2016թթ.-ի համար նախատեսված գործողությունների պլանի վավերացումը Հայաստանում առկա վերջին զարգացումներն են, որոնք նպաստելու են միգրացիայի կարգավորմանը, ինչը կապահովի օրինական միգրացիա, աշխատուժի

շարժունություն, ապօրինի միգրացիայի արդյունավետ կանխարգելում և վերահսկում և վերադարձի հնարավորություններ:

1.4. Միջազգային գործակցություն և դոնորների գործունեությունը

2011թ.-ի հոկտեմբերի 27-ին ԵՄ-Հայաստան համատեղ շարժունության շուրջ գործընկերության ստորագրմամբ Հայաստանը դարձավ այն չորս երկրներից մեկը, որի հետ ԵՄ-ն և ԵՄ անդամ առանձին շահագրգիռ երկրները մուտք են գործել երկխոսության և գործակցության կոնկրետ շրջանակ՝ օրինական միգրացիայի, միգրացիայի և զարգացման և անկանոն միգրացիայի դեմ պայքարի ոլորտներում (մյուս երեք երկրներն են Կաբո Վերդեն, Մոլդովայի Հանրապետությունը, Վրաստանը): Շարժունության շուրջ գործընկերությունը նպատակ է հետապնդում պատշաճ կառավարվող միգրացիայի միջոցով բարելավել միգրանտների հնարավորություններն ու օգուտները հավասարապես թե՛ ուղարկող և թե՛ ընդունող երկրներում: Այն ուղղված է Հայաստանի և Եվրոպական Միության միջև անձանց տեղափոխությանը նպաստելուն, ժամանակավոր և շրջափուլային միգրացիան ներառյալ, միգրացիոն հոսքերի կառավարման բարելավմանը, ներառյալ անկանոն միգրացիայի կրճատումը, ինչպես նաև Հայաստանի զարգացման վրա միգրացիայի բացասական ազդեցության մեղմացմանը:

Շարժունության շուրջ գործընկերությամբ նախատեսված գերակայությունների լուծման ուղղությամբ ձեռնարկվում են կոնկրետ գործողություններ: Մասնավորապես, դրանք են Հայաստանում միգրացիայի կառավարման կարողությունների հզորացումը, ԵՄ անդամ կամ այլ երկրներից կամավոր կամ հարկադրաբար վերադարձող հայազգի միգրանտների սոցիալական և տնտեսական վերաինտեգրմանն աջակցությունը, միգրացիայի և զարգացման միջև ամրապնդվելու հեռանկար ունեցող կապերի ավելի լավ օգտագործումը և օրինական միգրացիայի (այդ թվում աշխատանքային և շրջափուլային միգրացիայի) հնարավորությունների և անկանոն միգրացիայի ռիսկերի վերաբերյալ իրազեկության ընդհանուր բարձրացումը: Միգրացիոն պետական ծառայության և հայաստանյան համապատասխան այլ շահագրգիռ կողմերի հետ գործակցությամբ, 2012թ.-ի երկրորդ կեսին իր գործունեությունը կսկսի կազմակերպությունների կոնսորցիում՝ Office Francais de l'Immigration et de l'Integration (OFII)-ի ղեկավարությամբ:

Միգրացիայի հարցերը մշտապես եղել են նաև դոնորների գործունեության ուշադրության կենտրոնում՝ կանոնավոր կերպով ներգրավելով և սերտորեն աշխատելով համապատասխան հայաստանյան հաստատությունների (հատկապես Պետական միգրացիոն ծառայության) հետ միասին և համագործակցելով ազգային ՀԿ-ների (օրինակ, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի՝ ՄԶՄԿ-ի) հետ: ԵՄ-ն ֆինանսավորել է զանազան նախագծեր, օրինակ՝ Հայաստանի միգրացիոն քաղաքականության աջակցության (որն իրականացրել է Բրիտանական խորհուրդը) և Միգրացիոն ռեսուրս կենտրոնների միջոցով Պետական միգրացիոն ծառայության ընտրված գրասենյակներում օրինական միգրացիային նպաստելու: ԵՄ անդամ պետությունները կարևոր դերակատարություն ունեն Հայաստան վերադարձող

միգրանտների վերաինտեգրման ծրագրերում, ինչպես նաև Հայաստանում միգրացիայի կառավարման վերստուգման և ամրապնդման գործում:

Ծրագրերը փորձում են նաև զբաղվել միգրացիայի՝ զբաղվածության ասպեկտով: ՄՄԿ-ի և ՄԶՄԿ-ի կողմից ֆինանսավորվող նախագծում փորձ է արվում նպաստել ԵՄ-ում աշխատուժի պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը՝ հայաստանյան մասնավոր հավաքագրող կազմակերպությունների և ԵՄ անդամ երկրների (Լեհաստան, Լիտվա, Բուլղարիա) համանման կազմակերպությունների միջև հարաբերությունների զարգացման միջոցով, նպատակ ունենալով իրականացնել աշխատուժի պահանջարկի (ԵՄ) և առաջարկի (Հայաստան) վերաբերյալ տեղեկատվության առցանց փոխանակում: Մյուս տարրը նպատակաուղղված է որակի չափորոշիչների մշակմանը՝ Ռուսաստան և ԵՄ մեկնող շրջափուլային միգրանտների խոցելիությանն անդրադառնալու նպատակով, մասնավորապես՝ սոցիալական ապահովության փոխանցումների և ֆինանսական փոխանցումների պարզեցումը և իրավական երաշխիքների բարելավումը:

ԵՄ-ն նաև 2012թ.-ի փետրվարի 27-ին բանակցություններ սկսեց Հայաստանի հետ վիզաների դյուրացման և վերընդունման վերաբերյալ2011թ. սեպտեմբերին Եվրոպական հանձնաժողովը առաջարկեց սկսել համապատասխան բանակցություններ: :

ԵՄ խորհրդատվական խումբը, Եվրամիության կողմից ֆինանսավորվող և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող՝ Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների գործընթացի նախապատրաստման, կնքման և իրականացման հարցում Հայաստանի իշխանություններին օգնության շրջանակում, կոնկրետ աջակցություն է ցուցաբերում միգրացիոն քաղաքականության ոլորտում: Խումբը մշտադիտարկում և խորհրդատվություն է ապահովում «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության իրականացման 2012-2016թթ. գործողությունների պլանի» իրականացման վերաբերյալ, զբաղվում է շարժունության գործընկերության և վիզաների դյուրացման վերաբերյալ իրազեկության բարձրացմամբ և Պետական միգրացիոն ծառայությանը խորհուրդներ տալիս միգրացիայի կառավարման առումով վերջինիս համակարգող դերի վերաբերյալ:

Գլուխ 2. Հետազոտության մեթոդաբանությունը

2.1. Հետազոտության նպատակները

Հետազոտության նպատակն էր տեղի իրավիճակի մասին տեղեկություններ տրամադրել ԵԿՀ-ին, ինչպես նաև Հայաստանում և Հայաստանից դուրս եղած շահագրգիռ բոլոր կողմերին, որը ներառում է՝

- տեղեկատվություն Հայաստանում միգրացիայի երևույթի և աշխատաշուկայի ու կրթության հարցերի հետ դրա կապի մասին,
- ընտրանքի ստեղծում և պոտենցիալ և վերադարձած միգրանտների հետ հետազոտության իրականացում,
- տեղեկատվություն միգրացիայի և ազգային օրենսդրության հաստատակարգային շրջանակի մասին,
- հայաստանյան համապատասխան շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների կազմակերպում:

Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել միգրացիայի մասին փաստերի վրա հիմնված քաղաքականության, հմտությունների և ԵԽ անդամ և համապատասխան գործընկեր երկրներում զբաղվածության բարելավմանը՝ հետազոտելով միգրացիայի և հմտությունների միջև եղած կապերը և աջակցելով ընդգրկված երկրների շահագրգիռ կողմերին:

2.2. Հետազոտության ոլորտները և հետազոտության հիմնական առանձնահատկությունները

Միգրացիայի վերաբերյալ հետազոտությունն ընդգրկել է Հայաստանի բոլոր 11 մարզերը, ներառյալ՝ քաղաքային և գյուղական համայնքները:

Հետազոտության և ընտրանքի կազմման մոտեցումները նախապատրաստել է ԵԿՀ-ն, որից հետո վերանայել և վերջնական տեսքի է բերել ՀՌԿԿ-ն՝ հաշվի առնելով Հայաստանի առանձնահատկությունները: Ստորև ներկայացված են հետազոտության հիմնական առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդը. համազգային ներկայացուցչական հետազոտություն:

Հետազոտության մեթոդաբանությունը. հարցվողների տանը կառուցվածքային հարցաթերթի միջոցով իրականացվող դեմառդեմ հարցազրույց: Դաշտային աշխատանքներում ներգրավված են եղել 74 զրուցավար և 10 խմբավար:

Նպատակային խմբեր. հետազոտությունն իրականացվել է երկու խմբերի՝ պոտենցիալ միգրանտների և վերադարձած միգրանտների հետ: Պոտենցիալ միգրանտ է համարվում Հայաստանում բնակվող 18-50 տարեկան յուրաքանչյուր քաղաքացի, ներառյալ թե արտագաղթելու մտադրություն ունեցողները և թե այդպիսի մտադրություն չունեցողները: Ուստի, պոտենցիալ միգրացիայի հետազոտության գլխավոր համախմբությունը 18-50 տարեկան բնակչությունն է: Այս

կառուցվածքը տարիքային նույն խմբի շրջանակում նաև ապահովում է ստուգիչ խմբի առկայությունը, որի ներկայացուցիչները արտագաղթելու ակտիվ մտադրություն չունեն:

«Վերադարձած միգրանտը» այն անձն է, ով

- հետազոտության անցկացման երկրից հեռացել է 18 տարեկանում կամ ավելի մեծ տարիքում,
- առնվազն երեք ամիս շարունակաբար աշխատել է արտերկրում,
- վերադարձել է ոչ ավելի քան տասը տարի առաջ,
- դաշտային աշխատանքի ժամանակ ներկա է և պատրաստ հարցազրույցի:

Հետազոտության գործիքները. գրավոր հարցաշար: Օգտագործվել է երկու հարցաշար՝ մեկը «պոտենցիալ միգրանտների» հարցման, մյուսը՝ «վերադարձած միգրանտների» հարցման համար: Հարցաշարերը մշակվել են ԵԿՀ-ի կողմից և ավարտուն տեսքի են բերվել ՀՌԿԿ-Հայաստանի օգնությամբ: Հարցազրույցի միջին տևողությունը պոտենցիալ միգրանտների հարցաշարի դեպքում եղել է 30 րոպե, իսկ վերադարձող միգրանտների հարցաշարի դեպքում՝ 36 րոպե:

Ընտրանքի չափը. 2630 պոտենցիալ միգրանտ և 1426 վերադարձած միգրանտ:

Դաշտային աշխատանքի ժամկետները. 2011թ. դեկտեմբերի 13-29-ը և 2012թ. հունվարի 07-30-ը:

2.3. Հետազոտության ռազմավարությունը

Հետազոտության ռազմավարությունը հիմնված է թե՛ որակական և թե՛ քանակական մեթոդների վրա, որոնք են՝

- երկրորդային հետազոտություն,
- փաստահավաք առաքելություն և հանդիպումներ տեղական շահագրգիռ կողմերի հետ,
- պոտենցիալ և վերադարձած միգրանտների համազգային ներկայացուցչական հետազոտություն,
- հավաքված փաստերի հիման վրա երկրի միգրացիոն նկարագրի մշակում:

2.4. Իրականացված աշխատանքների նկարագրությունը

Փուլ 1. Նախնական երկրորդային հետազոտություն

Երկրորդային հետազոտության նպատակն է ազգային միգրացիոն նկարագրի համար տրամադրել ելակետային տեղեկություններ: Այդ տեղեկությունները ներառում են վիճակագրական տվյալներ, օրենսդրական նյութեր և երկկողմ համաձայնագրեր, ինչպես նաև առկա հետազոտական և այլ նյութեր միգրացիայի և հարակից հարցերի վերաբերյալ, որոնք ստուգվել և վերլուծության են ենթարկվել նախագծի այս փուլում:

Փուլ 2. Փաստահավաք առաքելություն (2011թ.-ի հուլիսի 12–17)

Կազմակերպվեցին հանդիպումներ հայաստանյան հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ տեղական հետազոտական ընկերությանը՝ ՀՌԿԿ-ին մեթոդաբանության, ժամկետների և բովանդակության մասին իրազեկելու և հայաստանյան շահագրգիռ կողմերին հետազոտության ծրագրի և ժամանակացույցի մասին տեղեկացնելու, ինչպես նաև ՀՌԿԿ-ին համապատասխան աջակցության և հետադարձ կապի մասին պայմանավորվելու նպատակով: Շահագրգիռ կողմերի մեծ մասը բացահայտվեց հետազոտության (երկրորդային հետազոտության) առաջին փուլում:

ՀՌԿԿ-ի ներկայացուցիչների հետ միասին, ԵԿՀ-ն այցելեց Երևանում մոտակա այլ քաղաքներում եղած հիմնական շահագրգիռ կողմերին, այդ թվում GIZ-ին, ՄՁՄԿ-ին, ԱՄԿ-ին, ՄՄԿ-ին, ԵԱՀԿ-ին, ՀՁՀԿ-ի, ԶՊԾ-ին և ՄՊԾ-ին:

Փուլ 3. Պոտենցիալ և վերադարձած միգրանտների համազգային ներկայացուցչական հետազոտության ընտրանքը

<u>Ընտրանքի չափը և ձևավորման ընդհանուր առանձնահատկությունները</u>

Բազմաստիճան ներկայացուցչական ընտրանք ունենալու համար օգտագործվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության հասցեների բազաները, որը ՀՌԿԿ-ն հաջողությամբ օգտագործել էր նախորդ համապետական հետազոտության ժամանակ: Վճարված և չվճարված վարձավճարների հարաբերակցությանչափորոշիչը թույլ տվեց ընտրանքում օգտագործել ներկայումս իրենց տներում ապրող ընտանիքները: Ընտրանքի համար անհրաժեշտ ելակետային թվերը վերցվեցին զբաղվածության վերաբերյալ հետազոտություններից: Նախորդ տարիներին իրականացված մարդահամարի տվյալների վրա հիմնված շրջանակի նկատմամբ ընտրանքի այս շրջանակի առավելությունն այն է, որ, նախ, այս տվյալներն ավելի թարմ են, քան ԱՎԾ-ի տրամադրած մարդահամարի տվյալները և, երկրորդ, ցանկում նշված էին միայն այն տնային տնտեսությունները, որոնք վճարել էին 2010թ.-ի դեկտեմբերից մինչև 2011թ.-ի փետրվարն ընկած ժամանակամիջոցի համար էլեկտրաէներգիայի վարձը, այսինքն՝ ցանկում բացակայող տնային տնեսությունները հաշվի չեն առնվել հաշվարկներ կատարելիս:

<u>Պոտենցիալ միգրանտների հետազոտության ենթաընտրանքը</u>

Պոտենցիալ միգրանտների ընտրանքը ներառում էր 18-ից 50 տարեկան բնակչությունը, ընդ որում բազմաստիճան ընտրանքի միջոցով ապահովելով նաև աշխարհագրական ներկայացուցչությունը: Վերադարձած միգրանտների խմբի համար օգտագործվել է ընտրանքի ձնագնդի մեթոդաբանությունը: Պոտենցիալ միգրանտների խմբի շրջանակում այցելած յուրաքանչյուր տնային տնեսության հարց է տրվել, թե արդյոք նրանք ճանաչում են ակտիվ միգրանտ ունեցող տնային տնտեսություններ:

Ընտրանքի հիմնական պարամետրերը հետևյալն են.

- Ընտրանքի սխալ. ոչ ավելի քան +/- 2,5% (5%):
- Յուրաքանչյուր երկրորդային ընտրանքային միավորում/կետում (200 քլաստերը = 2600/13)՝ պոտենցիալ միգրանտների ոչ ավելի քան 13 հարցազրույց և վերադարձած միգրանտների ոչ ավելի քան 7 հարցազրույց:
- Ընտրանքի մեթոդը և տեխնիկան – բազմաաստիճան քլաստերային ընտրանք, պոտենցիալ միգրանտների համար կիրառվում է թիրախային բնակչության համամասնությունը ներկայացնող պատահական ընտրանքի չափի մոտեցումը, իսկ վերադարձած միգրանտների տնային տնտեսությունների առումով կիրառվում է նույնը՝ համակցված ձնագնդի մեթոդի հետ: Հարցվողների ընտրանքը կատարվել է պատահական ընտրությամբ՝ օգտագործելով առաջիկա ծննդյան օրվա մոտեցումը:
- Ստրատիֆիկացիոն մոտեցումներ՝ մայրաքաղաք/այլ քաղաքներ/գյուղական համայնքների բաշխում:
- Ընտրանքի շրջանակը. Օգտագործվել է Հայաստանի էլեկտրական ցանցեր ընկերության տրամադրած տնային տնտեսությունների (SS) հասցեների համապարփակ ցանկը:

Ներքևի աղյուսակում տրված են մանրամասն տեղեկություններ պոտենցիալ միգրանտների հետազոտության ընտրանքի մասին:

Աղյուսակ 9. Պոտենցիալ միգրանտների հետազոտություն. նախատեսված և կայացած ընտրանքի բաշխում (ըստ մարզերի և բնակավայրի տեսակի)

	Նախատեսված հարցումների քանակ			Ընտրանքի ծավալ (ներառյալ չկայացած հարցումները)			Կլաստերների քանակը			Իրականացված ընտրանքի ծավալը պոտենցիալ միգրանտների տվյալների բազայից		
	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
Ընդամենը Հայաստանում	1655	945	2600	2152	1181	3333	127	73	200	1807	823	2630
Երևան	877	0	877	1228	0	1228	67	0	67	993	0	993
Արագածոտն	26.8	88.2	115	35	110	145	2	7	9	27	78	105
Արարատ	67.2	161.2	228	87	201	289	5	12	18	67	132	199
Արմավիր	81.5	152.1	234	106	190	296	6	12	18	79	116	195
Գեղարքունիք	64.4	130.6	195	84	163	247	5	10	15	66	104	170
Կոտայք	131.5	103.0	235	171	129	300	10	8	18	143	93	236
Լոռի	130.8	91.8	223	170	115	285	10	7	17	157	91	248
Շիրակ	134.5	91.6	226	175	114	289	10	7	17	146	78	224
Սյունիք	84.6	36.6	121	110	46	156	7	3	9	77	36	113
Տավուշ	41.3	60.7	102	54	76	130	3	5	8	39	69	108
Վայոց Ձոր	15.5	28.8	44	20	36	56	1	2	3	13	26	39
Այլ քաղաքներ	778	0	778	1012	0	1012	60	0	60	814	0	802

Ստացված տվյալները ընդհանուր բնակչության թվի հետ համեմատելի դարձնելու նպատակով հաշվարկվել են տնային տնտեսությունների և հարցվածների կշռված տվյալները միգրացիայի տվյալների բազայի համար՝ տվյալների մաքրումից հետո:

Ներքևի աղյուսակներում ներկայացված է ըստ կրթության, սեռի, տարիքի և քաղաքային/գյուղական բնակավայրերի բաշխվածությունների համեմատությունը՝ պոտենցիալ և վերադարձած միգրանտների տվյալների շտեմարանից և ԱՎԾ-ի տվյալներից (ԱՎԾ, 2010):

Աղյուսակ 10. 18-50 տարեկան բնակչություն (ըստ սեռի, %)

Սեռ	ԱՎԾ	Պոտենցիալ միգրանտների կշռված տվյալների բազա[15]	Պոտենցիալ միգրանտների չկշռված տվյալների բազա	Վերադարձած միգրանտների տվյալների բազա[16]
Արական	48.7	49.1	35.6	86.7
Իգական	51.3	50.9	64.4	13.3

Աղյուսակ 11. 18-50 տարեկան բնակչություն (ըստ տարիքային խմբերի, %)

Տարիք	ԱՎԾ	Պոտենցիալ միգրանտների կշռված տվյալների բազա	Պոտենցիալ միգրանտների չկշռված տվյալների բազա	Վերադարձած միգրանտների տվյալների բազա
18-24	26.1	31.5	21.5	8.2
25-30	18.7	18.5	22.7	24.2
31-35	12.6	10.8	15.5	18.2
36-40	12.1	11.2	13.8	14.3
41-45	15.1	14.6	12.6	15.1
46-50	15.5	13.3	13.9	19.9

Աղյուսակ 12.18-50 տարեկան բնակչություն (ըստ կրթության, %)

Կրթություն	ԱՎԾ (S/S հետազոտություն, 2010)[17]	Պոտենցիալ միգրանտների կշռված տվյալների բազա	Պոտենցիալ միգրանտների չկշռված տվյալների բազա	Վերադարձած միգրանտների տվյալների բազա
Տարրական և ցածր	0.6	0.1	0.1	0.5
Հիմնական դպրոց	5.6	6.9	5.8	11.8
Ավագ դպրոց/վարժարան	46.1	39.5	36.7	42.0
Նախնական մասնագիտական	2.5	5.8	5.9	8.9
Միջին մասնագիտական	21.6	17.2	19.4	13.9
Բարձրագույն (բակալավր և մագիստրոս)	23.9	29.8	31.2	22.4
Հետբարձրագույն (ասպիրանտուրա)	0.4	0.6	0.8	0.5

Աղյուսակ 13. 18-50 տարեկան բնակչություն (ըստ քաղաք/գյուղ բաշխվածության , %)

Բնակավայրի տեսակ	ԱՎԾ	Պոտենցիալ միգրանտների կշռված տվյալների բազա	Պոտենցիալ միգրանտների չկշռված տվյալների բազա	Վերադարձած միգրանտների տվյալների բազա
Մայրաքաղաք	34.3	36.2	37.8	37.9
Այլ քաղաք	30.3	29.2	31.0	30.6
Գյուղ	35.4	34.6	31.3	31.5

[15] Այս բաշխվածությունը հիմնված է պոտենցիալ միգրացիայի կշռված տվյալների բազայի վրա:

[16] Վերադարձած միգրանտների տվյալների բազան կշռված չէ, սակայն ակնհայտ է, որ վերադարձած միգրանտների գերակշիռ մեծամասնությունը տղամարդիկ են:

[17] Այս թվերը վերահաշվարկվել են ըստ ԱՎԾ-ի տվյալների՝ հաշվի առնելով այն տեղեկատվությունը, որտեղ հայաստանյան կրթական մակարդակները թարգմանվել են ըստ Կրթության միջազգային չափորոշիչների դասակարգման՝ ISCED-ի (որը ստացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ Զառա Գրիգորյանից). տես Գծապատկեր 1-ը Հավելված 2-ում:

Վերադարձած միգրանտների հետազոտության ենթաընտրանքը

Ինչպես նշվել է վերևում, վերադարձած միգրանտների հետազոտության համար օգտագործվել է պոտենցիալ միգրանտների հետազոտության ընտրանքի ենթաընտրանքը: Պոտենցիալ միգրանտների հարցման համար ընտրված տնային տնեսություններին տրվել են ստուգիչ հարցեր՝ տվյալ տնային տնտեսությունում վերադարձած միգրանտների առկայությունը պարզելու համար (այդպիսին են համարվում հետազոտության երկրից հեռացած 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք, ովքեր արտերկրում շարունակաբար աշխատել են առնվազն 3 ամիս, վերդարձել են ոչ ավելի քան 10 տարի առաջ և պատրաստ են հարցազրույցի համար): Հարցազրույցների պահանջվող թիվն ապահովելու համար, բացի ստրատիֆիկացված պատահական ընտրանքի մեթոդից, այն կանոնավոր կերպով համակցվում էր ընտրանքի ձնագնդի մեթոդի հետ: Պոտենցիալ միգրանտների հետազոտության ժամանակ հարցված յուրաքանչյուր տնային տնտեսությունում ՀՌԿԿ-ն փորձել է վերադարձած միգրանտ ունեցող տնային տնտեսությունների մասին տեղեկություններ ստանալ ընտրված վայրերում: Տվյալ վայրում վերադարձած միգրանտների հասցեների վերաբերյալ ուղղորդում ստանալուց հետո զրուցավարները գնում էին անմիջապես այս հասցեներով:

Ձնագնդի եղանակն օգտագործվում էր այնքան ժամանակ, մինչև տվյալ վայրում վերադարձող միգրանտների հետ հարցազրույցների պլանավորված թիվը լրանար (ընտրանքային յուրաքանչյուր կլաստերի համար՝ 7):

Յուրաքանչյուր տնային տնտեսությունում հարցարույցի էր ենթարկվում միայն մեկ վերադարձած միգրանտ: Մեկից ավելի վերադարձած միգրանտների ներկայության դեպքում ընտրվել է նրանցից մեկը՝ հիմնվելով առաջիկա ծննդյան օրվա մեթոդի վրա:

Եթե տնային տնտեսությունում ներկա էր հարցազրույցի պայմաններին համապատասխանող միայն մեկ անձ, ով թե՛ վերադարձած և թե՛ պոտենցիալ միգրանտ է (այսինքն՝ 18-50 տարեկան), ապա հարցազրույցը վարվել է՝ ելնելով թե՛ պոտենցիալ և թե՛ վերադարձած միգրանտների համար սահմանված քվոտաների հիման վրա կատարվող հաշվարկներից: Զուտ տեխնիկական նկատառումներով, դժվար էր բացահայտել դեպքեր, որոնք հաշվի են առնվում որպես թե՛ պոտենցիալ և թե՛ վերադարձած միգրացիայի հարցաշարեր: Սակայն 30 դեպք, որոնք հաշվի են առել երկու քվոտաներն էլ, հետագայում մտցվել են պոտենցիալ միգրանտների վերջնական տվյալների բազա և ներկայացվել ԵԿՀ-ին:[18]

[18]Պոտենցիալ միգրանտների վերաբերյալ գլուխ 3-ում և 5-ում տրված բոլոր հաշվարկները հիմված են 2630 դեպքեր (այդ թվում երկու քվոտաները) ներառող տվյալների բազային վրա:

Միայն պոտենցիալ միգրացիայի տվյալների բազան է կշռվել: Վերադարձած միգրանտների տվյալների բազան չի կշռվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերադարձած միգրանտների 54%-ն ընտրվել է ձնագնդի մեթոդով:

2.5. Դաշտային աշխատանքների ժամանակ ի հայտ եկած դժվարություններ

Դաշտային աշխատանքների ժամանակ ի հայտ եկան հետևյալ դժվարությունները (ըստ խմբավարների և զրուցավարների).

1. Ըստ խմբավարների և զրուցավարների, վերադարձած միգրանտներ գտնելը դժվար էր: Այս հարցը լուծելու համար դաշտային աշխատանքը երկարաձգվել է, և օգտագործվել են տեղեկություններ հավաքելու լրացուցիչ եղանակներ, ինչպիսիք են «տեղեկատվություն գյուղապետերից» կամ ընտրված կլաստերի ներսում եղած այլ աղբյուրներից:
2. Պոտենցիալ միգրանտների հետազոտության համար հիմնական դժվարությունը 18–50 տարեկան մարդկանց գտնելն էր: Որոշ քլաստերներում բազմաթիվ տնային տնտեսություններ բացակայում էին ընտրանքում եղած հասցեների ցանկից (փակ դռներ և այլն): Խնդիրը լուծելու համար ընտրանքի փորձագետի կողմից ընտրվել են հասցեների լրացուցիչ ցանկ և/կամ այլ քլաստեր՝ ընտրված քլաստերում հետազոտությունն ավարտին հասցնելու նպատակով:
3. Հարցաշարի հետ կապված մի քանի դժվարություններ կային: Հիմնական խնդիրը կապված էր որոշ հարցեր հասկանալու և դրանք մեկնաբանելու հետ: Օրինակ, երբեմն հարցվողների համար դժվար էր լինում ներկայացնել իրենց «աշխատանքային մակարդակը»: Հրահանգավորման փուլում «աշխատանքային մակարդակին» վերաբերող հարցերի շուրջ խմբավարներին/զրուցավարներին տրվել են հետևյալ բացատրությունները/սահմանումները.

Պրոֆեսիոնալներ - բացատրվում է ըստ «կոդավորման բացատրական ծանոթագրությունների»:

Բարձր ղեկավարություն - Ամենաբարձրաստիճան գործադիր ղեկավարները, ովքեր պատասխանատու են ամբողջ ձեռնարկության համար, ինչպես օրինակ՝ նախագահը, գլխավոր գործադիր տնօրենը, կառավարիչը, փոխնախագահը և այլն):

Միջին օղակի ղեկավարություն – Կազմված է կոնկրետ ստորաբաժանումներ (օրինակ՝ հաշվապահություն, մարկետինգի բաժին, արտադրություն) կամ բիզնես միավորներ ղեկավարող մենեջերներից կամ հորիզոնական կազմակերպություններում որպես մենեջերներ ծառայող անձանցից:

Որակավորված աշխատող – Կոնկրետ հմտության կամ մասնագիտության գծով գիտակ անհատ: Որակավորված աշխատողի օրինակ է ավտոմեխանիկը, քանի որ նա գիտելիքներ ունի ավտոմոքենայի վերանորոգման բնագավառում:

Որակավորում չունեցող աշխատող – Հատուկ պատրաստականություն կամ փորձ չպահանջող աշխատանք կատարող անհատ: Որակավորում չպահանջող աշխատանքը հաճախ օգտագործվում է գյուղատնտեսության ոլորտում՝

ընդունելով, որգյուղատնտեսական մթերքների բերքահավաքը կարելի է կատարել՝ ունենալով նվազագույն պատրաստականություն և փորձ:

Դեպքերի մոտավորապես 5%-ում (մոտ 200 հարցաշարերում) զրուցավարները չեն կարողացել բացահայտել հարցվողների աշխատանքի մակարդակը և պարզապես նշել են փաստացի զբաղմունքը: Այդպիսի դեպքերի համար օգտագործվել է կոդավորման հետևյալ սխեման, որը ISCO 88 (Զբաղմունքի միջազգային չափորոշիչների դասակարգում) դասակարգումները կապակցում է աշխատանքի մակարդակների հետ:

Աղյուսակ14. Աշխատանքի մակարդակ - ISCO 88 դասակարգում

Աշխատանքի մակարդակ	ISCO 88 դասակարգում
1.Պրոֆեսիոնալ	Հիմնական խումբ 2 Պրոֆեսիոնալներ
	Հիմնական խումբ 3 Տեխնիկներ և միջին մակարդակի մասնագետներ
2.Բարձր ղեկավարություն	Հիմնական խումբ 1 Օրենսդիրներ, բարձր պաշտոնյաներ և ղեկավարներ
	11 ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ
	13 ԳԼԽԱՎՈՐ ՄԵՆԵՋԵՐՆԵՐ
	12 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄԵՆԵՋԵՐՆԵՐ
	121 ՏՆՕՐԵՆՆԵՐ ԵՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆՆԵՐ
3.Միջին օղակի ղեկավարություն	Հիմնական խումբ 1 Օրենսդիրներ, բարձր պաշտոնյաներ և ղեկավարներ
	12 12 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄԵՆԵՋԵՐՆԵՐ – մնացածները
4.Որակավորված աշխատող	Հիմնական խումբ 4 Գրասենյակային ծառայողներ
	Հիմնական խումբ 5 Սպասարկման ոլորտի աշխատողներ և խանութի ու շուկայի վաճառողներ
	Հիմնական խումբ 6 Գյուղատնտեսության և ձկնաբուծության որակավորված աշխատողներ
	Հիմնական խումբ 7 Արհեստավորներ և հարակից զբաղմունքների տեր աշխատողներ
	Հիմնական խումբ 8 Մեքենասարքավորումների օպերատորներ և հավաքողներ
5.Որակավորում չունեցող աշխատող	Հիմնական խումբ 9 Տարրական զբաղմունքներ

Ընդհանուր առմամբ, խնդրահարույց համարված յուրաքանչյուր հարց լրացուցիչ կերպով բացատրվել է ՀՌԿԿ-Հայաստանի համապատասխան աշխատակազմի կամ խմբավարների կողմից: Նման հարցերի լուծման վերաբերյալ տեղեկատվությունը դաշտային աշխատանքների ժամանակ մշտապեստրվել է բոլոր խմբարաներին և զրուցավարներին:

Գլուխ 3. Պոտենցիալ միգրանտների վերաբերյալ հետազոտության տվյալների արդյունքները

Այս գլխում ներկայացված են Հայաստանի ընդհանուր բնակչության 18-ից 50 տարեկանների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով բնակչության այն հատվածի վրա, որը ներկայումս լրջորեն մտածում է ապրելու կամ աշխատելու նպատակով արտերկիր տեղափոխվելու մասին: Ըստ հարցումների արդյունքների՝ այդ հատվածը կազմում է բնակչության 36%-ը: Հաշվետվության մեջ օգտագործվող «պոտենցիալ միգրանտ» եզրույթը վերաբերում է այն հարցվածներին, ովքեր մտածում են արտագաղթելու մասին: «Ոչ միգրանտ» եզրույթը վերաբերում է ընդհանուր բնակչության այն հատվածին, որը չի մտածում Հայաստանից հեռանալու մասին:

3.1. Սոցիալ-ժողովրդագրական բնութագիր, կրթություն և հմտություններ [19]

3.1.1. Պոտենցիալ միգրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը

Հարցումներին մասնակցել են 18-ից 50 տարեկան հայաստանցիներ՝ ներկայացուցչական ընտրանք: Հարցվածների սեռային բաշխվածությունը հետևյալն է.

Աղյուսակ 15. Սեռային բաշխումն ընդհանուր ընտրանքում (%)

Սեռ	Չկշռված տվյալներ[20]	Կշռված տվյալներ[21]
Արական	36	49
Իգական	64	51
Ընդամենը	100	100

Այսպիսով՝տղամարդիկ կազմում են 18-ից 50 տարեկան ընտրանքի 36, իսկ կանայք՝ 64%-ը: Հարցվածների տարիքային բաշխվածությունը հետևյալն է.

Աղյուսակ 16. Տարիքային խմբերի բաշխումն ամբողջ ընտրանքում (%)

Տարիք	Չկշռված տվյալներ	Կշռված տվյալներ
18-24	22	32
25-30	23	18
31-35	15	11
36-40	14	11
41-45	13	15
46-50	14	13
Ընդամենը	100	100

[19] Աղյուսակների, գծապատկերների և տեքստերի բոլոր թվերը հաշվարկված են 2630 դեպքերից (ներառյալ այն դեպքերը, որոնք առկա են և վերադարձած և պոտենցալ բազայում) բաղկացած կշռված պոտենցիալ տվյալների բազայի հիման վրա, բացառությամբ՝ «չկշռված տվյալներ» նշում ունեցողների:

[20] Չկշռված տվյալները ցույց են տալիս ընտրանքում հարցվողների իրական բաշխումը:

[21] Կշռված տվյալների միջոցով հնարավոր է տեսնել, թե որքանով է ընտրանքը ներկայացնում այն բնակչությունը (գլխավոր համախմբությունը), որի հիման վրա կառուցվել է (Հայաստանի 18-50 տարեկան բնակչությունը):

Ընտրանքի հարցվածների 38%-ն ապրում է մայրաքաղաքում, 31%-ը՝ քաղաքային այլ բնակավայրերում, իսկ մյուս 31%-ը՝ գյուղական բնակավայրերում (տես աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Բնակավայրերի բաշխումն ամբողջ ընտրանքում (%)

Բնակավայրի տեսակը	Չկշռված տվյալներ	Կշռված տվյալներ
Մայրաքաղաք	38	36
Քաղաք	31	29
Գյուղ	31	35
Ընդամենը	100	100

Հարցվածների կեսից ավելին ամուսնացած է, իսկ երբևէ չամուսնացածների մեջ գերակշռում են տղամարդիկ (տես աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Ամուսնական կարգավիճակ (ըստ սեռի, %)

	Սեռ		Ընդամենը
	Արական	Իգական	
Երբեք ամուսնացած չեն եղել	42	31	36
Ամուսնացած են/ միասին են ապրում	56	64	60
Ամուսնալուծված են/ առանձին են ապրում	1	4	2
Այրի են	0	2	1
Ընդամենը	100	100	100

Հարցումներին մասնակցած բնակչության 59%-ը երեխաներ ունի, որոնց միջին թիվը երկուսն է: Բոլոր հարցվածների 98%-ը ընտանիքում խոսում է հայերեն, մնացած 1.8%-ը՝ ռուսերեն, և միայն 0.3%-ը՝ եզդերեն:

Ինչ վերաբերում է հարցված բնակչության ընդհանուր կրթական մակարդակին, ապա ճնշող մեծամասնությունն ունի ավագ դպրոցի կամ բարձրագույն կրթություն: Հարցվածների միայն 7%-ն ունի կրթական ավելի ցածր մակարդակ, իսկ 30%-ն ունի բարձրագույն կրթություն: Կրթական մակարդակն անհամամասնորեն է բաշխված տղամարդկանց և կանանց միջև, ընդ որում՝ կանայք ավելի բարձր կրթական մակարդակ ունեն, իսկ միայն հիմնական դպրոցի կրթություն ունեցող տղամարդկանց թիվը 3 անգամ գերազանցում է կանանց թվին (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Կրթություն (ըստ հարցվողների սեռի, %)



Բացի այդ, հարցվածների 20%-ը մտադիր է ստանալ հետագա կրթություն. ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողներն առավել հավանական է, որ կշարունակեն կրթությունը (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Կրթությունը շարունակելու և դասընթացներին մասնակցելու մտադրությունը (%)



Բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների շուրջ կեսը կրթական աստիճան ունի հումանիտար և սոցիալական գիտությունների բնագավառում, 20%-ը՝ կրթության և մանկավարժության, 16%-ը՝ բնական գիտությունների, 12%-ը՝ ճարտարագիտության, արդյունաբերության, շինարարության և ճարտարապետության, 6%-ը՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և անասնաբուժության, 5%-ը՝ առողջապահության, նպաստների և սոցիալական աշխատանքի, և 2%-ը՝ ծառայությունների ոլորտում: Հարցվածների ճնշող մեծամասնության ուսումնառության բնագավառը հիմնված է անձնական նախասիրությունների վրա:

Ընդհանուր առմամբ, բնակչության շրջանում նկատվում է կրթության նկատմամբ դրական վերաբերմունք: Ճնշող մեծամասնությունը՝ ընդհանուր բնակչության ավելի քան 90%-ը, համաձայն է այն կարծիքին, որ կրթությունը բարելավում է կենսապայմանները, և որ կրթության մեջ ներդրում կատարելը կարևոր է: Սակայն միևնույն ժամանակ, հարցվածները ոչ այնքան միանշանակ են պատասխանել այն հարցին, թե արդյոք կրթությունը նպաստում է արտերկրում աշխատանք գտնելուն. հարցված բնակչության մեկ քառորդը համաձայն չէ այդ պնդման հետ (տես գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Հայաստանում հնարավորինս բարձր կրթություն ստանալը նպաստո՞ւմ է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն (%)



3.1.2. Պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը

Հարցվածների 36%-ը նշել է, որ լրջորեն մտածում է ապրելու և աշխատելու նպատակով արտերկիր տեղափոխվելու մասին. այս խումբը պոտենցիալ միգրանտներն են: Ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող տղամարդիկ առավել շատ են մտածում միգրացիայի մասին, քան ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները: Կանանց շրջանում հակառակ միտումն է նկատվում. ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները ավելի շատ են հետաքրքրված արտագաղթով (տես աղյուսակ 19-ը):

Աղյուսակ 19. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ կրթամակարդակի և սեռի, %)

Սեռ		Կրթություն	Այո	Ոչ	Ընդամենը
Արական	Կրթական մակարդակ	Ցածր	53	47	100
		Միջին	42	58	100
		Բարձր	38	62	100
	Ընդամենը		42	58	100
Իգական	Կրթական մակարդակ	Ցածր	26	74	100
		Միջին	29	71	100
		Բարձր	32	68	100
	Ընդամենը		30	70	100

Հարցվածների շարքում միգրացիայով հետաքրքրված տղամարդիկ ավելի շատ են, քան կանայք: Ինչպես երևում է ներքևի աղյուսակում, 18-ից 30 տարեկան տղամարդիկ ավելի հակված են արտագաղթելու, քան այլ տարիքային խմբերի տղամարդիկ (տես աղյուսակ 20-ը):

Աղյուսակ 20. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ տարիքի և սեռի, %)

Սեռ			Այո	Ոչ	Ընդամենը
Արական	Տարիքային խմբեր	18-24	47	53	100
		25-30	47	53	100
		31-35	36	64	100
		36-40	30	70	100
		41-45	44	56	100
		46-50	35	65	100
	Ընդամենը		42	58	100
Իգական	Տարիքային խմբեր	18-24	32	68	100
		25-30	34	66	100
		31-35	34	66	100
		36-40	27	73	100
		41-45	22	78	100
		46-50	25	75	100
	Ընդամենը		30	70	100

Ավելին, քաղաքային (ոչ մայրաքաղաքի) և գյուղական բնակավայրերի տղամարդիկ նույնպես ավելի հակված են արտագաղթելու, քան մայրաքաղաքի տղամարդ հարցվածները: Կին հարցվածների շրջանում հակառակ միտումն է նկատվում. գյուղական բնակավայրերի կանայք ավելի քիչ հավանական է, որ կարտագաղթեն (տես աղյուսակ 21):

Աղյուսակ 21. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ բնակավայրի տեսակի և սեռի, %)

Սեռ			Այո	Ոչ	Ընդամենը
Արական	Բնակավայրի տեսակ	Մայրաքաղաք	39	61	100
		Քաղաք	45	55	100
		Գյուղ	43	57	100
	Ընդամենը		42	58	100
Իգական	Բնակավայրի տեսակ	Մայրաքաղաք	32	68	100
		Քաղաք	29	71	100
		Գյուղ	28	72	100
	Ընդամենը		30	70	100

Եթե ուշադրություն դարձնենք պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների խմբերի վրա, ապա կտեսնենք, որ արտագաղթելու մասին մտածողների խմբում չամուսնացածների թիվն ավելի շատ է, քան արտագաղթով չհետաքրքրվածների խմբում: Սակայն երկու խմբերում էլ հարցվածների մեծամասնությունն ամուսնացած է (տես աղյուսակ 22):

Աղյուսակ 22. Ամուսնական կարգավիճակ (ըստ արտագաղթելու մտադրության, %)

Ամուսնական կարգավիճակ	Մտադիր է մեկնել	Մտադիր չէ մեկնել
Երբեք ամուսնացած չեն եղել	41	34
Ամուսնացած են/ միասին են ապրում	56	63
Ամուսնալուծված են/ առանձին են ապրում	2	3
Այրի են	1	1
Ընդամենը	100	100

Նույն կերպ, երեխա ունեցողները փոքր-ինչ ավելի քիչ են մտածում արտագաղթելու մասին, քան չունեցողները, համապատասխանաբար՝ 39 և 34%:

Կարծես թե պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների կրթության վերաբերյալ ունեցած տեսակետները միմյանցից քիչ են տարբերվում. երկու խմբերում էլ հարցվածների կեսից ավելին միանշանակ կարծում է, որ կրթությունը նպաստում է կենսապայմանների բարելավմանը (տես գծապատկեր 4-ը):

Գծապատկեր 4. Կրթությունն օգնում է մարդկանց բարձրացնելու իրենց կենսամակարդակը (ըստ մեկնելու մտադրության, %)



Պոտենցիալ միգրանտների համեմատ (67%) «ոչ միգրանտների» փոքր-ինչ ավելի բարձր տոկոսն (72%) է կարծում, որ հայրենիքում կրթության ավելի բարձր մակարդակ ձեռք բերելը նպաստում է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն:

Թե՛ պոտենցիալ միգրանտները, թե՛ «ոչ միգրանտները» օտար լեզուների հավասար իմացություն ունեն, միակ տարբերությունը ռուսերենի իմացությունն է. ռուսերեն լավ կամ գերազանց գիտի պոտենցիալ միգրանտների 53, իսկ ոչ միգրանտների 48%-ը:

3.2. Աշխատանքային կարգավիճակ

3.2.1. Պոտենցիալ միգրանտների աշխատանքային կարգավիճակը

Հարցված բնակչության միայն 33%-ն էր առնվազն մեկ ժամ աշխատել հարցմանը նախորդող յոթ օրերի ընթացքում: Բացի այդ, նրանց միայն 64.8%-ն էր աշխատել սոցիալական ապահովությամբ: Հարցմանը նախորդող շաբաթվա ընթացքում տղամարդկանց առավել մեծ տոկոսն էր աշխատել, քան կանանց, համապատասխանաբար՝ հարցված տղամարդկանց 40%-ը և կանանց 26%-ը: Միևնույն ժամանակ, վարձատրվող աշխատանք փնտրողների մեջ տղամարդկանց տոկոսն ավելի շատ է, քան կանանցը, համապատասխանաբար՝ 73% և 54%.

18-ից 24 տարեկան հարցվածների շրջանում հարցմանը նախորդող շաբաթվա ընթացքում չաշխատածների տոկոսը շատ բարձր է (80%), իսկ 36-ից 40 տարիքային խմբում աշխատածների տոկոսը ամենաբարձրն է (տես աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ տարիքի,%)

	Տարիքային խումբ						Ընդամենը
	18-24	25-30	31-35	36-40	41-45	46-50	
Այո, աշխատել եմ	20	38	39	44	37	39	33
Ոչ, չեմ աշխատել	80	62	61	56	63	61	67
Ընդամենը	100	100	100	100	100	100	100

Գյուղական բնակավայրերի հարցվածներն ունեն գործազրկության ամենաբարձր մակարդակը, ընդ որում միայն 20%-ն է նշել, որ աշխատել է նախորդ 7 օրերի ընթացքում: Չնայած գյուղական և քաղաքային այլ բնակավայրերի համեմատ մայրաքաղաքում զբաղվածության մակարդակն ավելի բարձր է, այնուամենայնիվ այն ցածր է և կազմում է 45% (տես աղյուսակ 24):

Աղյուսակ 24. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ բնակավայրի տեսակի, %)

	Այո, աշխատել եմ	Ոչ, չեմ աշխատել	Ընդամենը
Մայրաքաղաք	45	55	100
Քաղաք	34	66	100
Գյուղ	20	80	100
Ընդամենը	33	67	100

Տարբեր կրթական մակարդակներ ունեցողների շրջանում զբաղվածության մակարդակը զգալիորեն տարբեր է. որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան հավանական է, որ անձը զբաղված է:

Աղյուսակ 25. Վերջին յոթ օրերին առնվազն մեկ ժամ աշխատե՞լ եք (ըստ սեռի և կրթամակարդակի, %)

Սեռ			Այո, աշխատել եմ	Ոչ, չեմ աշխատել	Ընդամենը
Արական	Կրթամակարդակ	Ցածր	22	78	100
		Միջին	36	64	100
		Բարձր	56	44	100
	Ընդամենը		40	60	100
Իգական	Կրթամակարդակ	Ցածր	5	95	100
		Միջին	19	81	100
		Բարձր	43	57	100
	Ընդամենը		26	74	100
Ընդամենը ամբողջ ընտրանքում			33	67	100

Թե՛ տղամարդ, թե՛ կին հարցվածները որպես չաշխատելու հիմնական պատճառ նշել են աշխատանք գտնելու անկարողությունը: Սակայն ավելի շատ կին հարցվածներ են նշել, որ իրենք չեն ուզում կամ կարիք չունեն աշխատելու (տես աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Ի՞նչն է պատճառը, որ չեք աշխատում (ըստ սեռի, %)

	Սեռ		Ընդամենը
	Արական	Իգական	
Աշխատանք չեմ գտնում	64	53	58
Սովորող եմ	12	12	12
Կարիքը չունեմ/ չեմ ցանկանում	7	17	13
Արձակուրդում եմ	6	6	6
Հիվանդ եմ	5	2	3
Տնային աշխատող/ տնային տնտեսուհի	4	1	2
Այլ	2	10	6
Ընդամենը	100	100	100

Զբաղվածների շրջանում, զբաղվածության հիմնական տեսակը աշխատավարձով աշխատանքն է (70%), դրան հաջորդում է ինքնազբաղվածությունը (12%) և պատահական աշխատանքը (14%): Եթե առանձին-առանձին դիտարկենք տղամարդկանց և կանանց զբաղվածությունը, ապա կնկատենք, որ միջնակարգ և բարձրագույն կրթությամբ կանայք գրեթե երկու անգամ ավելի շատ են ներգրավված մասնագիտական աշխատանքներում, քան տղամարդիկ: Միևնույն ժամանակ, կրթական ավելի բարձր մակարդակ ունեցող տղամարդիկ ավելի քան երկու անգամ ավելի շատ են ներգրավված մասնագիտական հմտություններ չպահանջող աշխատանքներում, քան կրթական բարձր մակարդակ ունեցող կանայք (տես աղյուսակ 27-ը):

Աղյուսակ 27. Որակավորման մակարդակ (ըստ կրթության և սեռի, %)

Սեռ			Մասնագիտական	Բարձր մակարդակի մենեջեր	Միջին մակարդակի մենեջեր	Որակավորված աշխատող	Որակավորում չունեցող աշխատող	Ընդամենը
Արական	Կրթական մակարդակ	Ցածր	2	0	2	16	79	100
		Միջին	9	2	7	37	45	100
		Բարձր	28	5	11	35	21	100
	Ընդամենը		15	3	8	34	40	100
Իգական	Կրթական մակարդակ	Ցածր	0	0	0	18	82	100
		Միջին	17	2	9	32	40	100
		Բարձր	41	6	16	27	9	100
	Ընդամենը		26	3	12	30	29	100
Ընդամենը ամբողջ ընտրանքում			20	3	10	32	35	100

Միևնույն ժամանակ, աշխատողների և նախկինում աշխատանք ունեցածների 58%-ը նշել է, որ իրենց աշխատանքը համապատասխանում է իրենց կրթական մակարդակին, իսկ 21%-ը նշել է, որ կատարում է իր կրթական մակարդակից ավելի ցածր կրթական մակարդակ պահանջող աշխատանք: Կանանցից զգալիորեն առավել թվով տղամարդ հարցվածներ են ասել, որ իրենց աշխատանքը ավելի ցածր կրթական մակարդակ է պահանջում, քան իրենցն է (տես աղյուսակ 28-ը):

Աղյուսակ 28. Այս/նախկին աշխատանքը համապատասխանո՞ւմ է (էր) Ձեր կրթական մակարդակին (ըստ կթամակարդակի և սեռի, %)

Սեռ			Այո, լիովին	Պահանջներն ավելի ցածր են/էին իմ կրթամակարդակից	Պահանջներն ավելի բարձր են/էին իմ կրթամակարդակից	Պահանջները իմ կրթամակարդակի, բայց այլ ոլորտի են/ էին	Դ/Պ	Ընդամենը
Արա-կան	Կրթամակարդակ	Ցածր	65	5	10	3	17	100
		Միջին	52	17	9	17	5	100
		Բարձր	52	37	1	10	0	100
	Ընդամենը		53	22	6	14	5	100
Իգա-կան	Կրթամակարդակ	Ցածր	80	5	12	4		100
		Միջին	62	20	6	11	2	100
		Բարձր	69	18	1	11	1	100
	Ընդամենը		65	19	4	11	1	100
Ընդամենը ամբողջ ընտրանքում			58	21	5	12	3	100

Հայաստանում ամսական միջին անվանական աշխատավարձը շուրջ 223 եվրո է *(ԱՎԾ, 2011)*[22]: Ըստ հարցումների՝ աշխատողների մեծամասնությունը ամսական ստանում է 72-ից 290 եվրո, ընդ որում՝ ավելի քան 65%-ը ամսական ստանում է 72-ից 177 եվրո, իսկ 26%-ը՝ 178-ից 290 եվրո: Ընդհանուր առմամբ կանայք ավելի քիչ են վաստակում, քան տղամարդիկ, բացի աշխատանք ունեցողների 1%-ից, ովքեր ասել են, որ ամսական վաստակում են ավելի քան 858 եվրո. այս խմբի 80%-ը կանայք են:

[22] Եվրոյով եկամուտները (518.72 դրամ/եվրո) հաշվակվել են ըստ 2011թ.-ի ՀՀ կենտրոնական բանկի տարեկան փոխարժեքի:

Գծապատկեր 5. Ներկայումս աշխատողների ամսական աշխատավարձը, եվրոյով (ըստ սեռի, %)



3.2.2. Պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների աշխատանքային կարգավիճակը

Ամենացածր օղակում զբաղվածությունը չի ազդում արտագաղթելու ցանկության վրա: Արտագաղթելու ցանկություն է հայտնում աշխատանք ունեցողների 34%-ը, իսկ չունեցողների՝ 37%-ը: Ավելի մանրազնին քննության առնելու դեպքում սկսում են ի հայտ գալ տարբերություններ և հստակ միտումներ: Վարձու աշխատողների միայն 34%-ն է մտածում արտերկիր տեղափոխվելու մասին, որն էականորեն ավելի քիչ է քան 43%-ը՝ ինքնազբաղվածների դեպքում և 53%-ը՝ պատահական աշխատանք անողների դեպքում (տես աղյուսակ 29-ը):

Աղյուսակ 29. Աշխատանքի բնույթ (ըստ մեկնելու մտադրության, %)

Աշխատանքի բնույթը	Մտադիր է մեկնել	Մտադիր չէ մեկնել	Ընդամենը
Գործատու	36	64	100
Ինքնազբաղված (առանց աշխատողների)	43	57	100
Վարձու աշխատանք/ կայուն աշխատավարձով	34	66	100
Ժամանակավոր աշխատանք	53	47	100
Տնային տնտեսության աշխատող (առանց վարձ.)	87	13	100
Վարձատրվող աշխատանք ընտանիքի համար	33	67	100
Չվարձատվող աշխատանք (S/S-ից դուրս)	25	75	100

Արտագաղթելու ցանկությունը էապես չի փոփոխվում կախված աշխատանքի տարբեր մակարդակներից: Սակայն հարկ է նշել, որ մասնագիտական հմտություններ ունեցող աշխատողները ավելի են հակված արտերկիր տեղափոխվելու մասին մտածելու (40%), քան միջին մակարդակի մենեջերներն (31%) ու մասնագետները (35%):

Աղյուսակ 30. Որակավորման մակարդակ (ըստ մեկնելու մտադրության, %)

Որակավորման մակարդակը	Մտադիր է մեկնել	Մտադիր չէ մեկնել	Ընդամենը
Մասնագիտական	35	65	100
Բարձր մակարդակի մենեջեր	37	63	100
Միջին մակարդակի մենեջեր	31	69	100
Որակավորված աշխատող	40	60	100
Որակավորում չունեցող աշխատող	39	61	100

Աշխատանքային վայրի տեսակը կարծես թե նույնպես ազդեցություն ունի արտագաղթելու հակվածության վրա. նրանք, ովքեր աշխատում են տնային ծառայությունների, շինարարության, տրանսպորտի և վերանորոգման, ՏՏ և մանր առևտրի ոլորտներում, ավելի շատ են հետաքրքրված միգրացիայով (տես աղյուսակ 31-ը):

Աղյուսակ 31. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ աշխատավայրի տեսակի, %)

	Ներկայումս լրջորեն մտածում եք արտերկիր մեկնելու մասին	
	Այո	Ոչ
Բնակարանի/տան սպասարկում	91	9
Շինարարություն	63	37
Տրանսպորտ	50	50
Վերանորոգման աշխատանքներ	41	59
Տեղեկատվական և հաղորդակց. տեխն. (ՏՀՏ)	41	59
Գյուղատնտեսություն	34	66
Արտադրություն	35	65
Հյուրանոց կամ ռեստորան	33	67
Առևտուր	37	63
Հանրային կառավարում	27	73
Մանրածախ առևտուր	41	59
Հանրային ծառայություններ (ջուր, էլ., գազ և այլն)	28	72
Հանքարդյունաբերություն	11	89
Այլ	32	68
Ընդամենը	38	62

Չնայած միգրացիայի մասին լրջորեն մտածողների և չմտածողների զբաղվածության ներկա կարգավիճակը գրեթե նույնն է, պոտենցիալ միգրանտների զգալիորեն ավելի բարձր տոկոսն է աշխատանք փնտրում (տես գծապատկեր 6-ը):

Գծապատկեր 6. Փնտրո՞ւմ եք վճարովի աշխատանք (%)



Միգրացիայի մասին մտածողների և չմտածողների աշխաավարձերը չեն տարբերվում: Սակայն նրանք, ովքեր մտածում են միգրացիայի մասին, այնքան էլ լավատես չեն Հայաստանում իրենց կարիերայի հեռանկարների վերաբերյալ. միգրացիայի մասին մտածողների 36%-ն ասում է, որ Հայաստանում իրենց կարիերայի հեռանկարը վատ է, այն դեպքում, երբ միգրացիայի մասին չմտածողների 24%-ն է այդ կարծիքին:

3.3. Արտերկիր մեկնելու մտադրություններ. միգրացիայի հակվածություն և դրդապատճառներ

Հարցմանը մասնակցած բնակչության մեկ երրորդը ներկայումս լրջորեն մտածում է բնակվելու և աշխատելու նպատակով արտերկիր տեղափոխվելու մասին: Այս գլխի նախորդ բաժիններում մանրամասնորեն ներկայացված են պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների ժողովրդագրական բնութագրերը: Այժմ տեսնենք, թե պոտենցիալ միգրանտներն ինչպես են բացատրում միգրացիայի նկատմամբ իրենց հետաքրքրությունը:

Աղյուսակ 32. Հայաստանից մեկնելու հիմնական պատճառները (%)

Աշխատանք չունեմ/ չեմ կարողանում գտնել	53
Կենսապայմանները բարելավելու համար	15
Ցածր աշխատավարձը և աշխատանքի ոչ բավարար հեռանկարները Հայաստանում	14
Հարազատներին, ընկերներին միանալու համար	4
Կրթություն ստանալու և դասավանդելու համար	4
Այստեղ ապագա չկա	2
Բարձր աշխատավարձ ստանալու համար	2
Աշխատանքային ոչ բավարար պայմանները հայրենիքում	1
Ցանկանում եմ մեկնել արտերկիր, սիրում եմ այնտեղ լինել	1
Վախը պատերազմից, հակամարտությունից և հալածանքներից	1
Չեմ սիրում այս երկիրը	1
Այլ	3
Ընդամենը	100

Միգրացիոն մտադրության գլխավոր երեք պատճառները կապված են անձի տնտեսական պայմանների հետ (տես աղյուսակ 32-ը):

Ընտանիքն (56%) ու հայրենիքի նկատմամբ կարոտը (23%), ընդհակառակը, հարցվածների չարտագաղթելու հիմնական պատճառներից են:

Միգրացիայի հակվածության ցուցիչը ցույց է տալիս միգրացիայի հավանականությունը: Այն բաղկացած է յոթ գործոններին տրված միավորներից: Այդ գործոններն են. առաջիկա վեց ամսվա ընթացքում արտագաղթելու հավանականությունը, երկու տարվա ընթացքում արտագաղթելու հավանականությունը, արտագաղթելու համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը, ամենահավանական նպատակային երկրի լեզվի իմացությունը, ամենահավանական նպատակային երկրի մասին տեղեկացվածությունը, միգրացիայի համար անհրաժեշտ վեց փաստաթղթերից առնվազն չորսի առկայությունը և մնացած փաստաթղթերը ձեռք բերելու դյուրինությունը:
Ըստ այս ցուցիչի[23]՝ պոտենցիալ միգրանտների միայն 3%-ն է պատկանում շատ հավանական միգրանտների խմբին, և ևս 33%՝ բավականին հավանական միգրանտների խմբին: Միգրացիայի հավանականությունը հատկապես բարձր է 31-35 տարեկան տղամարդ պոտենցիալ միգրանտների շրջանում (տես գծապատկեր 7-ը):

Գծապատկեր 7. Մեկնելու մտադրություն (ըստ տարիքի և սեռի, %)



[23] Միգրացիայի հակվածության ցուցիչի համար օգտագործվել են հետևյալ սանդղակները. բոլորովին հակված չէ - 0-2.5, հակված չէ -3-5.5, հակված է – 6-8.5, շատ հակված է – 9-11.5:

Հակառակ միգրացիայի մասին լրջորեն մտածելու վերաբերյալ եզրահանգումների, որտեղ տեսանք, որ ցածր կրթական մակարդակ ունեցող տղամարդիկ ամենաշատն են հետաքրքրված միգրացիայով (հմմտ.՝ աղյուսակ 19-ի հետ), իրականում միգրացիայի հակվածությունը բարձր կրթական մակարդակ ունեցողների շրջանում ավելի բարձր է ցածր (կամ միջին) կրթական մակարդակ ունեցողների համեմատ: Այս անհամապատասխանությունը ցույց է տալիս, որ մի բան է արտագաղթելու ցանկությունը և միանգամայն այլ բան է արտագաղթելու կարողությունը: Բարձր կրթական մակարդակ ունեցողներն ավելի շատ են տիրապետում անհրաժեշտ փաստաթղթերի: Սակայն սա նաև նշանակում է, որ ուղեղների արտահոսքը շարունակում է մնալ Հայաստանի սեփական զարգացման կարևոր հիմնախնդիր: Սա հատկապես ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ բարձր կրթական մակարդակ ունեցող կանայք ավելի հակված են արտագաղթելու (տես գծապատկեր 8-ը):

Գծապատկեր 8. Մեկնելու մտադրություն (ըստ կրթամակարդակի, %)



3.4. Պոտենցիալ միգրանտների միգրացիայից ունեցած սպասելիքներն ու օգուտները

Պոտենցիալ միգրանտների 82%-ը նշում է, որ հավանական է կամ շատ հավանական է, որ կարտագաղթի հարցմանը հաջորդող երկու տարիների ընթացքում: Ավելին, 45%-ը նշում է, որ հավանական է, որ կարտագաղթի հարցմանը հաջորդող վեց ամիսների ընթացքում:

Պոտենցիալ միգրանտների ճնշող մեծամասնությունը (97%) կարծում է, որ իր ֆինանսական դրությունը կբարելավվի արտերկիր տեղափոխվելու դեպքում: Ինչ

վերաբերում է արտերկրում նոր հմտություններ/որոկավորումներ ձեռք բերելու հավանականությանը, չնայած բավականին բարձր տոկոսն (69%) է կարծում, որ դա հավանական կամ շատ հավանական է, այնուամենայնիվ համոզվածությունը այնքան միանշանակ չէ, որքան նախորդ դեպքում:

Միգրացիայի հիմնական երկու երկրները Ռուսաստանը և ԱՄՆ-ն են (տես աղյուսակ 33-ը):

Աղյուսակ 33. Առավել հավանական երկիրը (%)

Ռուսաստան	60
ԱՄՆ	11
Ֆրանսիա	7
Գերմանիա	5
Կանադա	2
Միացյալ Թագավորություն	2
Իսպանիա	2
Իտալիա	1
Ուկրաինա	1
Շվեդիա	1
Ավստրալիա	1
Բուլղարիա	1
Բելգիա	1
Շվեյցարիա	1
Այլ	6
Ընդամենը	100

Ինչպես ընդհանրապես միգրացիայի, այնպես էլ կոնկրետ ուղղությամբ միգրացիայի գլխավոր երեք պատճառներն իրենց բնույթով տնտեսական են: Դրանցից հիմնականներն են աշխատանքի հնարավորություններն ու դրամական խնայողություններ ունենալը (տես աղյուսակ 34-ը):

Աղյուսակ 34. Առավել հավանական երկիր մեկնելու հիմնական դրդապատճառները (%)

Աշխատանքի և եկամուտներ ունենալու առավել լայն հնարավորություն	60
Դրամական խնայողություններ ունենալու համար	18
Սոցիալական ապահովության համակարգ	10
Կողակցին, ծնողներին ուղեկցելու համար	4
Ամուսնանալու նպատակով/ նոր եմ ամուսնացել	3
Նախկինում եղել եմ այնտեղ կարճատև այցով	1
Այնտեղ մարդիկ ընկերական են օտարերկրացիների նկատմամբ	1
Կրթական հնարավորություններ կային	1
Այնտեղ ընկերներ, բարեկամներ ունեմ	1
Երկրի լեզվին տիրապետում էի	1
Այլ	1
Ընդամենը	100

Միգրացիայի մասին մտածողների 68%-ն ակնկալում է վարձու աշխատանք ունենալ, ևս 16% ակնկալում է պատահական աշխատանք: Միգրացիայի մասին մտածողները հստակ չեն պատկերացնում աշխատանքի հեռանկարները. հարցվածների շուրջ կեսը կարծում է, որ հավանական է, որ արտերկրում գտած աշխատանքը կհամապատասխանի որակավորմանը (տես գծապատկեր 9-ը):

Գծապատկեր 9. Որքանո՞վ է հավանական, որ Ձեր կրթական որակավորմանը համապատասխան աշխատանք կգտնեք արտերկրում (%)



Որքան էլ զարմանալի է, միգրացիայի մասին մտածողների միայն 55%-ն է կարծում, որ ընդունող երկրի համապատասխան մարմինների կողմից իրենց որակավորումը ճանաչելը կարևոր է:

Միգրացիայի մասին մտածողների մեծամասնությունը ընդամենը ժամանակավորապես է ցանկանում մնալ նպատակային երկրում, և միայն 27%-ն է մտածում մշտական բնակություն հաստատելու մասին (տես աղյուսակ 35-ը):

Աղյուսակ 35. Ձեր կարծիքով, որքա՞ն ժամանակ կմնաք առավել հավանական երկրում (%)

մեկ տարուց քիչ	15
1-2 տարի	24
3-5 տարի	16
5-10 տարի	7
>10 տարի, բայց ոչ մշտական բնակության	11
Մշտական բնակության	27
Ընդամենը	100

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակում, կանայք ավելի հակված են երկար մնալու, քան տղամարդիկ: Երկու սեռերի դեպքում էլ կրթական մակարդակը ևս վճռորոշ է արտերկրում մնալու տևողության համար. նրանք, ովքեր կրթական ավելի բարձր մակարդակ ունեն, ավելի հակված են երկար կամ մշտապես մնալու:

Աղյուսակ 36. Ձեր կարծիքով, որքա՞ն ժամանակ կմնաք առավել հավանական երկրում (ըստ կրթամակարդակի և սեռի, %)

Սեռ			մեկ տարուց քիչ	1-2 տարի	3-5 տարի	5-10 տարի	>10 տարի, բայց ոչ մշտական բնակության	Մշտական բնակության	Ընդամենը
Արա-կան	Կրթամա կարդակ	Ցածր	20	21	18	9	2	30	100
		Միջին	23	27	12	6	9	22	100
		Բարձր	12	24	16	4	12	32	100
	Ընդամենը		20	26	14	6	9	26	100
Իգա-կան	Կրթամա կարդակ	Ցածր	13	31	0	21	0	35	100
		Միջին	9	22	19	9	13	27	100
		Բարձր	5	20	20	10	13	32	100
	Ընդամենը		8	22	19	10	13	29	100

Մեծ մասը (85%) նշում է, որ գումար կուղարկի տուն: Պոտենցիալ միգրանտների շուրջ 70%-ը կարծում է, որ շատ հավանական կամ հավանական է, որ արտերկյա փորձը կնպաստի վերադառնալուց հետո ավելի լավ աշխատանք գտնելուն: Ավելին, պոտենցիալ միգրանտների ճնշող մեծամասնությունը (86%) կարծում է, որ վերադառնալու դեպքում իրենք շատ ավելի լավ կամ ավելի լավ պայմաններում կլինեն, քան այժմ: Ոչ միգրանտները նույնպես կարծում են, որ վերադարձած միգրանտները շատ ավելի լավ կամ ավելի լավ պայմաններում են, քան արտերկիր չմեկնողները: Ավելին, միգրացիայի մասին չմտածողների մեծամասնությունը կարծում է, որ վերադարձած միգրանտների արտերկրում ձեռք բերած փորձը նպաստում է աշխատանք գտնելուն (տես գծապատկեր 10-ը):

Գծապատկեր 10. Արտերկրում ապրելիս և աշխատելիս մարդիկ այնպիսի փորձ են ձեռք բերում, որն օգնում է իրենց ավելի լավ աշխատանքի հնարավորություններ ստանալ վերադառնալուց հետո (% ոչ միգրանտներից)



Երբ դիտարկում ենք միգրացիայի նկատմամբ զուտ հետաքրքրությունը և իրականությունը, պարզ է դառնում, որ միգրացիան այնքան էլ ակնհայտ ընտրություն չէ: Պոտենցիալ միգրանտների մեծամասնությունը չունի միգրացիայի համար անհրաժեշտ միջոցներ, տեղյակ չէ աջակցության պաշտոնական ծրագրերից, և աջակցության հիմնական աղբյուրը սոցիալական կապերն են:

Այսպիսով՝ արտագաղթելու մտադրություն ունեցողների միայն 24%-ն է նշում, որ ունի արտերկիր տեղափոխվելու համար անհրաժեշտ ռեսուրսներ, ուստի նրանք հիմնականում հույսը դնում են ընտանիքի կամ բարեկամների, ինչպես նաև սեփական խնայողությունների վրա: 45%-ը կարծում է, որ արտերկիր կմեկնի առանց նախապես այնտեղ աշխատանք ունենալու: Արտերկրում ընկերները, ծանոթները և ընտանիքը նշվում են որպես աշխատանք գտնելու հարցում պոտենցիալ աջակցության հիմնական աղբյուր (տես աղյուսակ 37-ը):

Աղյուսակ 37. Արտերկրում աշխատանք գտնելու հիմնական ռազմավարություն (%)

Արտերկրում գտնվող ընկերներս/ծանոթներս	45
Այստեղ գտնվող ընտանիք	15
Արտերկրում գտնվող ընտանիքս	15
Արտերկրում գտնվող ընկերներս/ծանոթներ	14
Կառավարությունը/ղեկավարությունը	4
Մասնագիտական կապեր	2
Աշխատանքի տեղավորման գործակալություններն արտերկրում	2
Աշխատանքի տեղավորման գործակալություններն Հայաստանում	1
Ինտերնետը և այլ մեդիա հնարավորությունները	1
Ընդամենը	100

Ընդհանուր առմամբ, որպես արտերկիր տեղափոխվելու և աշխատելու համար ամենաանհրաժեշտ աջակցություն, նշվել է աշխատանք գտնելու հարցում օգնությունը (73%), դրան հաջորդում է բնակարան գտնելու հարցում աջակցությունը (11%): Արտերկիր տեղափոխվելու և աշխատելու հարցում աջակցության համար հիմնականում դիմում են հայրենիքում (89%) և արտերկրում (45%) գտնվող ընկերներին և ծանոթներին: Ընդամենը 6%-ն է որպես աջակցության աղբյուր նշել պետական կառավարման մարմինները, իսկ 8%-ը նշել է, որ օգնության համար կդիմի մասնավոր ընկերությունների և անհատների:
Սակայն ինչպես ցույց են տալիս արդյունքները, անձնական կապերը աջակցության ամենատարածված աղբյուրն են: Արտագաղթելու մտադրություն ունեցողների ընդամենը 11%-ն է տեղյակ կառավարական որևէ ծրագրի և/կամ արտերկրում օրինական կերպով աշխատելու հարցում աջակցող մասնավոր ընկերությունների մասին:

Պոտենցիալ միգրանտների 36%-ը նշում է, որ նպատակային երկրի մասին բավարար տեղեկություն չունի: Նպատակային պոտենցիալ երկրում գտնվող ընտանիքը, բարեկամներն ու ընկերները դարձյալ գլխավորում են

տեղեկատվության օգտակար աղբյուրների ցանկը, դրանց հաջորդում են նախկին անձնական փորձն ու զանգվածային լրատվամիջոցները (տես աղյուսակ 38-ը):

Աղյուսակ 38. Առավել հավանական երկրի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրներ (%)

Արտերկրում գտնվող ընտանիքը/ ընկերները	35
Նախկինում եղել եմ այնտեղ	19
Հեռուստատեսությունը/ ռադիոն	17
Համացանցը	16
Հայաստանում գտնվող ընտանիքս/ընկերներս	10
Դպրոց/ԲՈՒՀ	1
Թերթեր/գրքեր/ամսագրեր	1
Ընդամենը	100

Պոտենցիալ նպատակային երկրի մասին բավարար տեղեկություն չունեցողների ընդամենը 30%-ն է մտադիր մեկնելուց առաջ ավելի շատ տեղեկություններ ստանալ: Հայաստանից հեռանալուց առաջ դասընթացների հաճախելու հավանականությունը նույնպես փոքր է. հարցվածների միայն 30%-ն է կարծում, որ շատ հավանական կամ հավանական է, որ կմասնակցի դասընթացների (տես գծապատկեր 11-ը):

Գծապատկեր 11. Որքանո՞վ է հավանական, որ Դուք Հայաստանում կհաճախեք հատուկ դասընթացի արտերկրում ապրելու կամ աշխատելու նպատակով (%)



Առաջիկա երկու տարիների ընթացքում արտագաղթել ցանկացող պոտենցիալ միգրանտները փոքր-ինչ ավելի հակված են մեկնելուց առաջ Հայաստանում դասընթացների հաճախելու (19%), քան առաջիկա վեց ամիսների ընթացքում արտագաղթել ցանկացողները (13%):

Դասընթացների հաճախելու հակված պոտենցիալ միգրանտների 46%-ը նշում է, որ կցանկանար լեզվի դասընթացների մասնակցել: Այստեղ կարևոր է նշել, որ պոտենցիալ միգրանտներն ընդունող երկրի պաշտոնական լեզվին տարբեր չափով

են տիրապետում, ընդ որում՝ 20%-ն ընդհանրապես չի տիրապետում լեզվին (տես գծապատկեր 12-ը):

Գծապատկեր 12. Որքանո՞վ եք տիրապետում (կարողանում խոսել) Ձեր առավել հավանական երկրի լեզվով (%)



Մասնագիտական ուսուցումը, բարձրագույն/հետբարձրագույն կրթությունը նույնպես ուսուցման տարածված տեսակների շարքում են, համապատասխանաբար՝ 19% և 17%: 41%-ը կցանկանար աշխատանք գտնելու հեռանկարն ընդլայնելու համար միանգամայն նոր հմտություններ/գիտելիքներ ձեռք բերել, 19%-ը կցանկանար թարմացնել իր հմտություններն ու գիտելիքները, իսկ 16%-ը՝ կոնկրետ հմտություններ ձեռք բերել արտերկրում կոնկրետ աշխատանքի համար:

Միգրացիայի գործնական կազմակերպման ժամանակ նաև ընտանիքների պահպանման հետ կապված հարցեր են առաջանում: Շատ դեպքերում պոտենցիալ միգրանտները համոզված չեն, որ կմեկնեն իրենց ամուսնու կամ կնոջ հետ: Հավանաբար այսպիսի որոշման պատճառը նպատակային երկրում իրենց ապագայի անորոշությունն է (99%-ը չի կարողացել ամուսնու/կնոջ հետ չմեկնելու պատճառ նշել): Հարցվածների ընդամենը 1%-ն է նշել, որ ամուսինը/կինը ցանկանում է մնալ:

3.5. Տնտեսական կենսապայմաններ

Ըստ Հայաստանի վիճակագրական տարեգրքի (2011)՝ 2009թ. Հայաստանի բնակչության 34%-ը դասակարգվել է որպես աղքատ, իսկ ևս 4%-ը՝ ծայրահեղ աղքատ:

Ըստ հարցման տվյալները վերլուծելու համար օգտագործված սոցիալական պայմանների ցուցիչի, որն ի տարբերություն եկամտի վրա հիմնված աղքատության

չափումներից, հաշվի է առնում այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են տնային տնտեսությունում ապրող մարդկանց թիվը, ինչպես նաև տարբեր երկարաժամկետ օգտագործման առարկաներն ու ապրանքները, բնակչության 12%-ը դասվում է «վատ կենսապայմաններ ունեցողների» շարքին (տես գծապատկեր 13-ը):

Գծապատկեր 13. Սոցիալական պայմանների ցուցիչ (%)



Միգրացիայի նկատմամբ հետաքրքրությունը շատ քիչ է տարբերվում ըստ սոցիալական պայմանների ցուցիչի, ընդ որում՝ ավելի լավ սոցիալական պայմաններում ապրողները փոքր-ինչ ավելի շատ են հետաքրքրված միգրացիայով (տես գծապատկեր 14-ը):

Գծապատկեր 14. Սոցիալական պայմանների ցուցիչ (ըստ միգրացիոն մտադրության, %)



Տնտեսական պայմանների ցուցիչը[24] ներառում է տնային տնտեսության թե ֆիզիկական, թե ֆինանսական ակտիվները, և բաղկացած է այնպիսի փոփոխականներից, ինչպիսիք են տան սեփականատիրությունը, տնային տնտեսության եկամուտը, հողի սեփականատիրությունը և արտերկրից դրամական փոխանցումները: Ըստ այս ցուցիչի՝ ընդհանուր ընտրանքի տնային տնտեսությունների 61%-ն ապրում է վատ կամ որոշ չափով վատ պայմաններում (տես գծապատկեր 15-ը):

Գծապատկեր 15. Պոտենցիալ միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (%)



Չնայած այս ցուցիչն էականորեն չի տարբերվում տղամարդ և կին հարցվածների շրջանում՝ կարելի է նկատել, որ պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների տնտեսական պայմանները տարբեր են, ընդ որում՝ վատ և շատ ավելի լավ պայմաններում ապրողները ավելի շատ են հետաքրքրված միգրացիայով (տես գծապատկեր 16-ը):

Գծապատկեր 16. Պոտենցիալ միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (ըստ մեկնելու մտադրության, %)



[24] Տնտեսական պայմաններ ցուցչի համար օգտագործվել են հետևյալ շեմերը. վատագույն պայմաններ- 0-1.0, որոշ չափով վատ -1.1-2.0, որոշ չափով լավ –2.1-3.0, լավ պայմաններ- 3.1-4.0:

Տնային տնտեսության ընդհանուր ֆինանսական դրությունը գնահատելիս ամբողջ ընտրանքի հարցվածների ընդամենը 18%-ն է նշել, որ տարրական պահանջմունքները բավարարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ ունի (տես գծապատկեր 17-ը):

Գծապատկեր 17. Ձեր տ/տ ֆինանսական միջոցները ընդհանուր առմամբ բավարա՞ր են հիմնական կարիքները հոգալու համար(%)



Տնային տնտեսության ֆինանսական դրությունը պոտենցիալ միգրանտներն ավելի շատ են գնահատում որպես ոչ բավարար կամ միանգամայն անբավարար (53%), քան՝ ոչ միգրանտները (46%):

Ինչ վերաբերում է հարևանների համեմատ իրենց տնտեսական դրության գնահատմանը, բոլոր հարցվածների 63%-ը կարծում է, որ ինքը նույն կերպ է ապրում, 17%-ը կարծում է, որ ավելի լավ է ապրում, իսկ 16%-ը՝ որ ավելի վատ է ապրում, քան հարևանները: Պոտենցիալ միգրանտների 21, իսկ ոչ միգրանտների 19%-ն է կարծում, որ ավելի կամ շատ ավելի վատ է ապրում, քան հարևանները:

Գլուխ 4: Վերադարձած միգրանտների հետազոտության տվյալների արդյունքները

Վերադարձած միգրանտների հետազոտությունը նպատակաուղղված էր 18 տարեկան և բարձր տարիքի հարցվածներին, ովքեր հեռացել էին Հայաստանից, առնվազն 3 ամիս շարունակաբար աշխատել արտերկրում և վերադարձել են ոչ ավելի քան 10 տարի առաջ: Հետազոտության մեջ օգտագործվել է ընտրանքի ձնագնդի մեթոդը և չի ներկայացնում Հայաստանի ամբողջ վերադարձած միգրանտ բնակչությանը: Ընդհանուր առմամբ, 1400 վերադարձած միգրանտներ են հարցվել:

4.1. Վերադարձող միգրանտների կրթությունը, գիտելիքները (հմտությունները) և սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը

Վերադարձած միգրանտների սեռային բաշխվածությունը բավական անհավասար է՝ հետազոտության ընտրանքի 87%-ը տղամարդիկ էին, իսկ 13%-ը՝ կանայք: Ըստ տարիքի և սեռի բաշխվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 39. Վերադարձած միգրանտներ (ըստ տարիքի և սեռի)

			Սեռ		*Ընդամենը*
			Արական	Իգական	
Տարիքային խմբեր	18-24	Բացարձակ թիվ	102	13	*115*
		% ըստ սեռի	8	7	*8*
	25-30	Բացարձակ թիվ	300	37	*337*
		% ըստ սեռի	25	20	*24*
	31-35	Բացարձակ թիվ	223	31	*254*
		% ըստ սեռի	18	17	*18*
	36-40	Բացարձակ թիվ	176	24	*200*
		% ըստ սեռի	15	13	*14*
	41-45	Բացարձակ թիվ	171	39	*210*
		% ըստ սեռի	14	21	*15*
	46-50	Բացարձակ թիվ	237	41	*278*
		% ըստ սեռի	20	22	*20*
Ընդամենը		*Բացարձակ թիվ*	*1209*	*185*	*1394*
		% ըստ սեռի	*100*	*100*	*100*

Վերադարձած միգրանտների մեծամասնությունը՝ 73%-ը, ամուսնացած էր, 23%-ն՝ ամուրի, 3%-ն՝ ամուսնալուծված և 1%-ը՝ բաժանված: Կին վերադարձած միգրանտների մեծ տոկոսը՝ 45%, ամուսնացած չեն (չլինելով երբևէ ամուսնացած, ամուսնալուծված կամ այրիացած): Վերադարձած միգրանտների 72%-ը երեխաներ ունի (տես նաև գծապատկեր 18-ը):

Գծապատկեր 18. Ամուսնական կարգավիճակ (%)



Ամուսնացած վերադարձած միգրանտների 81%-ն արտագաղթել է առանց իրենց կողակիցների: Կին վերադարձած միգրանտների զգալիորեն բարձր տոկոսը (63%), ճամփորդել է իրենց ամուսինների հետ՝ ի տարբերություն տղամարդ վերադարձած միգրանտների (14%): Այն մարդկանց 63%-ը, ովքեր արտագաղթել են միայնակ, նշել է, որ կինը մնացել է Հայաստանում երեխաների և/կամ այլ խնամակալների մասին հոգ տանելու համար, և 10%-ը նշել է, որ ֆինանսապես դժվար կլիներ միասին գնալ:

Վերադարձած միգրանտները տանը գերազանցապես խոսում են հայերեն: Ըստ հարցվածների՝ բացի հայերենից, առավել տարածված լեզուները, որոնցով իրենք խոսում են՝ ռուսերենը, ֆրանսերենը և անգլերենն են: Հարցվածների շուրջ 70%-ը խոսում է ռուսերեն լավ կամ սահուն: 7%-ը խոսում է անգլերեն լավ կամ սահուն և ևս 13%-ն անգլերենից տարրական գիտելիքներ ունի:

Նախքան իրենց առաջին միգրացիան, վերադարձած միգրանտների մեծամասնությունը (88%), ունեցել է ավագ դպրոցի/վարժարանի կրթություն կամ բարձրագույն կրթություն: Համեմատելով կրթական ոլորտում ազգային տվյալները՝ վերադարձած միգրանտների խմբերում ավելի շատ մարդիկ (12%) ունեն ցածր մակարդակի կրթություն, քան՝ ընդհանուր բնակչությունը (շուրջ 7%): Կին վերադարձած միգրանտներն ունեն ավելի բարձր մակարդակի կրթություն, քան տղամարդիկ, ընդ որում կանանց 38%-ն ունի բարձրագույն կրթական աստիճան՝ ի տարբերություն տղամարդկանց 20%-ի (տես գծապատկեր 19-ը):

Գծապատկեր 19. Առաջին անգամ արտերկիր մեկնելու պահին, ո՞րն էր ավարտական վկայականով/դիպլոմով հավաստվող Ձեր ամենաբարձր կրթամակարդակը (%)



Եթե հասարակական և հումանիտար գիտությունները ամենատարածված կրթական ոլորտներն էին 18-ից 50 տարեկան բնակչության շրջանում (շուրջ 50%), ապա վերադարձած միգրանտների շրջանում ավելի տարածված են ճարտարագիտության, արդյունաբերության և շինարարության (23%), բնական գիտությունների (17%) և ծառայությունների (14%) ոլորտի որակավորումները (տես աղյուսակ 40-ը):

Աղյուսակ 40. Կրթության հիմնական ոլորտը նախքան առաջին միգրացիան

	Բացարձակ թիվ	%
Ճարտարագիտություն, արտադրություն, շինարարություն և ճարտարապետություն	145	23
Բնական գիտություններ (ֆիզիկա, մաթեմատիկա և վիճակագրություն, համակարգչային գիտություններ)	111	17
Ծառայություններ (անհատական ծառայություններ, տրանսպորտ, շրջակա միջավայր և անվտանգություն)	89	14
Սոցիալական և վարքագծային գիտություններ, լրագրություն և տեղեկատվություն, գործարարություն (բիզնես) և իրավագիտություն	81	13
Հումանիտար գիտություններ և արվեստ	62	10
Մանկավարժություն	49	8
Առողջապահություն և սոցիալական աշխատանք	44	7
Գյուղատնտեսություն, անտառատնտեսություն, ձկնորսություն և անասնաբուժություն	39	6
Դժվարանում եմ պատասխանել	10	2
Պատասխան չկա	8	1
Ընդամենը	638	100

Վերադարձած միգրանտների 36%-ի համար իրենց ներկայիս կրթական մակարդակը տարբերվում է առաջին միգրացիայից առաջ ունեցած կրթական մակարդակից, ընդ որում 8%-ը ստացել է միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն, իսկ ևս 8%-ը՝ բարձրագույն կրթություն: Նրանց համար, ովքեր շարունակել են բարձրագույն կրթությունը, ամենատարածված որակավորումներն էին սպասարկման ոլորտում՝ ներառյալ հանրային ծառայությունները, տրանսպորտը, զբոսաշրջությունը, շրջակա միջավայրը և անվտանգությունը, հասարակական գիտությունները և այլ գիտությունները՝ ներառյալ կենսական գիտությունները, ֆիզիկան, մաթեմատիկան, վիճակագրությունն և համակարգչային գիտությունը:

Վերադարձած միգրանտների միայն 9%-ն է մտադիր շարունակել կրթությունը: Նրանց նախընտրած ուսումնառության ոլորտների ցանկը գլխավորում են հասարակական, հումանիտար գիտությունները և արվեստը՝ որոնց հաջորդում են այլ գիտությունները, ճարտարագիտությունը և ծառայությունները:

Վերադարձած միգրանտները գրեթե միաձայն (ավելի քան 90%) համաձայն են այն պնդմանը, որ կրթությունն օգնում է մարդկանց բարելավելու իրենց ապրելակերպը, և կարևոր է ներդրում կատարել ուսման ոլորտում: Վերադարձած միգրանտներն այնքան էլ միակարծիք չէին, թե ինչ առնչություն ունի կրթությունը արտերկրում լավ աշխատանք գտնելու համար. նրանց 61%-ը կամ լիովին համաձայն էին կամ համաձայն էին, որ բարձրագույն կրթությունը ապահովում է արտերկրում լավ աշխատանք, 35%-ը կամ համաձայն չէին կան ամենևին համաձայն չէին այս պնդմանը (տես գծապատկեր 20):

Համեմատելով այս տվյալները պոտենցիալ միգրանտների և «ոչ միգրանտների» հետազոտության հետ՝ կարող ենք տեսնել, որ վերադարձած միգրանտներն ինչ-որ չափով ավելի պակաս լավատես են արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելու հարցում կրթության դերի մասին: Մինչդեռ 18-ից 50 տարեկան բնակչության 71%-ը (պոտենցիալ միգրանտները և ոչ միգրանտները միասին վերցրած. տես գծապատկեր 3-ը) կարծում է, որ կրթությունն օգտակար է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելու համար, այսպես է մտածում արտագաղթի իրողությունը իրականում զգացածների միայն 63%-ը:

Գծապատկեր 20. Հայաստանում հնարավորինս բարձր կրթամակարդակ ունենալը նպաստում է արտերկրում ավելի լավ աշխատանք գտնելուն (%)



4.2. Արտագաղթի պատմությունը և փորձը

Տարբեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արտագաղթը Հայաստանում ունի սեզոնային բնույթ: ԱՄԿ-ն (2009) գտնում է, որ միգրանտների մեծամասնությունը հեռանում է գարնանը և վերադառնում ուշ աշնանը կամ ձմռանը: Ըստ նույն ուսումնասիրության, միգրանտները արտերկրում մնում են միջինում 9 ամիս: Ըստ հետազոտության արդյունքների, վերադարձած միգրանտներն արտերկրում անցկացնում են միջինում մեկ տարի: Կին վերադարձած միգրանտներն ավելի հակված են մնալ 2 տարուց ավելի, քան տղամարդ վերադարձած միգրանտները: Այս եզրակացությունը նման է պոտենցիալ միգրանտների հարցման եզրակացությանը, որտեղ կին միգրանտները նախատեսում են ավելի երկար մնալ նպատակային երկրում (տես աղյուսակ 41):

Աղյուսակ 41. Վերադարձած միգրանտների սեռը (ըստ արտերկրում բնակվելու տևողության)

		Սեռ		*Ընդամենը*
		Արական	Իգական	
3-6 ամիս	Բացարձակ թիվ	325	50	*375*
	% ըստ սեռի	28	27	*28*
7-9 ամիս	Բացարձակ թիվ	312	15	*327*
	% ըստ սեռի	27	8	*24*
10-12 ամիս	Բացարձակ թիվ	105	20	*125*
	% ըստ սեռի	9	11	*9*
1-2 տարի	Բացարձակ թիվ	176	28	*204*
	% ըստ սեռի	15	15	*15*
2 տարուց ավել	Բացարձակ թիվ	251	70	*321*
	% ըստ սեռի	21	38	*24*
Ընդամենը	***Բացարձակ թիվ***	***1169***	***183***	***1352***
	% ըստ սեռի	***100***	***100***	***100***

Վերադարձած միգրանտների մեծամասնության համար (60%) իրենց միգրացիոն կարիերան բաղկացած է միայն մեկ միգրացիոն փորձից (նվազագույնը՝ 3 ամիս), 15%-ն ունեցել են 4 և ավելի միգրացիոն փորձ (տես աղյուսակ 42-ը):

Աղյուսակ 42. Միգրացիոն փորձերի քանակը

	Բացարձակ թիվ	%
1-ին միգրացիոն փորձ	829	59
2-րդ միգրացիոն փորձ	241	17
3-րդ միգրացիոն փորձ	116	8
4-րդ միգրացիոն փորձ	62	4
5-րդ միգրացիոն փորձ	36	3
6-րդ միգրացիոն փորձ	23	2
7-րդ միգրացիոն փորձ	20	1
8-րդ միգրացիոն փորձ	68	5
Ընդամենը	1395	100

Միգրացիայի ամենատարածված ուղղությունը Ռուսաստանն էր. այն առաջին նպատակային երկիրն էր վերադարձած միգրանտների 84%-ի համար:

Ռուսաստանը նաև բոլոր հաջորդող միգրացիոն փորձերի գերակշռող նպատակային երկիրն էր: Այլ (առաջին) նպատակային երկրներն էին ՝ ԱՄՆ-ն (2%), Ուկրաինան (2%) և Գերմանիան (2%): Շուրջ 1%-ն արտագաղթել է համապատասխանաբար Թուրքիա, Լեհաստան, Ֆրանսիա և Վրաստան:
Միգրացիայի պատճառները տարբեր չեն՝ կախված միգրացիայի երկրից. Հայաստանից հեռանալու առաջին ամենակարևոր պատճառները տնտեսական բնույթի են, միայն միգրանտների 1%-ն է վերապատրաստումը նշում որպես արտագաղթի հիմնական պատճառ (տես աղյուսակ 43):

Աղյուսակ 43. Միգրացիայի ամենակարևոր պատճառը

	Բացարձակ թիվ	%
Աշխատանքի բացակայությունը Հայաստանում	789	57
Չգոհացնող աշխատավարձ / աշխատանքային հեռանկարներ	134	10
Կենսապայմանները բարելավելու նպատակով	119	9
Արտերկրում բարձր աշխատավարձ ստանալու ակնկալիքով	95	7
Պարտքերը վերադարձնելու նպատակով	52	4
Արտերկրում գտնվող բարեկամներին, ընկերներին միանալու նպատակով	39	3
Աշխատանքային պայմանները ծանր են Հայաստանում	31	2
Արտերկրում գտնվող կողակցին, ծնողներին ուղեկցելու նպատակով	23	2
Հայաստանում ապագա չկա	18	1
Սոցիալական ապահովության չգոհացնող համակարգ (մասն. առողջապահությունը և թոշակները)	13	1
Ամուսնանալու նպատակով	13	1
Կրթություն ստանալու, դասընթացներին մասնակցելու նպատակով	12	1
Ցանկանում էի մեկնել/ ապրել արտերկրում	9	1
Այլ	45	2
Ընդամենը	1392	100

Վերադարձած միգրանտների ճնշող մեծամասնությունը (98%) արտագաղթել է առանց որևէ նախնական վերապատրաստման, որը կնախապատրաստեր նրանց արտերկրում բնակվելու և աշխատելու համար: Միայն շուրջ 1%-ն է հաճախել լեզվի դասընթացների:

Դեռ ավելին, 94%-ը տեղյակ չի եղել կառավարության ծրագրերի կամ մասնավոր ընկերությունների և անհատների մասին, ովքեր օգնում են աշխատանք գտնել արտերկրում. միայն շուրջ 2%-ն է տեղյակ իրենց երկրում գործող, ևս 2%-ը՝ նպատակային երկրում գործող մասնավոր ընկերությունների և անհատների մասին, որոնք օգնում են աշխատանք գտնել արտերկրում: Բոլոր վերադարձած միգրանտներից իրականում միայն 5%-ն է օգտվել կառավարության ծրագրերից, մասնավոր ընկերություններից, անհատներից՝ առավել հաճախ ստանալով

տեղեկատվական օգնություն աշխատանքի իրավական պահանջների մասին և արտերկիր մեկնելու համար անհրաժեշտ իրավական պահանջների մասին:

Ի տարբերություն ստացած տեղեկության՝ վերադարձած միգրանտների մեծամասնությունը, հետ հայացք նետելով արտերկրում իր փորձին, արտերկրում աշխատանք գտնելու հարցում աջակցությունը համարում է աջակցության ամենացանկալի տեսակը արտերկիր տեղափոխվելու և աշխատելու համար (տես աղյուսակ 44):

Աղյուսակ 44. Արտերկիր մեկնելու և աշխատելու հարցում ինչպիսի՞ աջակցությունն է առավել կարևոր

	Բացարձակ թիվ	%
Արտերկրում աշխատանք գտնելու / աշխատելու	1038	76
Ընդունող երկրում ձևակերպումների/ կարգավորումների	131	10
Արտերկրում բնակարան գտնելու	92	7
Հայաստանում անհրաժեշտ ձևակերպումների/ կարգավորումների	42	3
Լեզվի դասընթացներ	23	2
Հմտությունների ճանաչման/գնահատման և հաստատման ծառայություններ	8	1
Դժվարանում եմ պատասխանել	25	2
Ընդամենը	1367	100

Արտերկրում աշխատանք գտնելու համար հաճախակի պետք եկող այս օգնությունը սովորաբար գալիս է տանը կամ արտերկրում գտնվող ընտանիքի և ընկերների կողմից: Կառավարության ծրագրերն, ընդհակառակը, աննշան դեր են խաղացել (տես աղյուսակ 45-ը):

Աղյուսակ 45. Արտերկրում աշխատանք գտնելու ամենագլխավոր միջոցը

	Բացարձակ թիվ	%
Արտերկրում բնակվող ընտանիքի անդամներից/բարեկամներից	430	32
Արտերկրում բնակվող ընկերներից/ծանոթներից	424	31
Հայաստանում բնակվող ընկերներից/ծանոթներից	270	20
Հայաստանում բնակվող ընտանիքի անդամներից/ազգականներից	143	11
Իմ մասնագիտական ցանցով	44	3
Պաշտոնական պետական ծրագրերից/ կառույցներից	21	2
Համացանցից և այլ մեդիա ռեսուրսներից	13	1
Արտերկրի գործակալություններից	7	1
Հայաստանում գործող գործակալություններից	4	0
Ընդամենը	1356	100

Աշխատանքի ամատարածված տեսակը, որ վերադարձած միգրանտներն ունեցել են արտերկրում, շինարարությունն է, որին հաջորդում են առևտուրը և արդյունաբերությունը (տես գծապատկեր 21-ը):

Գծապատկեր 21. Արտերկրում առաջին աշխատանքի տեսակը (%)



Վերադարձած միգրանտների շուրջ կեսի աշխատանքն արտերկրում որակավորում չպահանջող աշխատանք է եղել, իսկ 34%-ն աշխատել է որպես որակավորված աշխատող: Կարելի է դրական կապ նկատել վերադարձած միգրանտների կրթության մակարդակի և արտերկրում իրենց աշխատանքի մակարդակի միջև, որտեղ փոքր-ինչ ավելի քիչ հավանական է, որ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող վերադարձած միգրանտները կատարել են որակավորում չպահանջող աշխատանք, քան՝ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները (տես նաև աղյուսակ 2-ը Հավելված 1-ում):

Ավելի շատ կանայք են աշխատել որպես որակավորում չունեցող աշխատողներ, քան՝ տղամարդիկ (59%՝ 47%-ի դիմաց): 54%-ը նշել է, որ իրենց կրթական որակավորումը պաշտոնապես չի ճանաչվել արտերկրում, քանի որ առնչություն չի ունեցել աշխատանքի այն տեսակի հետ, որով նրանք զբաղվել են: Եվս 10%-ը տեղյակ չի եղել նման հնարավորության մասին (անկախ այն բանից՝ հնարավորություն եղել է, թե ոչ):

Երբ նրանց հարցրել են, արդյոք իրենց կրթական մակարդակը համապատասխանում է իրենց աշխատանքին, վերադարձած միգրանտների կեսից ավելին նշել է, որ իրենք կատարել են իրենց կրթական մակարդակին համապատասխան աշխատանք, 28%-ը նշել է, որ կատարել է կրթական մակարդակից ցածր աշխատանք: Բարձրագույն կրթություն ունեցողների 55%-ը նշել է, որ իրենց աշխատանքն իրենց կրթական մակարդակից ցածր է եղել: Ընդ որում, ավելի շատ կանայք են նշել իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք ունենալու մասին, քան՝ տղամարդիկ:

Գծապատկեր 22. Այդ աշխատանքը համապատասխանու՞մ էր արդյոք Ձեր կրթամակարդակին (%)



Նմանապես, ավելի շատ կին վերադրաձած միգրանտները և հատկապես բարձր կրթական մակարդակ ունեցողներն են հայտնել, որ իրենց հմտությունները գերազանցում էին արտերկրում իրենց կատարած աշխատանքի համար պահանջվող հմտությունները (տես նաև աղյուսակ 4-ը Հավելված 1-ում): Վերադարձած միգրանտների մեծամասնությունն արտերկրում եղած ժամանակ միայն մեկ աշխատանք է ունեցել, ընդ որում միայն 14%-ն է աշխատանքներ փոխել:

Միգրանտների մեծամասնությունն (70%) նշել է, որ իրենք ունեցել են սահմանափակ կամ կարճաժամկետ բնակության թույլտվություն արտերկրում, 9%-ը նշել է, որ իրենք չեն ունեցել որևէ իրավական կարգավիճակ (տես Աղյուսակ 46):

Աղյուսակ 46. Աշխատանքային կարգավիճակը տեղակայման հիմնական երկրում

	Բացարձակ թիվ	%
Կաճաժամկետ բնակվելու թույլտվություն (օր.՝ սեզոնային աշխատանքի)	971	70
Մշտական/երկարժամկետ բնակվելու թույլտվություն	182	13
Առանց իրավական կարգավիճակի	130	9
Այդ երկրի քաղաքացի	56	4
Ապաստան փնտրող	15	1
Զբոսաշրջության վիզա	12	1
Ուսանող/համալսարանում հետազոտող	9	1
Ապաստան փնտրողի/փախստականի պաշտոնական կարգավիճակ	4	0
Ընդամենը	1379	100

Ավելին, միգրանտներից շատերը արտերկրում աշխատել են առանց անհրաժեշտ պետական փաստաթղթերի, ինչպես օրինակ՝ առանց պետական բնակության և աշխատանքի թույլտվությունների: Ճնշող մեծամասնությունը գործատուի հետ չի ունեցել աշխատանքային պաշտոնական պայմանագիր: Սոցապ

հատկացումների տրամադրումը հազվադեպ բացառություն է եղել (տես աղյուսակ 47-ը):

Աղյուսակ 47. Աշխատանքային պայմանագրի առկայություն (%)

Ունեի պաշտոնական (գրավոր) պայմանագիր արտերկրի իմ գործատուի հետ	14
Արտերկրում ունեի պաշտոնական սոցիալական ապահովություն	2
Ունեի պաշտոնական աշխատանքային թույլտվություն համապատասխան պետական հաստատությունից	20
Ունեի բնակություն հաստատելու պաշտոնական թույլտվություն համապատասխան պետական հաստատությունից	12

Ընդհանուր առմամբ, վերադարձած միգրանտները կարծես գոհ են արտերկրի իրենց փորձառությունից: Միայն միգրանտների 18%-ն է, որ արտերկրում աշխատելու ընթացքում բացասական փորձ ունի: Միգրանտների 12%-ն աշխատավայրում անարդար վերաբերմունքի է արժանացել, 4%-ն անարդար վերաբերմունքի է արժանացել իշխանությունների կողմից, 4%-ը գանգատվել է տեղական բնակչության մերժողական և անբարյացակամ վերաբերմունքից և 1%-ն ենթարկվել է ֆիզիկական հարձակումների և բռնության: Կին միգրանտներն ավելի քիչ բացասական փորձառություն ունեն, քան՝ տղամարդիկ, համապատասխանաբար՝ 10% և 19%:

Միգրանտների 30%-ն արտերկրում եղած ժամանակ ունեցել է առանց աշխատանքի ժամանակահատված. նրանց մեծամասնությունը չի աշխատել մեկից վեց ամիս: Այս ժամանակահատվածի ընթացքում վերադարձած միգրանտների միայն 8%-ն է ստացել որևէ ինստիտուցիոնալ օգնություն. 4%-ը ստացել է նպաստներ (օրինակ՝ գործազրկության, ընտանեկան, սոցիալական աջակցության և բնակարանային նպաստներ), 3%-ն ուղղություն է ստացել աշխատանք գտնելու համար և 1%-ն ուսուցում է ստացել:

Վերադարձած միգրանտները միջին հաշվով աշխատել են շաբաթական 56 ժամ: Արտերկրում աշխատելու ընթացքում ամսական միջին վաստակած գումարը կազմել է 612 եվրո: Տղամարդ վերադարձած միգրանտներն արտերկրում ավելի շատ գումար են վաստակել, քան կին վերադարձած միգրանտները. համեմատած կին վերադարձած միգրանտների քառորդ մասի հետ, ովքեր վաստակել են 290 եվրոյից ավելի, տղամարդ վերադարձած միգրանտների 38%-ն ամսական վաստակել է ավելի քան 290 եվրո (տես նաև Աղյուսակ 5-ը Հավելված 1-ում): Արտերկրում վաստակած միջին եկամուտը մեծապես փոխկապակցված է կրթության մակարդակի հետ. ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողներն արտերկրում ավելի շատ գումար են վաստակել (տես գծապատկեր 23-ը):

Գծապատկեր 23. Արտերկրում ունեցած ամսական միջին եկամուտը եվրոյով (ըստ հարցվողների կրթական մակարդակի)



Վերադարձած միգրանտների միայն 6%-ն է արտերկրում վերապատրաստման մասնակցել: Վերապատրաստման մասնակիցները նշում են, որ ամենատարածվածները լեզվի գծով վերապատրաստումներն էին, որոնց հաջորդում էին աշխատավայրում վերապատրաստումը և բարձրագույն/հետբարձրագույն կրթությունը: Վերադարձած միգրանտների 35%-ը նշում է, որ արտերկրում ունեցած իրենց փորձից որևէ նոր գիտելիքներ ձեռք չեն բերել: Իսկ նրանց համար, ովքեր ձեռք են բերել գիտելիքներ, լեզվի և միջնակարգ մասնագիտական/տեխնիկական գիտելիքները ամենատարածվածների ցանկում էին (45%): Նոր գիտելիքներ ձեռք բերածների միայն 7%-ն է ստացել այդ գիտելիքները վավերացնող վկայական:

Միգրանտների 76%-ն արտերկրում եղած ժամանակ գումար է ուղարկել տուն, հիմնականում ծնողներին և/կամ իրենց կողակցին: Տղամարդ վերադարձած միգրանտների կողմից դրամական փոխանցումների կատարումը գրեթե երկու անգամ ավել է, քան կին վերադարձած միգրանտների կողմից: Երկու սեռերի դեպքում էլ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողների կողմից տուն գումար ուղարկելն ավելի քիչ հավանական է եղել (տես աղյուսակ 6-ը Հավելված 1-ում):

Վերադարձած միգրանտները յուրաքանչյուր ամիս միջինը 287 եվրո են ուղարկել: Դրամական փոխանցումները հիմնականում օգտագործվել են ընտանիքի և ազգականների ապրուստը հոգալու համար: Միայն 2 հարցվածներ են նշել, որ դրամական փոխանցումներն օգտագործել են բիզնես գործունեության համար (տես աղյուսակ 48-ը):

Աղյուսակ 48. Ի՞նչ նպատակով եք օգտագործել Ձեր խնայողությունները

	Բացարձակ թիվ	%
Ընտանիքի և ազգականների ապրուստի ծախսերի	995	94
Գույքի ձեռքբերման	161	15
Առողջապահության ծախսերի	124	12
Իմ կրթության	87	8
Տնական օգտագործման ապրանքների գնման	73	7
Խնայողությունների	41	4
Երեխաների կրթության	6	0.6
Բիզնես գործունեություն ծավալելու	2	0.2

Միգրացիոն արդյունքի ցուցիչը չափվում է մի շարք գործոնների հիման վրա, ինչպես օրինակ՝ արտերկրում կարիերայի առաջխաղացում, աշխատանքի և հմտությունների մակարդակների համապատասխանություն, աշխատանքում հոգեկան հանգստություն, որակավորման ճանաչում, աշխատանքում արդար վերաբերմունք, գործազրկություն արտերկրում, հմտությունների զարգացում, դրամական փոխանցումներ և իրավական կարգավիճակ: Ըստ այս ցուցանիշի, միգրանտների մեծամասնությունը (82%) պատկանում է հաջողակ միգրանտների խմբին (տես գծապատկեր 24-ը):

Գծապատկեր 24. Միգրացիոն արդյունքի ցուցիչ (n=1228, %)



Երբ սեռը և ուսումը դիտարկում ենք առանձին, ավելի բարձր կրթական աստիճան ունեցող վերադարձած միգրանտներն ավելի քիչ հաջողված փորձ ունեն, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները: Այս մոդելը հատկապես ակնհայտ է կին վերադարձած միգրանտների դեպքում (տես գծապատկեր 25-ը): Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք, որ վերադարձած միգրանտների ընտրանքը չի ներկայացնում փաստացի միգրանտների ամբողջ խումբը: Հնարավոր է, որ ամենահաջող միգրացիոն փորձ ունեցողները երբեք չվերադառնան:

Գծապատկեր 25. Միգրացիոն արդյունք (ըստ կրթական մակարդակի և սեռի, %)



4.3. Վերադառնալուց հետո

Հայաստան վերադառնալու երեք ամենատարածված պատճառներն են՝ ընտանիքի հետ վերամիավորումը (40%), պայմանագրի ավարտը (12%) և ցածր եկամուտը (8%) (տես աղյուսակ 49):

Աղյուսակ 49. Ո՞րն էր վերադարձի ամենակարևոր պատճառը

	Բացարձակ թիվ	%
Ընտանիքին միանալու համար	562	41
Աշխատանքային պայմանագիրն ավարտվեց	169	12
Ցածր եկամուտ	118	9
Այնտեղ երեխաներին մեծացնելու խնդիրը	84	6
Ամուսնանալու նպատակով	61	4
Չէի կարողանում համակերպվել այնտեղ	43	3
Պաշտոնական թույլատվության ժամկետն ավարտվել է	41	3
Սա է իմ երկիրը	35	3
Առողջական վիճակի պատճառով	32	2
Աշխատանքային թույլատվության ժամկետն ավարտվել է	27	2
Այլ ընտանեկան պատճառներով	25	2
Այլ	105	13

Վերադարձից հետո հարցվածների 45%-ը նշել է, որ իրենք աշխատանք չեն կարողացել գտնել: Միայն հարցվածների 1%-ն է լսել պաշտոնական ծրագրերի մասին, որոնք վերադարձի ժամանակ աջակցում են մարդկանց: Ընդ որում, հարցվածներից ոչ մեկը նման ծրագրից չի օգտվել:

Հարցվածների 67%-ը վերադարձել է խնայողություններով՝ միջինը 859 եվրո: Այս խնայողությունները օգտագործելու 2 առաջնային ուղղություններն են՝ ընտանիքի ապրուստի միջոցները հոգալը և սեփականություն գնելը (տես աղյուսակ 50):

Աղյուսակ 50. Ի՞նչ նպատակով են օգտագործվել խնայողությունները

	Բացարձակ թիվ	%
Ընտանիքի և ազգականների ապրուստի ծախսերի	765	82
Գույքի ձեռքբերման	176	19
Տնական օգտագործման ապրանքների գնման	88	9
Առողջապահության ծախսերի	86	9
Ուրիշների կրթության	43	5
Խնայողությունների	27	3
Երեխաների կրթության	17	2
Բիզնես գործունեություն ծավալելու	10	1

Վերադարձածների միայն 3%-ն է արտերկրում աշխատելու համար ստանում կենսաթոշակ կամ նպաստներ: Նպաստ չունենալու պատճառների մասին հարցին նրանց 60%-ն, ովքեր արտերկրում որևէ նպաստային սխեմա չեն ունեցել, նշել է, որ չեն աջակցել որևէ սխեմայի, 26%-ը նշել է, որ նման նպաստներ չկային և 7%-ը նշել է, որ սխեման հնարավոր չէր փոխանցել:

Վերադարձից հետո միգրանտների 42%-ը Հայաստանում աշխատանք է գտել, ընդ որում աշխատանք գտնողների 60%-ը վարձու աշխատողներ են: Վերադարձածներն միջինը մեկ տարում աշխատանք են գտել Հայաստանում: Ավելի շատ կին վերադարձած միգրանտներ են ապահովվել աշխատանքով իրենց վերադարձից հետո (52%), քան տղամարդիկ (40%): Կանանց զբաղվածության բարձր մակարդակը կարող է պայմանավորված լինել նրանց ավելի բարձր կրթական մակարդակով, ինչը հակասում է Հայատանում զբաղվածության ընդհանուր միտումներին, որտեղ տղամարդիկ ունեն զբաղվածության ավելի բարձր մակարդակ: Կին վերադարձած միգրանտներն ունեն ավելի շատ մասնագիտական մակարդակի աշխատանքներ, քան տղամարդիկ՝ համապատասխանաբար 27% և 12%: Բարձրագույն կրթություն ունեցող կին և տղամարդ վերադարձած միգրանտների մեծ տոկոսն աշխատում է որպես վարձու աշխատողներ, մինչդեռ ցածր կրթություն ունեցող վերադարձած միգրանտներն ավելի հաճախ հենց իրենք են համարվում գործատու (տես աղյուսակ 7-ը Հավելված 1-ում):

Սոցիալական կապերը նորից էական դեր են կատարում վերադարձից հետո աշխատանք ապահովելու հարցում, քանի որ վերադարձած միգրանտների 63%-ը նշել է, որ վերադարձից հետո ընկերը կամ ազգականն իրենց աշխատանք է առաջարկել (տես աղյուսակ 51):

Աղյուսակ 51. Ինչպե՞ս եք աշխատանք գտել վերադարձից հետո

	Բացարձակ թիվ	%
Ընկերներիս/ազգականներիս առաջարկությամբ	345	63
Վերադարձել եմ այն աշխատանքին, որ մինչ մեկնելս էի անում	76	14
Իմ անձնական բիզնեսն եմ հիմնել	57	10
Աշխատանքային հայտարարություններով	40	7
Գործատուներին ինքնակենսագրական (CV) ուղարկելով	21	4
Ինտերնետի և այլ տեղեկատվական աղբյուրների միջոցով	6	1
Աշխատանքի տեղավորման գործակալությունների միջոցով	6	1
Ընդամենը	551	100

Աշխատողների 32%-ը նշում է, որ արտերկրում ունեցած փորձն իրենց օգնել է վերադարձից հետո Հայաստանում աշխատանքային ավելի լավ հնարավորություններ գտնել: Վերադարձած միգրանտների 46%-ն, ովքեր վերադարձից հետո Հայաստանում աշխատում կամ աշխատել են, նշում է, որ արտերկրում ձեռք բերած փորձն օգտագործում են իրենց առօրյա աշխատանքում: Վերադարձած միգրանտները նշել են, որ արտերկրում ձեռք բերած ամբողջ փորձառությունից ամենաշատը օգտագործել են միջնակարգ

մասնագիտական/տեխնիկական հմտությունները (61%) և լեզվական հմտությունները (16%):

Բոլոր հարցերը հաշվի առնելով, շատ քիչ միգրանտներ են նշում, որ արտագաղթելուց հետո իրենց տնտեսական վիճակն ավելի է վատացել (7%), մինչդեռ 49%-ը նշում է, որ իրենց վիճակը նույնն է մնացել, իսկ 42%-ը նշում է, որ վիճակն ավելի կամ շատ ավելի է լավացել (տես աղյուսակ 26):

Գծապատկեր 26. Արտերկիր մեկնելուց առաջվա համեմատ ինչպե՞ս է փոխվել Ձեր տնտեսական վիճակը (n=1395, %)



Վերադարձածների միայն 33%-ն է աշխատել հետազոտությանը նախորդող 7 օրերի ընթացքում: Աշխատողների շուրջ 57%-ն ունեցել է աշխատանք սոցապ հատկացումներով, իսկ 50%-ը գրավոր պայմանագրով է աշխատել:

Վերադարձած տղամարդ միգրանտների 59%-ը և կին միգրանտների 56%-ը նշում են, որ իրենց աշխատանքը համապատասխանում է իրենց կրթությանը: Սակայն եթե բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց միայն 45%-ն է նշում, որ իրենց աշխատանքը համապատասխանում է իրենց կրթությանը, ապա նույնը կարող ենք ասել բարձրագույն կրթություն ունեցող կանանց 59%-ի պարագայում (տես նաև աղյուսակ 8-ը Հավելված 1-ում):

Բացի այդ, 24% կին և 17% տղամարդ վերադարձած միգրանտները նշում են, որ իրենց գիտելիքները և հնարավորությունները շատ ավելի բարձր են, քան պահանջում է իրենց կատարած աշխատանքը: Հատկապես ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները հայտնում են, որ հակասություններ կան իրենց գիտելիքների և աշխատանքի պահանջների մեջ. 45% տղամարդ և 29% կին վերադարձած միգրանտները հայտնում են, որ իրենց գիտելիքները գերազանցում են աշխատանքում պահանջված գիտելիքները (տես նաև աղյուսակ 8-ը Հավելված 1-ում):

Չաշխատողների 64%-ը նշել է, որ իրենց ներկայիս վիճակի հիմնական պատճառն աշխատանք գտնելու անկարողությունն է: Նրանք, ովքեր ունեցել են կամ

ներկայումս ունեն աշխատանք, շաբաթական միջինը աշխատում են 54 ժամ և վաստակում կամ վաստակել են 291 եվրո:

Վերադարձածների շուրջ 60%-ը նշում է, որ Հայաստանում ունի լավ կամ շատ լավ կարիերայի երկարաժամկետ հեռանկարներ: Ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողներն ավելի շատ հավատ ունեն իրենց կարիերայի հեռանկարների հանդեպ, քան ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները (տես աղյուսակ 52):

Աղյուսակ 52. Կարիերայի հեռանկարները Հայաստանում

		Շատ լավ	Լավ	Վատ	Դ/Պ	Ընդամենը
Ցածր	Բացարձակ թիվ	12	90	65	3	170
	% ըստ կրթական մակարդակի	7	53	38	2	100
Միջին	Բացարձակ թիվ	91	441	318	43	893
	% ըստ կրթական մակարդակի	10	49	36	5	100
Բարձր	Բացարձակ թիվ	67	158	86	6	317
	% ըստ կրթական մակարդակի	21	50	27	2	100
Ընդամենը	Բացարձակ թիվ	170	689	469	52	1380
	%	12	50	34	4	100

Վերադարձի արդյունքի ցուցիչ չափում է վերադարձի հաջողությունը՝ հիմնվելով այնպիսի փոփոխականների վրա, ինչպիսիք են՝ խնայողություններ վերադարձի ժամանակ, վերադարձից հետո աշխատանքի առկայություն, վերադարձից հետո կարիերայի առաջխաղացում, արտագաղթի փորձ, որն օգտակար է վերադարձի ժամանակ, վերադարձից հետո սոցիալական նպաստներ և սուբյեկտիվ բարեկեցություն: Ըստ այս ցուցիչի, միգրանտների մեծամասնությունը (72%) պատկանում է հաջողակ վերադարձածների կատեգորիային, իսկ 23%-ը՝ ոչ հաջողակ, ոչ էլ անհաջողակ (տես գծապատկեր 27-ը):

Գծապատկեր 27. Վերադարձի արդյունքի ցուցիչ (n=1006, %)



Սեռային խմբերն առանձին դիտարկելիս, բարձրագույն կրթություն ունեցող և տղամարդիկ, և կանայք, ավելի հավանական է, որ պատկանում են շատ հաջողակ և/կամ հաջողակ վերադարձի կատեգորիային (տես գծապատկեր 28-ը):

Գծապատկեր 28. Վերադարձի արդյունքի ցուցիչ (ըստ կրթության և սեռի, %)



4.4. Ապագա մտադրությունները

Վերադարձածների 68%-ը մտադիր է նորից արտերկիր տեղափոխվել, ընդ որում նորից միգրացիայի մասին մտածողների ավելի քան 70%-ն ամենայն հավանականությամբ կարտագաղթեն հետազոտությունից հետո 6 ամիսների ընթացքում: Ավելին, միգրացիայի մասին լրջորեն մտածողների միայն 3%-ն է, որ հետազոտությունից հետո հավանաբար կսպասեն 2 տարուց ավելի՝ նորից արտագաղթելու համար:

Երիտասարդ տարիքային խմբի վերադարձածներն ավելի հետաքրքրված են նորից արտագաղթելով, քան մեծերը, ընդ որում 18-24 տարիքային խմբի վերադարձածների 75%-ը մտածում է կրկին արտագաղթելու մասին, միչդեռ 36 և

ավելի տարիքային խմբում միայն 65%-ն է մտածում նորից արտագաղթելու մասին: Տղամարդ վերադարձածներն ավելի հետաքրքրված են միգրացիայով, քան կանայք (70%՝ 59%-ի դիմաց):

Նրանց 77%-ն, ովքեր Հայաստան վերադառնալուց հետո չեն աշխատել, մտադիր է նորից արտագաղթել: Սակայն նրանց տոկոսն, ովքեր աշխատել են, նույնպես բարձր է՝ 54%: Ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողներն ավելի հետաքրքրված են միգրացիայով, քան ավելի բարձր կրթություն ունեցողները (տես գծապատկեր 29):

Գծապատկեր 29. Ներկայումս լրջորեն մտածո՞ւմ եք աշխատելու և բնակվելու նպատակով արտերկիր մեկնելու մասին (ըստ կրթամակարդակի, n=1385, %)



Հայաստանից հեռանալու ամենակարևոր պատճառները նորից տնտեսական են. 68%-ը նշում է Հայաստանում աշխատանք գտնելու անկարողությունը, դրան հաջորդում է սոցիալական ապահովությունը՝ ներառյալ առողջապահությունը (9%) և Հայաստանում կարիերայի անբավարար հեռանկարները (8%): 82%-ը նշում է, որ շատ ավելի հավանական է, որ արտագաղթեն Ռուսաստան, 4%-ը կգնա ԱՄՆ, 4%-ը՝ Ֆրանսիա, 2%-ը՝ Գերմանիա և 1%-ը՝ Ուկրաինա: Արտագաղթելու մտադրություն ունեցող վերադարձածների 46%-ը նշում է, որ իրենք ունեն արտերկիր տեղափոխվելու համար անհրաժեշտ միջոցները:

Վերադարձածների շուրջ կեսն, ովքեր մտածում են նորից արտագաղթելու մասին, ակնկալում են աշխատել շինարարության ոլորտում, որոնց հաջորդում են նրանք, ովքեր ակնկալում են աշխատել առևտրի (11%), արդյունաբերության (9%) և տրանսպորտի (9%) ոլորտներում:

4.5. Վերադարձած միգրանտների տնտեսական կենսապայմանները

Վերադարձած միգրանտի տնային տնտեսությունը բաղկացած է միջինում 5 անդամից: Վերադարձածների 11%-ն ունի Հայաստանից դուրս բնակվող ընտանիքի անդամ(ներ), բայց շատ քչերն են ապրում ԵՄ կամ եվրոպական այլ երկրներում: Նրանք գերազանցապես գտնվում են եվրասիական երկրներում:

Տնային տնտեսությունների շուրջ 48%-ն ապրում է առանձնատանը, իսկ 50%-ը՝ բնակարանում: Մեծամասնությունը իրենց առանձնատան կամ բնակարանի սեփականատերն է, և միայն 7%-ն է բնակարան վարձակալում:

Վերադարձած միգրանտների տնային տնտեսությունների 14%-ը կախում ունի ամենամսյա դրամական փախանցումներից (տես աղյուսակ 53-ը): 12 ամսվա ընթացքում ստացված միջին գումարը կազմում է 718 եվրո:

Աղյուսակ 53. Վերջին 12 ամիսների ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք դրամ ստացել արտերկրում գտնվող որևէ անձից

	Բացարձակ թիվ	%
Ամիսը մեկ անգամ	191	14
Ամիսը 1 անգամից քիչ, բայց ավելին քան մեկ անգամ	195	14
Միայն մեկ անգամ	54	4
Վերջին 12 ամիսներին ոչ մի անգամ	939	68
Ընդամենը	1379	100

Ինչպես երևում է, վերադարձած միգրանտների միայն 17%-ն ունի ֆինանսական բավարար ռեսուրսներ՝ հիմնական կարիքները հոգալու համար, իսկ 45%-ը նշում է, որ իրենք բավականաչափ ռեսուրսներ չունեն այդ կարիքները հոգալու համար (տես գծապատկեր 30-ը):

Գծապատկեր 30. Ձեր տ/տ ֆինանսական միջոցները ընդհանուր առմամբ բավարա՞ր են հիմնական կարիքները հոգալու համար (n=1385, %)



Միաժամանակ, տնային տնտեսությունների մեծամասնությունն այն կարծիքին է, որ իրենք տնտեսապես նույն մակարդակին են կամ ավելի լավ են ապրում, քան իրենց հարևանները, իսկ 16%-ը կարծում է, որ իրենք ավելի լավ են ապրում, և միայն 13%-ն է կարծում, որ իրենք ավելի վատ են ապրում, քան՝ իրենց հարևանները (տես գծապատկեր 31-ը):

Գծապատկեր 31. Այս թաղամասի տ/տ-ի համեմատ ինչպիսի՞ն է Ձեր տ/տ տնտեսական վիճակը (n=1387,%)



Ըստ սոցիալական պայմանների ցուցիչի[25], որը հաշվի է առնում այնպիսի փոփոխականներ, ինչպիսին է տնային տնտեսությունում ապրող մարդկանց թիվը, ինչպես նաև երկարատև օգտագործման ապրանքները, վերադարձած միգրանտների 50%-ն ապրում է միջին սոցիալական պայմաններում, 36%-ն ապրում է լավ սոցիալական պայմաններում, իսկ 14%-ն ապրում է սոցիալական վատ պայմաններում: Սոցիալական վատ պայմաններում ապրում են ավելի շատ վերադարձած տղամարդ միգրանտներ, քան՝ կին միգրանտներ (տես գծապատկեր 32-ը):

Գծապատկեր 32. Վերադարձած միգրանտների սոցիալական պայմաններ (ըստ սեռի, %)



[25] Սոցիալական պայմանների ցուցիչը հաշվարկվել է ըստ ԵԿՀ ուղեցույցի:

1) Նախ հաշվարկվում է տնային տնտեսությունում ապրող մարդկանց թվաքանակն՝ ըստ ունեցած սենյակների թվի. եթե հավասար է կամ ցածր 1-ից, գրանցվում է 1 միավոր, եթե մեկից ավելի է, բայց միաժամանակ՝ հավասար կամ ավելի ցածր է երկուսից, ապա տրվում է 0.5 միավոր, և եթե եկուսից բարձր է՝ միավորը կազմում է 0):

2) Հետևյալ պարագաների հասանելիությունը կամ դրանց առկայությունը. խողովակաշարով խմելու ջուր. տաք ջուր, ներսում առկա քաշովի ջրով մաքրվող զուգարան, ժամանակակից ջեռուցման համակարգ, գունավոր հեռուստացույց, լվացքի մեքենա, համակարգիչ, համացանցի կապ, ավտոմեքենա: Այս փոփոխականների մեծությունները վերակոդավորվել են. 1.Այո (կա նման ապրանք), 2.Ոչ (նման ապրանք չկա): Այնուհետև հաշվարկվել է այս փոփոխականների կշռված գումարը, որից հետո հաշվարկվել է ստացված ցուցիչը՝ հիմնվելով S/S անդամների թվի, սենյակների քանակի և նշված ապրանքների առկայության փոփոխականների վրա:

Տնտեսական պայմանների ցուցիչը, կազմված է այնպիսի փոփոխականներից, ինչպիսիք են տան սեփականատիրությունը, տնային տնտեսության եկամուտը, հողի սեփականատիրությունը և արտերկրից դրամական փոխանցումները: Ըստ այդ ցուցիչի, վերադարձած միգրանտների 61%-ն ապրում է վատ կամ որոշ չափով վատ պայմաններում (տես գծապատկեր 33): Տնտեսական ցուցիչը վերադարձած միգրանտների պարագայում շատ նման է 18-50 տարեկան բնակչության տվյալներին, որտեղ բնակչության 63%-ն ապրում է վատ կամ որոշ չափով վատ պայմաններում:

Գծապատկեր 33. Վերադարձած միգրանտների տնտեսական պայմանների ցուցիչ (n=1112, %)



Գլուխ 5. Հետազոտության արդյունքների գնահատում և քաղաքականության շուրջ առաջարկությունների մշակում

Պոտենցիալ միգրանտներ

Ներկա հետազոտությունը համահունչ է Հայաստանում միգրացիայի մասին տարբեր հետազոտությունների արդյունքներին, որը ցույց է տալիս, որ վերջին տասնամյակում արտաքին միգրացիայի գերակա տեսակը սեզոնային միգրացիան է: Եթե բնակչության 36%-ը մտածում է միգրացիայի մասին, ապա միգրացիայով հետաքրքրվածների միայն մոտ մեկ քառորդն է, որ մտածում է Հայաստանից մշտապես հեռանալու մասին: Հետևաբար, հաշվի առնելով միգրացիայի սեզոնային բնույթը, զարմանալի չէ, որ արտագաղթելու մասին որոշումը գլխավորապես պայմանավորված է հայրենիքում աշխատանքով ապահովված լինելու անկարողությամբ: Ավելի երիտասարդ (18-35 տարեկան), ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող, մայրաքաղաքից դուրս ապրող ամուրի տղամարդիկ ավելի լրջորեն են հակված մտածելու միգրացիայի մասին: Եվ, ընդհակառակը, ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող գյուղաբնակ կանայք ավելի քիչ են հետաքրքրված արտագաղթելու հարցում, քան՝ մայրաքաղաքում կամ այլ քաղաքներում բնակվող կանայք:

Գործազրկությունը բարձր է թե՛ միգրացիայի մասին լրջորեն մտածողների, և թե՛ այդ մասին չմտածողների շրջանում: Սակայն աշխատանք ունեցող պոտենցիալ միգրանտների ներկայիս աշխատանքի տեսակը կարծես թե ազդում է արտագաղթելու իրենց շահագրգռվածության վրա, ընդ որում կենցաղսպասարկման (88%) և շինարարության (60%) ոլորտներում զբաղվածներն ավելի հակված են մտածելու միգրացիայի մասին: Այս տվյալները վերադարձած միգրանտների վերաբերյալ հետազոտության արդյունքների հետ համեմատելիս պարզվում է, որ շինարարական աշխատանքը զբաղվածության ամենատարածված տեսակն է արտերկրում (52%), որին հետևում են առևտուրը և արդյունաբերությունը: Կարելի է ենթադրել, որ այս ոլորտները կարող են գրավիչ լինել ավելի մեծ թվով հեռանկարային միգրանտների համար՝ ոչ միայն այդ ոլորտներում առկա աշխատուժի պահանջարկի պատճառով, այլև՝ կայուն սոցիալական կապերի պատճառով, որոնք, ըստ պոտենցիալ և վերադարձած միգրանտների՝ տեղեկատվության և արտերկրում աշխատանք գտնելու հարցում աջակցության առավել տարածված աղբյուրներից են:

Ռուսաստանը գտնվում է պոտենցիալ միգրացիայի հավանական երկրների ցանկի գագաթին: Այս արդյունքը ոչ միայն համապատասխանում է այլ ուսումնասիրությունների արդյունքներին, այլև համատեղելի է վերադարձած

միգրանտների հետազոտության տվյալների հետ: Ռուսաստանի՝ որպես միգրացիոն ուղղության, ժողովրդականությունը կարելի է բացատրել երկիր մուտք գործելու հեշտությամբ, տեղի լեզվին տիրապետելով, ինչպես նաև Ռուսաստանում արդեն գոյություն ունեցող սոցիալական կապերով: Ամուսնացած պոտենցիալ տղամարդ միգրանտներն ավելի հակված են իրենց կողակիցներին Հայաստանում թողնելու: Այս արդյունքը նույնպես համատեղելի է վերադարձած միգրանտների հետազոտության հետ. ամուսնացած տղամարդ միգրանտների մեծամասնությունը ճամփորդում են առանց իրենց կանանց:

Ըստ արտագաղթելու հակման ցուցչի, որը կազմված է յոթ տարբեր փոփոխականներից և չափում է միգրացիայի հավանականությունը, պոտենցիալ միգրանտների միայն 3%-ն է խիստ հակված արտագաղթելու, իսկ 33%-ը բավականին հակված է արտագաղթելու: Չնայած արտագաղթելու հակում և խիստ հակում ունեցողների մասնաբաժինը նույնն է, ինչ միգրացիայով հետաքրքրվածության մակարդակը (36%-ը լրջորեն մտածում են արտագաղթելու մասին), կախված կրթական մակարդակից՝ հետաքրքրվածության և հավանականության միջև տարբերություններ կան, մասնավորապես՝ տղամարդկանց շրջանում: Ավելի բարձր կրթություն ստացած տղամարդիկ առավել հավանական է որ արտագաղթելու, իսկ ավելի ցածր կրթություն ստացած տղամարդիկ հետաքրքրված են արտագաղթով: Այս տարբերությունն ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել, օրինակ, տեղափոխությունը ֆինանսավորելու կարողության մեջ եղած տարբերություններով: Պոտենցիալ միգրանտների միայն 24%-ն ունի արտերկիր տեղափոխվելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ: Սակայն պոտենցիալ միգրանտներից ոմանց համար տեղակայման երկրի պաշտոնական լեզվի չիմացությունը կամ միգրացիայից առաջ արտերկրում աշխատանքի բացակայությունը կարծես թե խոչընդոտ չի հանդիսանում: Պոտենցիալ միգրանտների 45%-ը նշել է, որ իրենք արտերկրում աշխատանք չունենալու պարագայում էլ կարտագաղթեին, պոտենցիալ միգրանտների մեկ հինգերորդը նշել է, որ իրենք ընդհանրապես չեն խոսում տեղակայման երկրի լեզվով:

Պոտենցիալ միգրանտների մեծամասնությունն ակնկալում է, որ դրամ կուղարկի տուն և կարծում է, որ վերադարձից հետո իրենք ավելի լավ կապրեն: Եթե պոտենցիալ միգրանտները հավատացած են, որ վերադարձից հետո իրենց ֆինանսական վիճակը կբարելավվի, ապա իրենց որակավորման բարձրացման հարցում նրանք պակաս համոզված են: Ընդհանուր առմամբ, միգրացիայից առաջ կամ արտերկրում եղած ժամանակ նոր հմտություններ զարգացնելը կամ սովորելը գերակա խնդիր չի համարվել պոտենցիալ միգրանտների գերակշիռ մեծամասնության համար:

Դիտարկելով պոտենցիալ միգրանտների և ոչ միգրանտների ընդհանուր սոցիալական և տնտեսական պայմանները, տեսնում ենք, որ ավելի վատ սոցիալական պայմաններում ապրողներն ավելի հետաքրքրված են միգրացիայով: Իրենց տնտեսական պայմանները հարևանների համեմատ ավելի վատ գնահատող պոտենցիալ միգրանտների մասնաբաժինն ավելի մեծ է, քան՝ ոչ միգրանտների:

Վերադարձած միգրանտներ

Վերադարձած միգրանտների կազմը անհամամասնական է՝ տղամարդկանց օգտին: Վերադարձած միգրանտները գերազանցապես արտագաղթել են Ռուսաստան, ընդ որում նրանց մեծ մասն աշխատել է շինարարությունում, արդյունաբերությունում և առևտրի բնագավառում: Այնտեղ մնալու միջին տևողությունը եղել է մեկ տարի և ավելի երկար, ընդ որում վերադարձած միգրանտ հարցվածների ավելի քան կեսը մնացել են միայն մեկ տեղակայման երկրում:

Այս և այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ միգրացիայի վերաբերյալ պատշաճ քաղաքականության բացակայությունը ազդում է միգրացիոն փորձի վրա՝ նախքան մեկնումը, արտերկրում մնալու ժամանակամիջոցում և վերադարձից հետո: Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ միգրացիան առհասարակ կազմակերպվում է անհատական մակարդակում՝ անձնական կապերի հիման վրա: Շատ դեպքերում կրթությունը չի համապատասխանում աշխատանքի մակարդակին կամ տեսակին: Ընդհանուր առմամբ, վերադարձած միգրանտների մոտավորապես կեսը նշել է, որ արտերկրում իրենք որակավորում չպահանջող աշխատանք են արել, իսկ բոլոր հարցվածների 28%-ը նշել է, որ իրենք կատարել են իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք: Որակազրկվելու ռիսկն աճում է կրթական մակարդակի հետ: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների կեսից ավելին (55%) նշել է, որ իրենք կատարել են իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք: Իրենց կրթական մակարդակից ցածր աշխատանք կատարել են ավելի շատ վերադարձած կին միգրանտներ, քան՝ վերադարձած տղամարդ միգրանտներ:

Միգրացիայի ոլորտում կառավարության ծրագրերի և աջակցության սխեմաների բացակայությունը, ինչպես նաև արտագաղթելուց առաջ վերապատրաստման հանդեպ ցածր հետաքրքրությունը նույնպես խանգարում են նոր հմտությունների զարգացմանը: Վերադարձած միգրանտների մեծամասնությունը ձեռքի աշխատանք է կատարել: Նրանց միայն կեսն (45%) է նշում, որ ձեռք է բերել հմտություններ, ընդ որում դրանք հիմնականում լեզվական և միջին մասնագիտական կրթության բնագավառի հմտություններ են: Նրանց միայն 7%-ն է ստացել նշված հմտությունները վավերացնող վկայական: Ուստի, ոչ միայն անհատ միգրանտի տեսակետից, այլ նաև ընդունող երկրի տեսակետից,

միգրանտների հմտություններն ու կրթությունը շարունակում են մնալ թերօգտագործված:

Վերադարձած միգրանտների հետազոտությունը բացահայտեց, որ միգրանտների շատ փոքր մասն է աշխատել պաշտոնական պայմանագրերով կամ սոցապ հատկացումներով: Սա աշխատողի իրավունքների խախտում է, որը սույն քննարկման առարկան չէ: Ավելին, վերադարձած միգրանտների միայն 3%-ն է նշել, որ արտերկրում իրենց աշխատանքից իրենք թոշակ կամ սոցիալական նպաստներ են ստացել: Որևիցե նպաստ չստացողների ավելի քան կեսը որևէ սխեմայի վճարումներ չի կատարել:

Ոչ պատշաճ քաղաքականությունը նաև խանգարում է միգրանտների Հայաստան վերադարձին և երկրում հաջողությամբ ինտեգրվելուն: Վերադարձած միգրանտների միայն 42%-ն է աշխատանք գտել վերադառնալուց հետո, իսկ 68%-ը լրջորեն մտածում է նորից արտագաղթելու մասին: Նորից արտագաղթելու ամենահավանական թեկնածուներն են ավելի երիտասարդ գործազուրկ վերադարձած տղամարդ միգրանտները:

Տնտեսական տեսանկյունից, տարբեր հետազոտություններ, ներառյալ այս մեկը, ցույց են տալիս, որ թեև դրամական փոխանցումները Հայաստանում կարճաժամկետ առումով մեղմացնում են աղքատությունը, բայց դրանք բավարար չափով չեն օգտագործվում երկարաժամկետ առումով Հայաստանի տնտեսությունը զարգացնելու համար: Վերադարձած միգրանտների 76%-ը դրամ է ուղարկել տուն, միջին հաշվով՝ իրենց ամսական եկամտի մեկ երրորդը: Սակայն դեպքերի 94%-ում փոխանցումներն օգտագործվել են ընտանիքի և հարազատների ապրուստի ծախսերը հոգալու համար: Վերադարձած միգրանտների միայն 0.2%-ն է նշել, որ իրենք դրամական փոխանցումներն օգտագործել են գործարար նպատակներով: Նույն կերպ, չնայած այն հանգամանքին, որ հարցվածների 67%-ը վերադարձել է խնայողություններով, 82%-ն այդ խնայողություններն օգտագործել է ապրուստի ծախսերը հոգալու համար, և միայն 7%-ն է իր խնայողություններն օգտագործել իրենց երեխաների կամ այլոց կրթության համար, իսկ հազիվ 1%-ն է խնայողություններն օգտագործել է բիզնես գործունեության համար:

Առաջարկներ քաղաքականություն մշակողներին

Միգրացիայի և զարգացման վերաբերյալ վերջին հետազոտությունները առանձնահատուկ ուշադրություն են դարձնում շրջափուլային միգրացիայի՝ որպես մշտականի համեմատ առավել շահավետ ձևի, վրա: ՄՄԿ-ն շրջափուլային միգրացիան սահմանում է որպես «սահուն շարժում, որը կարող է օգտակար լինել բոլոր մասնակիցների համար, եթե առաջանում է կամավոր կերպով և կապվում ծագման երկրի աշխատուժի կարիքների հետ» (2008): Ըստ ՄԱԿ-ի Միջազգային

միգրացիայի և զարգացման միջազգային սիմպոզիումի զեկույցի, բազմաթիվ երկրների համար շրջափուլային միգրացիան իրենց ծերացող աշխատուժի և հմտությունների որոշակի տեսակների համար լուծում գտնելու մեխանիզմ է:

Հաշվի առնելով Հայաստանում սեզոնային միգրացիայի՝ արդեն գոյություն ունեցող ժողովրդականությունը, ապագա քաղաքականությունը պետք է կենտրոնանա ժամանակավոր միգրացիայի ավելի լավ կառավարման և համակարգման վրա: Այդ քաղաքականությունն առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի միգրանտների հմտությունների և աշխատուժի պահանջարկի ավելի լավ համապատասխանեցմանը, քանի որ հետազոտության հիմնական արդյունքներից մեկը ընդունող երկրներում միգրանտների հմտությունների և կրթության թերօգտագործումն է:

Ռուսաստանը պոտենցիալ միգրացիայի տեղակայման երկրների ցանկը գլխավորում է մասամբ նաև այնտեղ եղած սոցիալական կապերի շնորհիվ: Հաշվի առնելով հմտությունների թերօգտագործումը, ինչպես նաև տեղակայման երկրների կամ աշխատանքի տեսակների բազմազանության բացակայությունը, իրենց՝ միգրանտների համար, ինչպես նաև ուղարկող երկրի համար պոտենցիալ օգուտները կարծես թե դառնում են սահմանային: Այս բացը լրացնելու համար Հայաստանի կառավարությունը պետք է լոբբինգ անի և մասնակցի ԵՄ երկրների հետ ժամանակավոր միգրացիայի սխեմաներին՝ վերջիններիս հետ մշակելով փոխշահավետ միգրացիոն սխեմաներ:

Բացի այդ, ՀՀ կառավարության պատկան ծառայությունները պետք է աշխատեն միգրանտներին տրամադրել ավելի էական տեղեկատվություն՝ ընդունող երկրների հետ սերտ գործակցությամբ: Միգրանտների համար դյուրամատչելի պետք է լինի աշխատանքի հնարավորությունների, օրինական միգրացիայի և օրինական զբաղվածության համար անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև ընդունող երկրներում նրանց իրավունքների մասին տեղեկատվությունը: Պետք է ջանքեր գործադրել միգրանտների համար արդեն մատուցվող ծառայություններն ավելի լայնորեն լուսաբանելու ուղղությամբ, որպեսզի այդ ծառայություններից կարողանան օգտվել նրանք, ում համար դրանք օգտակար են:

Միգրանտների հմտությունների թերօգտագործումը պայմանավորող երկրորդ գործոնը ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի՝ երբեմն ոչ համարժեք արձագանքն է շուկայի պահանջներին: Ավելի լայն առումով, բարձրագույն կրթության ծրագրերի վերանայումը, ինչպես նաև միջին մասնագիտական կրթության զարգացումը ընդհանուր զարգացման ներուժ ունի Հայաստանում: Ավելի նեղ՝ շրջափուլային միգրացիայի տեսակետից, ընդունող երկրում եղած կարիքների հիման վրա

Հայաստանում միգրանտների վերապատրաստումը կարող է օգտակար լինել բոլոր երեք կողմերի համար: Սեզոնային միգրացիայի կառավարման միջազգային լավագույն գործելակերպերի թեմայով համապարփակ հետազոտությունը կարող է լուսաբանել և բացահայտել Հայաստանի համար կիրառելի դասեր:

Վերադարձող միգրանտների հմտություններն ու ռեսուրսները թերօգտագործվում են ոչ միայն ընդունող երկրներում, այլ նաև Հայաստան վերադառնալուց հետո: Միգրանտների ուղարկած դրամական փոխանցումներով և խնայողություններով կատարվող ներդրումների (կրթական և գործարար նպատակներով) ցածր գործակիցը, ինչպես նաև Հայաստանում համարժեք աշխատանք գտնելու աղոտ հեռանկարները տագնապահարույց են: Միջնաժամկետ և երկարաժամկետ առումով պահանջվում է համապատասխան քայլեր ձեռնարկել այս պակասը մեղմելու համար, որը թույլ կտա Հայաստանին իր սեփական օգուտը քաղել միգրացիայից: ԵՄ-Հայաստան Շարժունության շուրջ գործընկերությունը կարող է այս առումով դառնալ կարևոր հարթակ, մասնավորապես՝ Շարժունության գործընկերության այլ երկրների, ինչպես օրինակ՝ Մոլդովայի Հանրապետության հետ փորձի փոխանակմանը նպաստելու և Հայաստանի համար համապատասխան քաղաքականություն մշակելու հարցում աջակցություն առաջարկելու միջոցով:

Հայաստանի կառավարությունը մշակել է 2012-2016թթ.-ի միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման գործողությունների մանրամասն պլան, որն անդրադառնում է սույն զեկույցում ներկայացված որոշ հարցերի: Գործողությունների պլանն անդրադառնում է քաղաքականության հայեցակարգում որպես գերակայություններ նշված 14 հիմնական հարցերի: Քաղաքականության վերաբերյալ այս հարցերն ունեն մեծ ընդգրկում՝ սկսած իրավական և վարչական համակարգում բարեփոխումները ԵՄ օրենսդրությանը և ԵՄ լավագույն հաստատակարգային կառույցներին համապատասխանեցնելուց, սահմանների կառավարման բարելավումից, միգրացիոն հոսքերի մասին տվյալների հավաքագրումից, ապօրինի միգրացիայի կանխումից մինչև արտերկրում Հայաստանի քաղաքացիների և Հայաստանում օտարերկրյա միգրանտների իրավունքների պաշտպանությունն ու միգրանտների վերադարձին աջակցելը: Այս գործողությունների իրականացումը նախատեսում է տարբեր նախարարությունների և գերատեսչությունների, ներառյալ՝ ոստիկանության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արտաքին գործերի նախարարության, Սփյուռքի նախարարության, Տարածքային կառավարման նախարարությանն առընթեր Պետական միգրացիոն ծառայության, Կրթության և գիտության նախարարության, Առողջապահության նախարարության և Արդարադատության նախարարության մասնակցությունը:

Գործողությունների պլանի իրականացման ժամանակ հաջողության բանալին պետք է լինի թափանցիկությունը: Պետությունը պետք է նաև խրախուսի տեղի շահույթ չհետապնդող կազմակերպությունների, ինչպես նաև զարգացման միջազգային կազմակերպությունների ներգրավումը բոլոր գործընթացներում:

Գրականության ցանկ

Ազգագրական հետազոտությունների հայկական կենտրոն: Արտագաղթը Հայաստանից: “Ազատաշեն”, Երևան, 2003:

Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ենթատարածաշրջանային գրասենյակ: Միգրացիա և զարգացում. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն: 2009: (ISBN: 978-92-2-822912-7 Cd-ROM, հայերեն, անգլերեն):

Աշխատանքի միջազգային կազմակերպություն: Միգրանտների կողմից Հայաստան ուղարկվող դրամական փոխանցումները. խնայողությունների և ներդրումների հնարավորությունը և դրամական փոխանցումներ գրավելուն ուղղված ֆինանսական գործիքները: Երևան, 2009

ԱՎԾ, Հայաստանի՝ 2001 թ.-ի մարդահամարի տվյալներ, Երևան 2003

ԱՎԾ, Հայաստանի Ժողովրդագրական տեղեկագիրք 2009, Երևան 2009

ԱՎԾ, Հայաստանի Ժողովրդագրական տեղեկագիրք 2010, Երևան 2010

ԱՎԾ, ՀՀ տնտեսական և ֆինանասական ցուցանիշներ, Երևան- http://docs.armstat.am/nsdp/

ԱՎԾ, Հայաստասնի վիճակագրական տարեգիրք, 2011- http://armstat.am/file/doc/99466628.pdf

ԵԱՀԿ, «Առաջադեմ տեխնոլոգիաներ» ՀԿ, Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2002-2005թթ.: Տնային տնտեսությունների սոցիոլոգիական հարցում: Երևան, «Անտարես», 2005, 72 էջ (հայերեն, անգլերեն):

ԵԱՀԿ, «Առաջադեմ տեխնոլոգիաներ»ՀԿ, Աշխատանքային էմիգրացիան Հայաստանից 2005-2007թթ.: Հետազոտություն: «Ասողիկ», Երևան, 2007, 82 էջ (հայերեն, անգլերեն):

ԵԱՀԿ, «Առաջադեմ տեխնոլոգիաներ» ՀԿ, 2002-2008թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն: «Ասողիկ», Երևան, 2008, 78 էջ

Կարապետյան Ս.Ա., Հովսեփյան Ռ.Լ., «Հայկական ԽՍՀ սոցիալ-ժողովրդարական զարգացումների տարածաշրջանային բնույթը», Երևան, «Հայաստան», 1986

Հայաստանի հանրապետությունում միգրացիայի կառավարման ոլորտի ուսումնասիրություն: Գնահատման առաքելության զեկույց: Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն, Շվեդական միգրացիոն խորհուրդ, Երևան 2008թ.-ի մարտ:

Հարությունյան Լ. (ղեկավար): Միգրացիայի ինստիտուտանալիզացման հիմնախնդիրներն անվտանգության ենթատեքստում: ԵՊՀ Սոցիոլոգիայի ամբիոն, Երևան 2002

Հարությունյան Լ. Հայաստանի աշխատանքային միգրացիայի որոշ հիմնախնդիրների մասին: Երևան, 2003թ, Кавказ-Россия: Миграция легальная и нелегальная, редактор А. Искандарян, Кавказский институт СМИ, Ереван, 2004г.

ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (հաստատված է 29 նոյեմբերի 2000 թվականի N 54 նիստում), Երևան 2000թ.

ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը (հաստատված է 2004թ. հունիսի 25-ի #24 Արձանագրային որոշման 34-րդ կետով), Երևան 2004թ:

ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (հաստատված է 30 դեկտեմբերի 2010 թվականի N 51 նիստում), Երևան 2010թ.

ՀՀ Վիճակագրության ծառայություն, Հայաստանի Հանրապետության 1991-1998թթ. արտաքին միգրացիայի գործընթացի ուսումնասիրություն:, TACIS, Եվրոստատ, «Լուսաբաց - 04», Երևան, 1999թ., 55 էջ (հայերեն, անգլերեն):

ՀՀ Վիճակագրության ծառայություն, ՀՀ սահմանային ուղևորահոսքերի ուսումնասիրություն: TACIS, Եվրոստատ, «Լուսաբաց - 04», Երևան, 1999թ., 31 էջ (հայերեն, անգլերեն):

ՀՀ ԱՎԾ, Զեկույց. Հայաստանի հանրապետության հսկիչ անցագրային կետերի ուղևորաշրջանառության (միգրացիայի) ընտրանքային հետազոտության:, TASIS, IOM, Երևան, 2002, 106 էջ (հայերեն, անգլերեն):

ՀՀ քաղաքացիության մասին օրենք, ընդունվել է 1995թ.-ի նոյեմբերի 6-ին (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1731&lang=arm)

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենք, ընդունվել է 2007թ.-ի փետրվարի 26-ն (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2903&lang=arm)

ՀՀ օրենքը օտարերկրացիների մասին, Երևան, լրամշակվել է 2007թ.-ի հունվարին, (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2861)

ՀՀ օրենքը փախստականների և ապաստանի մասին, Երևան, ընդունվել է 2008թ.-ի նոյեմբերի 28-ին (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3422)

ՀՀ օրենքը քաղաքական ապաստանի մասին, Երևան, 26 սեպտեմբերի 2001թ. (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1282&lang=arm&enc=utf8)

The Republic of Armenia law on state border, Yerevan, adopted on 20 November 2001 (http://www.legislationline.org/documents/action/popup/id/6596)

Гомцян Л.М. "Законамерности миграции населения в Армянской ССR (статистико-экономический анализ)", Автореферат диссертации кандидата экономических наук, Москва, 1978, 23с.

Еганян Р., Шахназарян Н. Трудовая миграция из Армении. (Литературный обзор). Организация по безопасности и сотрудничеству в Европе, Международная организация по миграции, Ереван – 2004, (на сайте Армянского офиса ОБСЕ).

Asian Development Bank, Dataset of survey conducted in 1500 households, "Transfers from Migrants" and "Transfers-financial sector" projects

Caucasus Research Resource Centres-Armenia, Migration needs assessment survey conducted in 300 households in Armenia, 2007

Central Bank of Armenia, Data from the Survey on Money Transfers Received From Abroad by the Households in Armenia in 2005 (2000 respondents)

Center for Population Dynamics (CePoD) of Arizona State University jointly with CRRC-Armenia, Household Survey (1200) conducted in May 2007 within Gegharqouniq Marz within the project "Labour Migration and Risks in Rural Armenia" (http://www.asu.edu/clas/ssfd/cepod/migration_armenia/index.html)

Delegation of the European Union to Armenia, 2012, http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2012/2012.27.02_en.htm

Demographic and Health Surveys (DHS), http://www.measuredhs.com/aboutsurveys/search/metadata.cfm?surv_id=262&ctry_id=81&SrvyTp=type.

ETF, Labour markets and employability trends and challenges in Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova and Ukraine, 2011

Eurasia Partnership Foundation, Community-based labour-migration data collection surveys implemented by the Migration and Return Resource Centres (see at: http://www.epfound.am/index.php?article_id=46&clang=0)

Hergnyan M., Makaryan A., "The Role of the Diaspora in Generating Foreign Direct Investments in Armenia" ,Yerevan, 2006

International Labour Organization, National Statistical Service, Labour force surveys, 2006, 2007, 2008

Mkhitaryan S., Migration Movement in Yerevan (Sociological Research), Yerevan, NoyanTapan, 1998, 60 pp

Poghosyan G. Armenian Returnees from Germany, Back in Homeland, Report, Yerevan, 1996

Poghosyan G.. Migration Processes in Armenia. Yerevan, 2003

Research Institute of the ASSR State Plan, Comprehensive Overview of External Migration of Armenia, State Committee of Labour and Employment of the Armenian Soviet Socialist Republic, Yerevan 1985, 67 pp

The Department for International Development in Armenia, Armenia Regional Development Project, Participatory Poverty Assessment in Tavush and Gegharkunik Marzes of Armenia, Yerevan, 2004, 166 pages (Armenian and English versions)

The Republic of Armenia law on the legal and socio-economic guarantees for the person who had been forcibly displaced from the Republic of Azerbaijan in 1988-1992 and have acquired the citizenship of the Republic of Armenia, Yerevan, adopted on 6 December 2000 (http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1958&lang=eng)

The Republic of Armenia law on the state registry of the population, Yerevan, adopted on 24 September 2002

Tovmasyan V.Sh. "Unemployment and Labour Export in the Republic of Armenia", "Economica", 1-3, 1997, pp 3-13.

*United Nations Development Programm*e, Migration and Human Development: Opportunities and Challenges. Armenia 2009, National Human Development Report 2009, Yerevan, 2010

UNESCO, Institute for Statistics, statistics in brief, 2010, http://stats.uis.unesco.org/unesco/TableViewer/document.aspx?ReportId=121&IF_Language=eng&BR_Country=340&BR_Region=40505

United Nations Population Fund, Independent research group of Prof. Karapetyan S., Shahnazaryan N., Yeganyan R. Migration of Armenia's Population in the Post-Soviet Period. Yerevan 1996, 31 pp

United Nations Population Fund, Report of a Sampling Survey of External and Internal Migration of the Republic of Armenia. Yerevan 2007, 100 pp

World Bank, National Statistical Service, Integrated household living surveys, 1996, 1998/99 and each year during 2001 to 2009; see, for example at http://www.armstat.am/en/?nid=81&id=1085

Yeganyan R, Davtyan L, “An Assessment of the External Migration Situation of Armenia”, Publications of International Seminar on Demography of Armenia between Two Centuries, Dilijan, 2000, UNFPA, Yerevan, 2001, pp. 30-37

Yeganyan R. “Methodology of Estimating Available Population of the Republic of Armenia in 1992-2000”, “Social-Economic Changes in RA During 10 of Independence (Collected Scientific Papers), Economic Research Institute of the RA Ministry of Finance and Economy, Yerevan, 2002, pp. 207-213

Yeganyan R. Demographic Realities and Perspectives of Armenia at the Threshold of the 21st Century. International Migration of Population: Russia and Contemporary World. Issue N5, Lomonosov MSU, Fac. Of Economics, Population Research Centre, Moscow, MAKS Press, 2000, pp. 79-92

Yeganyan R. Migration Development, Tendencies and Problems in Armenia, VEM Pan-Armenian Journal, #2 (30), 2010, pp. 11-25

Yeganyan R., Kuyumjyan K., Socio-Demographic Challenges of Post-Soviet Armenia, “Gind”, Yerevan 2004

Հավելված 1: Աղյուսակներ

Աղյուսակ 1 Տնտեսական ակտիվության և զբաղվածության ցուցանիշներ (ըստ տարիքի, սեռի և բնակավայրի, %)

	Ընդհանուր		Արական		Իգական		Քաղաք		Գյուղ	
	2009	2010	2009	2010	2009	2010	2009	2010	2009	2010
Տնտեսական ակտիվություն (% աշխատանքային ռեսուրսներից)										
Ընդհանուր	59.2	61.2	69.0	***72.3***	51.0	52.2	53.2	55.9	70.8	***71.1***
15-19	12.2	13.7	11.3	13.7	12.9	13.7	9.4	11.0	16.5	17.9
20-24	52.2	53.4	62.8	67.4	41.9	41.5	51.4	53.3	53.7	53.6
25-29	67.3	66.7	85.8	90.7	50.4	46.3	64.1	65.9	74.4	68.6
30-34	70.7	72.9	90.2	90.2	54.0	58.5	66.4	68.8	81.1	81.7
35-39	78.3	79.3	89.3	90.6	70.1	70.0	72.6	74.4	89.6	87.9
40-44	80.4	82.9	88.1	95.5	74.4	73.5	72.4	76.4	92.4	92.3
45-49	77.7	81.1	87.3	92.1	70.2	73.0	69.2	73.9	91.4	93.4
50-54	75.1	78.4	87.8	90.8	65.1	68.2	67.4	72.0	90.6	91.2
55-59	69.6	73.5	78.9	83.3	62.2	66.2	61.9	67.0	87.8	88.9
60-64	53.5	63.0	65.6	76.9	44.4	52.8	44.3	52.6	84.0	86.3
65-69	41.3	41.8	50.0	51.0	35.2	34.7	26.7	23.7	73.5	75.5
70-75	33.3	30.0	42.1	37.0	27.2	25.2	15.6	11.4	60.2	60.8
Գործազրկություն (% տնտեսապես ակտիվ բնակչությունից)										
Ընդհանուր	18.7	19.0	17.8	***17.0***	19.8	21.2	27.3	27.8	6.3	***6.1***
15-19	59.7	44.4	54.5	37.0	64.4	52.3	84.7	71.7	37.9	18.4
20-24	36.2	37.5	32.6	30.8	41.7	46.7	44.1	44.3	21.6	25.6
25-29	25.2	24.3	21.8	21.2	30.7	29.6	30.7	28.4	14.8	15.1
30-34	18.4	17.9	16.6	15.9	21.1	20.6	23.9	24.7	7.2	5.7
35-39	18.4	16.6	16.2	14.7	20.5	18.5	27.2	26.5	4.2	2.1
40-44	13.5	14.2	13.2	12.7	13.7	15.7	22.9	24.0	2.3	2.5
45-49	14.0	15.0	14.1	13.2	14.1	16.7	24.3	24.3	1.5	2.5
50-54	14.1	15.6	13.1	13.8	15.3	17.6	22.9	24.6	1.0	1.3
55-59	11.0	15.6	12.2	14.0	9.8	17.1	17.2	23.5	0.7	1.5
60-64	11.5	10.1	11.6	10.2	11.3	10.0	17.8	16.7	0.0	1.1
65-69	7.7	11.0	10.3	14.1	5.0	7.4	16.1	29.8	1.3	0.0
70-75	3.5	1.8	5.4	2.5	1.8	1.1	12.3	6.4	0.0	0.4

- Աղբյուր: «Աշխատաշուկայի ցուցանիշներն ըստ տնային տնտեսությունների (7872) հետազոտության ». ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2011, էջեր 73 և 75 (http://armstat.am/file/doc/99466628.pdf).

Աղյուսակ 2 Կրթամակարդակն ըստ արտերկրում ունեցած առաջին աշխատանքի

		Մասնագի տական	Բարձր մակարդակի մենեջեր	Միջին մակարդակի մենեջեր	Որակավորված աշխատող	Որակավորում չունեցող աշխատող	Ընդամենը
Ցածր	Բացարձակ թիվ	5	1	6	57	100	***170***
	% ըստ կրթական մակարդակի	3	1	4	34	59	***100***
Միջին	Բացարձակ թիվ	60	17	53	330	421	***885***
	% ըստ կրթական մակարդակի	7	2	6	37	48	***100***
Բարձր	Բացարձակ թիվ	59	10	30	77	136	***315***
	% ըստ կրթական մակարդակի	19	3	10	24	43	***100***
Ընդհամենը	Բացարձակ թիվ	***124***	***28***	***89***	***464***	***657***	***1370***
	% ըստ կրթական մակարդակի	***9***	***2***	***6***	***34***	***48***	***100***

Աղյուսակ 3. Գործազրկության մակարդակն ըստ մարզերի 2010թ.-ին (տնտեսապես ակտիվ բնակչության մեջ, %)

	Ընդամենը	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր	Տավուշ
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ*	7	8.1	2.1	2.9	3.1	5.7	10.8	9.2	10.2	10.3	4.1	8.5
Գործազրկությունն ըստ SS հետազոտության**	19	29.9	8.1	6.6	10.4	8.9	19.7	19.2	22	12.2	13.7	10.9

* Հայաստանի վիճակագրական տեղեկատու, Աշխատաշուկայի ցուցիչներ, ԱՎԾ, էջ 79 (http://armstat.am/file/article/sv_12_11a_141.pdf)

** Աշխատաշուկան Հայաստանում, 2006-2010; Գործազրկությունը 2009-2010թթ, ԱՎԾ, էջ 196 (http://www.armstat.am/file/article/trud_11_13.pdf)

Աղյուսակ 4. Որքանո՞վ էին Ձեր հմտությունները և ունակությունները (ներառյալ՝ Ձեր փորձը, տաղանդը, մոտիվացիան և այլն) համապատասխան այդ աշխատանքին: Ձեր հմտությունները պահանջվածի համեմատ...

Սեռ				Շատ ավելին էին	Փոքր-ինչ ավելին էին	Մոտավորապես նույնն էին	Փոքր-ինչ պակաս էին	Շատ ավելի քիչ էին	*Ընդամենը*
Արական	Կրթական արդակ	Ցածր	Բացարձակ թիվ	16	20	116	8	2	*162*
			% ըստ կրթական մակարդակի	10	12	72	5	1	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	113	126	486	53	5	*783*
			% ըստ կրթական մակարդակի	14	16	62	7	1	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	88	39	98	14	4	*243*
			% ըստ կրթական մակարդակի	36	16	40	6	2	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*217*	*185*	*700*	*75*	*11*	*1188*
			% ըստ կրթական մակարդակի	*18*	*16*	*59*	*6*	*1*	*100*
Իգական	Կրթական արդակ	Ցածր	Բացարձակ թիվ	0	1	5	0	0	*6*
			% ըստ կրթական մակարդակի	0	17	83	0	0	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	25	15	57	6	1	*104*
			% ըստ կրթական մակարդակի	24	14	55	6	1	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	37	7	26	0	2	*72*
			% ըստ կրթական մակարդակի	51	10	36	0	3	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*62*	*23*	*88*	*6*	*3*	*182*
			% ըստ կրթական մակարդակի	*34*	*13*	*48*	*3*	*2*	*100*

Աղյուսակ 5. Ամսական եկամուտ (ըստ կրթմակարդակի և սեռի)

				0-71 եվրո	72-177 եվրո	178-290 եվրո	291-580 եվրո	581-857 եվրո	858 եվրո և ավելի	Ընդամենը
Արական	Կրթամակարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	9	15	18	6	3	3	54
			% ըստ կրթական մակարդակի	16.7	27.8	33.3	11.1	5.6	5.6	100.0
		Միջին	Բացարձակ թիվ	30	104	75	53	17	13	292
			% ըստ կրթական մակարդակի	10.3	35.6	25.7	18.2	5.8	4.5	100.0
		Բարձր	Բացարձակ թիվ	5	50	40	24	9	5	133
			% ըստ կրթական մակարդակի	3.8	37.6	30.1	18.0	6.8	3.8	100.0
	Ընդամենը		Բացարձակ թիվ	44	169	133	83	29	21	479
			% ըստ կրթական մակարդակի	9.2	35.3	27.8	17.3	6.1	4.4	100.0
Իգական	Կրթամակարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	0.0	0.0	1.0	0.0	0.0	0.0	1.0
			% ըստ կրթական մակարդակի	0.0	0.0	100.0	0.0	0.0	0.0	100.0
		Միջին	Բացարձակ թիվ	15	22	7	1	1	1	47
			% ըստ կրթական մակարդակի	31.9	46.8	14.9	2.1	2.1	2.1	100.0
		Բարձր	Բացարձակ թիվ	3	27	13	4	1	1	49
			% ըստ կրթական մակարդակի	6.1	55.1	26.5	8.2	2.0	2.0	100.0
	Total		Բացարձակ թիվ	18	49	21	5	2	2	97
			% ըստ կրթական մակարդակի	18.6	50.5	21.6	5.2	2.1	2.1	100.0

Աղյուսակ 6. Արտերկրից գումար ուղարկել է՞ք տուն (ըստ կրթմակարդակի և սեռի)

Սեռ				Այո	Ոչ	*Ընդամենը*
Արական	Կրթամա-կարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	138	27	*165*
			% ըստ կրթական մակարդակի	84	16	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	657	138	*795*
			% ըստ կրթական մակարդակի	83	17	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	170	74	*244*
			% ըստ կրթական մակարդակի	70	30	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*965*	*239*	*1204*
			% ըստ կրթական մակարդակի	*80*	*20*	*100*
Իգական	Կրթամա-կարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	2	4	*6*
			% ըստ կրթական մակարդակի	33	67	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	51	54	*105*
			% ըստ կրթական մակարդակի	49	51	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	30	43	*73*
			% ըստ կրթական մակարդակի	41	59	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*83*	*101*	*184*
			% ըստ կրթական մակարդակի	*45*	*55*	*100*

Աղյուսակ 7. Աշխատանքի տեսակը (ըստ կրթամակարդակի և սեռի)

				Աշխատանքի տեսակն այն մարդկանց, ովքեր աշխատել են արտերկրում բայց ներկայումս աշխատում են Հայաստանում						Ընդամենը
Սեռ				Գոր-ծատու	Ինքնազբաղված (առանց աշխատողների)	Վարձու աշխատանք	Ժամանակավոր աշխատանք	S/S աշխատող (առանց վարձ.)	Վարձատրվող աշխատանք ընտանիքի համար	
Արական	Կրթամակարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	1	20	30	21	2	0	*74*
			% ըստ կրթական մակարդակի	1	27	41	28	3	0	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	11	82	211	96	6	2	*408*
			% ըստ կրթական մակարդակի	3	20	52	24	1	0	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	9	21	127	20	5	1	*183*
			% ըստ կրթական մակարդակի	5	11	69	11	3	1	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*21*	*123*	*368*	*137*	*13*	*3*	*665*
			% ըստ կրթական մակարդակի	*3*	*18*	*55*	*21*	*2*	*0*	*100*
Իգական	Կրթամակարդակ	Ցածր	Բացարձակ թիվ	0	0	1	0	0	0	*1*
			% ըստ կրթական մակարդակի	0	0	100	0	0	0	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	4	11	35	7	1	0	*58*
			% ըստ կրթական մակարդակի	7	19	60	12	2	0	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	1	5	46	4	0	0	*56*
			% ըստ կրթական մակարդակի	2	9	82	7	0	0	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*5*	*16*	*82*	*11*	*1*	*0*	*115*
			% ըստ կրթական մակարդակի	*4*	*14*	*71*	*10*	*1*	*0*	*100*

Աղյուսակ 8. Արդյո՞ք Ձեր աշխատանքը համապատասխանում է Ձեր որակավորմանը (ըստ կրթամակարդակի և սեռի)

Սեռ				Այո, լիովին	Դահանջներն ավելի ցածր են/էին իմ կրթամակարդակից	Դահանջներն ավելի բարձր են/էին իմ կրթամակարդակից	Դահանջներն իմ կրթամակարդակի, բայց այլ ոլորտի են/ էին	*Ընդամենը*
Արա-կան	Կրթական մակար-դակ	Ցածր	Բացարձակ թիվ	58	7	2	5	*72*
			% ըստ կրթական մակարդակի	81	10	3	7	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	249	75	17	58	*399*
			% ըստ կրթական մակարդակի	62	19	4	15	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	82	82	6	14	*184*
			% ըստ կրթական մակարդակի	45	45	3	8	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*389*	*164*	*25*	*77*	*655*
			% ըստ կրթական մակարդակի	*59*	*25*	*4*	*12*	*100*
Իգա-կան	Կրթական մակար-դակ	Ցածր	Բացարձակ թիվ	1	0	0	0	*1*
			% ըստ կրթական մակարդակի	100	0	0	0	*100*
		Միջին	Բացարձակ թիվ	30	13	5	10	*58*
			% ըստ կրթական մակարդակի	52	22	9	17	*100*
		Բարձր	Բացարձակ թիվ	33	16	1	6	*56*
			% ըստ կրթական մակարդակի	59	29	2	11	*100*
	Ընդամենը		Բացարձակ թիվ	*64*	*29*	*6*	*16*	*115*
			% ըստ կրթական մակարդակի	*56*	*25*	*5*	*14*	*100*

Հավելված 2. Գծապատկեր

Գծապատկեր 1 Հայաստանի ազգային կրթամակարդակներն ըստ ISCED մակարդակների[26]



[26] Գծապատկերը տրամադրել է կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ Զառա Գրիգորյանը: